


1283

891.99

C - 60

err



830.f

891.99
C-60

19 NOV 2011
CB

ՀԱՏԻՐ

ՆՈՐԱՎԵԼՊԵՐ

(ՀԱԽԱՔԱԾՈՅՑ)


3263

ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹԻՒՆ «ԿՈՉՆԱԿ»-Ի



1919
ՆԻԿ ԵՕՐՔ

1283



ՅԱՌԱՋԱԲԱՆ

«ՆՈՐԱՎԵՊ» այն բառերէն է որ կը ծնի տհաս ըմբռնումներէ : «Նոր» բառը հոս ջանք մըն է թարդմանելու եւրոպայի մէջ ընթացիկ նովիլ բառը եւ ըընաւ չակնարկեր նիւթի կամ ձեւի : Արդարեւ նորավէպը՝ վէպին հնագոյն ձեւն է եւ մայրը վիպագըրութեան :

Նորավէպին էական եւ մնայուն յատկանիշը կաղմող բանը՝ կարճութիւնն է եւ այս պատճառով՝ շատ աւելի նպատակայարմար պիտի ըլլար ընդհանրացնել «Մանրավէպ» կամ «Պատմուածք» բառերը, որ արգէն գործածութեան մէջ մտած են : Նորավէպը պաշտօն ունի ընթերցողին՝ կէս կամ մէկ ժամուան հոգեկան հրճուանքը կամ յուզումը հայթայթելու՝ խօսելով անոր երեւակայութեան եւ զգացումներուն՝ ճիշդ ինչպէս թատերախաղ մը կամ շարժական պատկեր մը կը խօսի :

Հսենք թէ Նորավէպը՝ իրեւ գրական տեսակ մը՝ կապուած է վէպին հետ՝ որուն հակիրճ մէկ ձեւն է : Արդարեւ այս կապակցութիւնը շատ սերտ է եւ անմեկին : Երկուքն ալ կը կենան միեւնոյն գետնին վրայ, կ'անդրադարձնեն միեւնոյն իրողութիւնները, կ'անցնին միեւնոյն հոլովյժներէն եւ մշակոյթներէն եւ կը կրեն միեւնոյն աղդեցութիւնները : Երկուքն ալ կ'առնեն անձ մը կամ փոքրիկ խոսք մը իրեւ կեղրոն որուն բոլորտիքը կը ջանան հիւսելու տեղական եւ ընկերական միջավայր



մը որ զեղուն ըլլայ կեանքով եւ դոյնով եւ որ կռթնի
թելադրիչ հեռապատկերի մը վրայ:

Բայց Նորավէպին եւ վէպին մէջ կայ կարեւոր
տարբերութիւն մը:

Վէպը կ'առնէ իրեն ասպարէդ կեանքի բաւական
խոշոր հատուած մը, զոր կ'զետեղէ ընդարձակ և բազ
մաղան տեսարաններու վրայ եւ չի մոռնալով հերո-
սը՝ զոր չուկէտէ մը ճամբայ կը հանէ դէպի որոշ
հանդրուած մը՝ մեր առջեւ կը դնէ անհատապէս ու-
րուագծուած անձերու երկար տողանցում մը: Վէպի
մէջ լայնանիստ եւ տեւողական համադրութիւն մը
կայ: Անիկա խոչորկերկ աշխարհ մըն չ՝ որուն մէջ
հերոսը կարծես երբեմն կ'անյայտանայ:

Այսպէս չէ Նորավէպը: Իրեն վրայ դրուած
սահմանադրութեան չնորհիւ՝ այն կրնայ վերաբ-
տադրել միայն խորչիկ մը կեանքի եւ անոր հերոսը
խառն բազմութեան մը մէջ կորսուելու վտանգին չէ
ենթարկուած: Ընդհակառակը՝ Նորավէպի բաղդա-
տական առանձնութեան մէջ կարծես ան աւելի պայ-
ծառօրէն կը կանգնի ընթերցողին առջեւ եւ միահե-
ծան իշխանութիւն մը կը բանեցնէ անոր ուշադրու-
թեան վրայ: Այս պատճառաւ ալ հերոսին դործած
տպաւորութիւնը աւելի խորունկ է եւ անջնջիլ՝ ե-
թէ մինչեւ իսկ իր կեանքին միայն կարճ մէկ ժամա-
նակամիջոցը եւ կամ իր հոգեբանութեան փոքրիկ
մէկ անկիւնն է որ կը դուռի պաստառին վրայ: Ասոր
լաւագոյն մէկ օրինակն է՝ «Մեծ Ապառաժեայ Դէմ-
ք»ին մէջ իրնէսթը՝ նետուած հեռաւոր ձոր մը եւ
դէմ առ դէմ այդ խորհրդաւոր պատկերին հետ՝ որ
իր աղդեցութեամբ՝ պարզ եւ անուշ տղայ մը աստի-
ճանարար մարդարէի մը կը փոխարէ:

Ի՞նչ է Նորավէպին պաշտօնը: Անիկա կ'ընէ ա-
մէն ինչ որ վէպը կրնայ ընել: Անով կարելի է պատ-
կերացնել հասարակ իրականութեան կտոր մը կամ
արտասովոր բան մը, շերտ շերտ նկարագրել ցեղի
մը կամ ընկերութեան մը կենցաղը եւ հոգին, արձա-
նագրել դէպէ մը կամ շարժում մը, քարոզել գա-
ղափար մը, քանդակել ուշագրաւ դէմք մը, ճարպիկ
եւ անշմարելի վերլուծումներով՝ վերաբտադրել հո-
գեկան անսովոր յոյզեր, միստիկ միտումներ, ան-
դայտ եւ աղնիւ խորհելակերպեր:

Եւ այս բոլոր կարելլիութեանց համար է որ մենք
կ'ուղենք մղում մը տալ մէր մէջ՝ Նորավէպի մշա-
կութեան: Որովհետեւ դիտենք թէ անոր միջոցաւ
կարելի է կատարել դործ մը՝ զոր ոչ բեմախօսու-
թիւնը եւ ոչ ալ յօդուածագրութիւնը կրնան կատա-
րել նոյն քան արդիւնաւոր կերպով:

Նորավէպը մէր մէջ նոր բան մը չէ: Ուուսահա-
յերը դիտեն զայն եւ Թքահայոց 80ական թուական-
ներու գրականութեան մէջ Նորավէպն է տիրող տե-
սակը: Արփիար Արփիարեան, Գ. Զոհրապ, Ա- Ա-
հարոնեան, Ռ. Զարդարեան, Ս. Պարթեւ եւ դեռ
ուրիշ շատեր զայն հասուցած են արուեստագիտա-
կան անտիճանի մը՝ որուն համար ներելի՝ հպարտ
դէալ: Բայց ասոնց ամէնը վեր չեն քննադատութե-
նէ: Կան որոնք ընդգրկեցին «արուեստը արուես-
տին համար» կարգախօսուր՝ որ միշտ թափանցիկ քող
մը եղած է՝ արուեստը՝ կիրքերուն ի սպաս դնելու
դիտաւորութեան: Եւ անոնք որոնք՝ իրական ար-
ուեստագէտներ չեն եղած՝ յաճախ օգտուած են այս
կարգախօսէն՝ երեւակայութեան վրայ բնականօրէն
բռնացող տեսարաններու տակ ծածկելու իրենց հան-

ճարին դժուարութիւնը՝ ճիշդ այն արուեստագէտ-ներուն պէս որոնց գործերը կը ծախուին միմիայն մութ տեղեր՝ մասնաւոր յաճախորդներու։ Ար-ուեստը՝ իր ուեհ ձեւին տակ չի կրնար ինքնամփոփի եւ չէզոք հող մը դառնալ՝ աշխարհի մը մէջ՝ ուր միշտ դեռ նոր վերջացող պատերազմէն շատ աւելի կատաղի բարոյական կոիւ մը կը մղուի՝ պահպանե-լու համար, ցեղին տեսլապաշտութիւնը, հաւատքը, մաքրութիւնը, կորովը, յառաջդիմութիւնը՝ բոլոր տարրալուծող ազդեցութեանց դէմ։ Արուեստագէտն ալ՝ կամայ թէ ակամայ, գիտակցարար թէ անդի-տակցարար աս իրերամարտ բանակներուն միոյն կամ միւսին մէջ կը դանուի։ Մեծ հանճարները որոնք գրականութեան կամ արուեստի միւս ճիւղերուն մէջ անջնջելի հետքեր թողուցած են՝ երբէք ճանչցած չեն «արուեստը՝ արուեստին համար»ը իրբեւ սկըզ-բունք մը՝ այլ անոնք մշակած են իրենց երկնատուր ձիրքերը՝ մարդկութեան բարձրագոյն վայելքին եւ ճշմարիտ բարւոյն համար։

Այս ոգիով եւ այս յոյսով կը մատուցանենք Նո-րավելի մեր առաջին շարքը Ամերիկահայ ընթեր-ցողին։ Գիտենք որ արուեստին մէջ ազդութիւնը շատ անկարեւոր տեղ մը կը դրաւէ։ Բայց ինչպէս ցոյց կուտայ այս հատորիկը՝ բնաւ միտք չունինք հայ հանճարը թաղելու օտարներու դործերուն տակ։ Ըսթեցողին կը մնայ որոշել թէ պիտի շարունա-կե՞նք հիմա սկսուած ձեռնարկը։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԸ



ՄԵԾ ԱՊԱՌԱԺԵԱՅ ԴԷՄՔԸ

Հեղինակ՝ ՀՕԹՀԼՐՆ
Թարգմ. Մ. Յ. ԱՆԱՆԻԿԵԱՆ

Կէսօրէ մը վերջ՝ երբ արեւը դէսլի հո-
րիզոն կը խոնարհէր՝ մայր մը եւ իր դե-
սատի որդին՝ տանը դուռը նստած՝ Մեծ Ա-
պառաժեայ Դէմքին վրայ կը խօսակցէին։
Բաւական էր որ աչքերնին վերցնէին եւ ահա
Դէմքը հոն էր որոշապէս տեսանելի՝ թէպէտ
մղոններով հեռու՝ մինչ արեւը անոր բոլոր
գծերը կը լուսավառէր։

Եւ ի՞նչ էր այդ Մեծ Ապառաժեայ
Դէմքը։

Բարձրամբարձիկ լեռներու ընտանիքի
մը ծոցը թառած ձոր մը կար, այնքան լայ-
նածաւալ որ կը պարունակէր հաղարաւոր բը
նակիչներ։ Այս մարդոցմէ ոմանք կը բնա-
կէին կոճղէ շինուած խրճիթներու մէջ՝ բը-
լուրներու սեպ եւ դժուարամատոյց կուշաե-
րուն վրայ՝ պաշարուած խաւարչուտ անտա-

ոէն։ Ուրիշներ հաստատուեր էին հեշտաւէտ աղարակներու մէջ եւ յուռթի հողը կը մշակէին հեզահակ զառիթափներու կամ ձորին տափարակ մակերեսին վրայ։ Դարձեալ ուրիշներ՝ խմբաւորուած բազմամարդ գիւղեր կը կազմէին՝ ուր լեռնադաշտային խօլ վտակ մը՝ վերի սարերուն մէջ գտնուող իր ծննդավայրէն թաւալգլոր վայր գալով՝ բոնուած էր եւ սանձահարուած ու բամպակի գործարաններու մեքենային լծուած էր։ Մէկ խօսքով այս ձորին բնակիչները մեծաթիւ էին եւ բազմատեսակ կեանք կը վարէին։ Բայց բոլորն ալ՝ մեծ ու փոքր՝ կերպով մը ընտելացած էին Մեծ Ապառաժեայ Դէմքին հետ՝ թէպէտ ոմանք ձիրքը ունէին այս հոյակապ բնական երեւոյթը աւելի կատարելապէս զանազանելու՝ քան ուրիշներ։

Մեծ Ապառաժեայ Դէմքը՝ ուրեմն բընութեան մէկ գործն էր՝ կատարուած իր վեհափառ զուարճասիրութեան մէկ վայրկենին, լերան մը ուղղահայեաց կողին վրայ՝ կարդ մը վիթխարի ժայռերու միջոցաւ, ուրոնք այնպէս շարուած էին, որ պատշաճ հեռաւորութենէ մը նայելով՝ ճշգրտապէս կ'արտաքերէին մարդկային դիմադծերու նմանութիւն մը։ Անանկ կը թուէր թէ յաղթա-

մարմին հսկայ մը կամ Տիտան մը իր պատկերը քանդակեր էր գահավէժին վրայ։ Հոն էր ճակատին լայնարձակ կամարը՝ հարկւրոտք բարձրութեամբ. քիթը իր երկար վերնամասով, մեծզի շրթունքը՝ որոնք եթէ խօսելու կարող ըլլային՝ կրնային գոռացնել իրենց որոտընդուստ չեշտերը՝ ձորին մէկ ծայրէն միւսը։ Իրաւ է որ՝ եթէ դիտողը շատ մօտենար, անոր աչքէն կը վրիպէր հսկայ դէմքին ուրուազիծը՝ եւ անիկա կը տեսնէր միայն ծանրակշիռ եւ անհեթեթ պարեխներու կոյտ մը՝ քառսային աւերակի մը հանգոյն, մէկ մէկու վրայ դիզուած։ Բայց երբ նայողը իր քայլերուն վրայ ետ նահաջէր՝ այն հրաշազան գծերը նորէն ի յայտ կուդային եւ անոնցմէ որքան հեռանար՝ անոնք այնքան աւելի կը նմանէին մարդկային երեսի մը ուրուն ամբողջ սկզբնական աստուածութիւնը կը մնար անեղծ՝ մինչեւ որ, հեռաւորութեան մէջ ընդ աղօտ՝ ամպերով եւ լեռներուն լուսափառ գոլորշիներով պարփակուած։ Մեծ Ապառաժեայ Դէմքը կարծես դրապէս կը կենդանանար։

Բարեբաղդութիւն մըն էր մանկանց համար մեծնալ՝ իրենց աչքերուն առջեւ ունենալով Ապառաժեայ Դէմքը. քանզի բոլոր

գծերը վեհութեամբ օծուած էին եւ արտա-
յայտութիւնը, հոյակապ եւ աղու էր միան-
գամայն, որպէս թէ անիկա ցուլացումն ըլ-
լար ընդարձակ եւ ջերմ սրտի մը որ զուր-
գուրանաց մէջ կ'ընդգրկէր ամբողջ մարդկու-
թիւնը եւ դեռ աւելիին ալ տեղ ունէր։ Անոր
նայիլը ինքնին դաստիարակութիւն էր։ Շա-
տերը այնպէս կը հաւատային թէ ձորը իր
բեղմնաւորութեան կարեւոր մէկ մասը կը
պարտէր այս քաղցրահամբոյր երեւոյթին որ
շարունակ անոր վրայ կը ճառագայթէր՝ ամ-
պէրը լուսաւորելով եւ իր խանդաղատանքը
ծորելով արեւուն մէջ։

Ինչպէս ըսինք մեր պատմութեան սկիզ-
բը՝ մայր մը եւ իր փոքրիկ որդին խնձիթին
գուռը նստած՝ կը նայէին Մեծ Ապառաժ-
եայ Դէմքին եւ անոր վրայ կը խօսէին։

— Մայրիկ ըսաւ տղան, մինչ տիտանա-
կան դէմքը կը ժպտէր իրեն, Երանի՛ թէ
ան կրնար խօսիլ։ Որովհետեւ այնքան բա-
րութեամբ կը նայի որ իր ճայնը ի հարկէ
ախորժելի պիտի ըլլար։ Եթէ երբէք ասանկ
մարդ մը տեսնէի՝ զինքը սրտանց պիտի սի-
րէի։

— Եթէ հին մարդարէութիւն մը կա-
տարուի, պատասխանեց մայրը՝ որ մը չէ օր

մը կը տեսնենք ճիշդ այդպիսի դէմքով մարդ
մը։

— Ի՞նչ մարդարէութիւն ըսել կ'ուզես,
սիրելի մայրիկ, հարցուց իրնէսթ աշխու-
ժով, կը խնդրեմ պատմէ ինծի այդ մասին։

Մայրը պատմեց իրեն պատմութիւն մը
զոր իր մօրմէն լսեր էր՝ երբ ինք իրնէսթէ
աւելի փոքր էր. ոչ թէ անցեալ բաներու՝ այլ
ապագայ դէպէքերու պատմութիւն մը. եւ սա-
կայն այնքան վաղեմի պատմութիւն մը որ
այս ձորին մէջ նախապէս բնակող հնդիկներն
անդամ լսած էին զայն իրենց պապերէն, ո-
րոնք, իրենց նայելով՝ զանիկա լերան հե-
ղեղները մրմնջեր եւ ծառերուն գագաթնե-
րուն մէջէն՝ հովերը փսփսացեր էին։ Անոր
իմաստը այս էր թէ ապագային այդ կողմե-
րը տղայ մը պիտի ծնէր որ կոչուած էր իր
ժամանակին մեծագոյն եւ ազնուագոյն անձը
ըլլալու եւ որուն դէմքը՝ իր հասուն հասա-
կին մէջ ճշգրտապէս պիտի նմանէր Մեծ Ա-
պառաժեայ Դէմքին։ Քանի՛ քանի՛ հինգը-
լուխ մարդիկ եւ նմանապէս երիտասարդներ
ալ՝ յուսով ոգեւորուած՝ դեռ այս վաղեմի
մարդարէութեան մասին մնայուն հաւատոք
մը կը տածէին։ Բայց ուրիշներ՝ որ աւելի
փորձառութիւն ունէին աշխարհի մասին, որ

հսկելէն եւ սպասելէն ձանձրացեր էին, բայց
դեռ ասանկ դէմքով մէկը տեսած չէին եւ ոչ
իսկ իր դրացիէն աւելի մեծողի կամ ազնիւ
մէկը, վերջապէս սա եղրակացութեան եկեր
էին թէ ասիկա միայն սնոտի առասպէլ մըն
էր: Ամէն պարագայի մէջ՝ մարդարէու-
թեան մեծ մարդը դեռ չէր երեւցած:

— Ո՞հ մայրիկ, անուշ մայրիկ, դոչեց
էրնէսթ, ձեռքերը գլխին վերեւ իրարու զար
նելով, կը յուսամ թէ՝ չի մեռած՝ կը տես-
նեմ այդ մարդը:

Մայրը գորովոտ եւ խոհուն կին մըն էր
եւ զգաց թէ իմաստութիւն էր իր փոքրիկ
զաւկին ազնիւ յոյսերը չի ջլատել: Ուստի
անոր ըսաւ՝ «Թերեւս կը տեսնես զինք»:

Եւ էրնէսթ չի մոռցաւ մօրը ըրած պատ-
մութիւնը: Ամէն անդամ որ Մեծ Ապառաժ-
եայ Դէմքին կը նայէր՝ պատմութիւնը միշտ
միտքն էր: Մանկութիւնը անցուց կոճղէ
շինուած տան մէջ, ուր ծնած էր, պարտա-
ճանաչ էր մօրը հանդէպ եւ անոր օժանդա-
կը հանդիսանար շատ բաներու մէջ՝ օդնելով
անոր իր փոքրիկ ձեռքերով եւ աւելի յաճախ
իր գորովոտ սրտով: Այս կերպով՝ երջանիկ
բայց ստէպ մտածկոտ մանուկը մեծցաւ իր-
բեւ մեղմարարոյ, հանդարտիկ եւ քաշուող

տղեկ մը թէպէտ դաշտային աշխատութեանց
միջոցին՝ անոր դէմքը արեւէն թխացած էր՝
սակայն, աւելի իմացական կարողութեամբ
կը փայլէր քան շատ մանչերունը՝ որոնք
հոչակաւոր դպրոցներու մէջ կը կրթուէին:
Բայց էրնէսթ ուսուցիչ ունեցած չէր՝ ի բաց
առեալ Մեծ Ապառաժեայ Դէմքը որ իրեն
ուսուցիչ եղաւ: Երբ օրուան աշխատանքը
լմնար՝ ժամերով անոր կը նայէր մինչեւ որ
կը սկսէր երեւակայել թէ այդ խոշոր գիմա-
գլծերը կը ճանչնային զինքը եւ իր պատկա-
ռոտ նայուածքին ի պատասխան՝ իրեն կը
չնորհէին բարութեան եւ քաջալերանքի ժը-
պիտ մը: Մեր պարտականութիւնը չէ պըն-
դէլ թէ ասիկա պատրանք մըն էր՝ թէպէտ
կընայ ըլլալ որ Դէմքը բոլոր աշխարհին
նոյնքան բարութեամբ կը նայէր որքան էր-
նէսթի: Բայց գաղտնիքն այս էր որ տղե-
կին քնքոյշ եւ վստահող պարզութիւնը կը
ընդնշմարէր՝ ինչ որ ուրիշներ անկարող էին
տեսնելու եւ այսպէս սէրը որ ամենուն սահ-
մանուած էր՝ դարձաւ իր մասնաւոր բաժի-
նը:

Այս ատենները ամբողջ ձորին մէջ զրոյց
մը սկսաւ շրջիւ թէ դարեր առաջ գուշակ-
ուած մեծ մարդը որ Ապառաժեայ Դէմքին

պիտի նմանէր՝ վերջապէս յայտնուած էր:
Կ'երեւի թէ շատ տարիներ առաջ՝ երիտա-
սարդ մը ձորէն գաղթելով՝ հեռաւոր նաւա-
հանդիսա մը հաստատուած էր, ուր՝ քիչ մը
դրամ խնայելով՝ կրակակ մը բացեր էր: Իր
անունը — բայց ես չի կրցայ ստուգել թէ
այդ իր իրական անունն է՞ր թէ իր սովո-
րոյթներէն եւ յաջողութիւններէն ծագում
առած ծաղրանուն մը — Ոսկեհաւաք էր:
Խորամանկ եւ գործունեայ՝ եւ Նախախնա-
մութենէն օժտուած այն անքննին յատկու-
թեամբ որ զարդանալով՝ կը դառնայ աշխար-
հիս «բաղդ» կոչած բանը՝ վերջին ծայր հա-
րուստ վաճառական մը որ լայնայատակ նա-
մերու տորմիղի մը տիրացաւ: Երկրագըն-
տիս բոլոր գաւառները կարծես կը միաբա-
նէին լոկ՝ այս մարդուն ճոխութեան լեռնա-
կուտակ դէղերուն վրայ նորանոր դէղեր ա-
ռելցնելու համար: Հիւսիսի սառուցեալ դա-
ւառները՝ որոնք գրեթէ արջային շրջանա-
կին աղջամուղջին մէջ կ'իյնային՝ իրեն կը
զրկէին իրենց տուրքը՝ մուշտակներու ձե-
ռով. տօթակէզ Ափրիկէն իրեն համար կը
մաղէր իր գետերուն ոսկեխառն աւազները եւ
անտառներէն կը հաւաքէր իր խոշոր փիղե-
րուն ժանիքը. Արեւելքը անոր տրիտուր կը

բերէր իր ճոխ շալերը, համեմները, թէյե-
րը, աղամանդներու փառայեղ ցոլացումը եւ
խոշոր մարդարիտներու պսպղուն մաքրու-
թիւնը: Ովկիանոսը՝ ցամաքէն ետ չի մնա-
լու համար՝ իր ահագին կէտերը կը նուրիբէր՝
որպէս զի Տիար Ոսկեհաւաք՝ անոնց իւղը
ծախելով՝ շահ ընէր: Ակղբնական ալղան-
քը ինչ որ ալ ըլլար՝ անիկա ոսկի էր իր ա-
փերուն մէջ: Առասպելական Միտասի պէս՝
իրեն մասին ալ կարելի էր ըսել թէ՝ մատ-
ները ինչ բանի որ հպէին՝ այդ բանը կը փայ-
էր, կը դեղիննար եւ մէկէն ոսկիի, կամ,
ինչ որ իր գործին աւելի կուգար՝ հնչուն
դրամի շեղչերու կը փոխուէր: Եւ երբ Տիար
Ոսկեհաւաք այնքան հարստացաւ որ իր ըս-
տացուածքը հաշուել գոնէ հարիւր տարի
պիտի առնէր՝ վերյիշեց իր հայրենի ձորը եւ
որոշեց հոն դառնալ ու իր ծնած տեղը աւար-
տել մնացած օրերը: Այս նպատակով՝ հը-
մուտ ճարտարապետ մը զրկեց որ հոն իրեն
նման մեծահարուստ անձի մը բնակութեան
արժանի պալատ մը կանդնէ:


* * *

Ինչպէս վերը ըսի՝ արդէն ձորին մէջ
զրոյց մը կը չրջէր թէ՝ Տիար Ոսկեհաւաք՝
գուշակեալ անձնաւորութիւնն էր որ այնքան

երկար ատեն եւ ընդունայն ակնկալուած էր
եւ թէ իր երեսը Մեծ Ապառաժեայ Դէմքին
կատարեալ եւ անուրանալի նմանութիւնը կը
կրէր։ Մարդիկ աւելի յօժարութիւն ցոյց
կուտային հաւատալու թէ այս իրականու-
թիւն ըլլալու է՝ երբ տեսան շքեղ պալատը
որ բարձրացաւ կարծես դիւթական արուես-
տով՝ իր հօր հին ու մին եւ գունաթափ բնա-
կարանին տեղը։ Տանը արտաքին մասը մար-
մարակերտ էր եւ այնքան շլացուցիչ կերպով
ճերմակ որ գողցես ամբողջ ապարանքը կը բ-
նար հալիլ արեւուն լոյսին մէջ՝ նման այն
աւելի խեղճ չէնքերուն զորս Տիար Ոսկեհա-
ւաք՝ իր մանկական խաղի օրերուն՝ սովոր
էր կերտել ձիւնէ՝ երբ դեռ իր մատները ա-
մէն բան ոսկիի փոխարկող հպումով չէին
օրհնուած։ Նոր տունը փարթամօրէն զար-
դարուած դաւիթ մը ունէր որ վերասլացիկ
սիւներու վրայ կը յենուր եւ որուն ներքեւ՝
արծաթէ բեւեռներով պիճնուած եւ ան-
դըրծովեայ տեղէ մը տեսակ մը խա-
տուտիկ փայտէն շինուած բարձր դուռ
մը ունէր։ Լուսանցները՝ իւրաքանչիւր շը-
քեղ յարկի յատակամածէն մինչեւ առաս-
տաղը՝ կը բաղկանային ահաղին ապակինե-
րէ այնքան ջինջ եւ յստակ որ՝ կ'ըսուէր թէ

նոյն իսկ պարապ մթնոլորտէն ալ աւելի թա-
փանցիկ էին։ Գրեթէ ոչ մէկուն թոյլ տըր-
ուած էր այս պալատին ներքնակողմը տես-
նելու։ Բայց ճշմարտանման զրոյց մը կը
շրջէր թէ ներսը՝ դուրսէն շատ աւելի պեր-
ճաշուք էր, որովհետեւ ինչ որ ուրիշ տունե-
րու մէջ երկաթէ կամ արոյրէ շինուած էր՝
հոս արծաթ կամ ոսկի էր։ Եւ ի մասնաւորի
Տիար Ոսկեհաւաքի ննջարանը այնքան շող-
շողուն երեւոյթ մը ունէր որ հասարակ մար-
դիկ հոն իրենց աչքը չէին կրնար գոցել։
Բայց միւս կողմէն ալ Տիար Ոսկեհաւաք հի-
մա ճոխութեան այն աստիճան ընտելացած
էր որ թերեւս չէր կրնար գոցել իր աչքերը՝
ի բաց առեալ հոն ուր անոր ճառագայթները
կրնային վստահաբար մտնել կոպերուն ներ-
քեւ։ Պատշաճ ժամանակին տունը լմնցաւ.
անկէ վերջ կահավաճառները կարասիները
բերին. յետոյ հասաւ սեւ ու ճերմակ սպա-
սաւորներու գունդ մը՝ նախակարապետ Տի-
ար Ոսկեհաւաքի որուն վսեմաշուք անձին
ժամանումը կ'ակնկալուէր վերջալոյսին։
Նոյն ատեն մեր բարեկամը իրնէսթ խորա-
պէս յուզուած էր սա մտածումով թէ մեծ
մարդը, աղնիւ մարդը, մարդարէութեան
խոստացած մարդը՝ այնքան դարերու յա-

(3263) 1927-2002



պաղումէն յետոյ՝ ահա վերջապէս պիտի յայտնուէր իր հայրենի ձորին։ Թէպէտ տղեկ մը՝ անիկա գիտէր թէ հազար կերպերով Տիար Ռոկեհաւաք՝ իր ընդարձակ հարստութեան շնորհիւ կրնար բարերար հրեշտոկի մը փոխարկուիլ եւ մարդոց գործերուն վրայ՝ Մեծ Ապառաժեայ Դէմքին ժամփիտին չափ համատարած եւ մարդասէր հսկողութիւն մը ստանձնել։ Հաւատքով եւ յուսով զեղուն՝ էրնէսթ չէր տարակուսեր թէ ժողովուրդին ըսածը ճշմարիտ էր եւ թէ հիմա լեռնակողին վրայ գտնուած այն զարմանալի դիմագծերուն կենդանի նմանութիւնը պիտի տեսնէր։ Մինչ տղեկը կը նայէր ձորն ի վեր եւ ըստ սովորականին՝ կ'երեւակայէր թէ Մեծ Ապառաժեայ Դէմքը կը վերադարձնէր իր ակնարկը եւ բարեմտօրէն կը նայէր իրեն՝ օճապտոյտ ճամբուն վրայէն սրարշաւ մօտեցող անիւներու գորդիւնը լսուեցաւ։

«Ահա կուզա՞յ» կանչեցին խումբ մը մարդիկ որ անոր գալուստը դիտելու համար հաւաքուեր էին։ «Ահա՝ կուզայ մեծ Տիար Ռոկեհաւաքը»։

Քառաձի կառք մը խոյացաւ ճամբուն դարձուածքէն։ Անոր մէջ՝ մասամբ պատուհանէն դուրս ելած՝ կը տեսնուէր ծերու-

նիին դէմքը՝ այնքան դեղնած՝ որ կարծես իր Միտասային ճեռքերը երեսն ալ ոսկիի փոխեր էին։ Ունէր ցած ճակատ մը, անհամար խորշոմներով պաշարուած փոքրիկ սուր աչքեր եւ շատ բարակ շրթներ զորսուժուածէս իրարու սեղմելով՝ աւելի կը բարակցնէր։

«Ճիշդ Մեծ Ապառաժեայ Դէմքին պատկերն է» պոռաց ժողովուրդը։ «Անշուշտ հին մարդարէութիւնը ճշմարիտ է եւ ահա վերջապէս եկաւ մեծ մարդը»։

Եւ ինչ որ մեծապէս կը շուարեցնէր էրնէսթը այս էր որ անոնք կը թուէին իրօք հաւատալ թէ իրենց յիշած նմանութիւնը ներկայ էր։ Պատահմամբ ճամբուն եզերքը մուրացիկ պառաւ մը եւ երկու մուրացիկ տղաք կը գտնուէին, հեռաւոր տեղէ մը աստանդականներ՝ որոնք՝ երբ կառքը դէպ առաջ դըլուրեցաւ՝ ձեռք կարկառեցին եւ ճայներնին բարձրացնելով՝ խղճալի կերպով ողորմութիւն խնդրեցին։ Դեղին ճանկ մը՝ միեւնոյնը որ այնքան ոսկի ճանկելով մէկտեղ բերեր էր — կառքին պատուհանէն դուրս ցցուեցաւ եւ գետնին վրայ մէկ քանի պղինձէ դրամ թափիթփեց։ Այս դէպքէն դատելով՝ մեծ մարդը որ Ռոկեհաւաք կոչուած ըլ-

լալ կը թուի՝ նոյն քան պատշաճօրէն կրնար
ընդունիլ՝ «պղնձի ցրուիչ» ծաղրանունը:
Սակայն դեռ ժողովուրդը՝ յայտնապէս ան-
նուազ հաւատքով եւ լրջաբար կ'աղաղակէր՝
«Մեծ Ապառաժեայ Դէմքին իսկական նմա-
նութիւնն էր:

Բայց էրնէսթ՝ տխրութեամբ՝ այդ գը-
ծուծ դէմքին կնճռազարդ խորամանկութե-
նէն դառնալով՝ ձորն ի վեր նայեցաւ ուր՝
կուտակուող մէզին մէջ՝ դեռ կրնար զանա-
զանել արեւուն վերջին շողերէն ոսկեզօծ-
ուած փառաւոր դիմագծերը որոնք իրեն հոդ
ույն վրայ տաղաւորուած էին: Անոնց երե-
ւոյթը զինքը ոգեւորեց: Այդ հեղահամբոյր
շրթները ի՞նչ կը թուէին ըսել: «Պիտի
դա՛յ: Մի՛ վախնար, էրնէսթ, մարդը պիտի
դայ»:

Տարիներն անցան եւ էրնէսթի մանկու-
թեան շրջանը լրացաւ: Հիմա մեծնալով ե-
րիտասարդ եղած էր: Չորին միւս բնակիչ-
ներուն ուշադրութիւնը հազիւ թէ կը դրա-
ւէր, քանզի անոնք իր կենցաղին մէջ աչառու
ոչինչ կը տեսնէին ի բաց առեալ սա պարա-
գան թէ՝ երբ օրուան գործը աւարտէր՝ դեռ
կը սիրէր մէկ կողմ քաշուիլ եւ Մեծ Ապա-
ռաժեայ Դէմքին վրայ մտածել: Իրենց կար-

ծիքով՝ ասիկա խենդութիւն մըն էր՝ բայց
ներելի տեսակէն խենդութիւն մը՝ նկատե-
լով որ էրնէսթ փութաջան, բարի ու մար-
դասէր էր եւ իր ունակութեան սիրոյն հա-
մար ուեւէ պարտականութիւն զանց չէր ը-
ներ: Անոնք չէին դիտեր թէ Մեծ Ապառաժ-
եայ Դէմքը անոր ուսուցիչ եղեր էր եւ թէ
այդ դէմքին մէջ արտայայտուած զգացու-
մը պիտի ընդալայնէր երիտասարդին սիրու-
եւ զանիկա աւելի ընդարձակ եւ խորունկ ա-
ղապատանքով մը պիտի լեցնէր քան ուրիշ
սրտեր: Զէին դիտեր թէ աւելի լաւ իմաս-
տութիւն մը պիտի բղխէր անկէ, քան ինչ
որ կարելի էր սովորիլ գրքերէ եւ աւելի լաւ
կեանք մը՝ քան ինչ որ կարելի էր ձեւակեր-
պել ուրիշ մարդկային կեանքերու եղծուած
օրինակին վրայ: Ոչ ալ էրնէսթ ինք դիտէր
թէ՝ դաշտերուն մէջ, վառարանին քովիկը
եւ ուր որ ինքնիրեն հետ կը հաղորդակցէր՝
իրեն այնքան բնական կերպով եկող խոր-
հուրդները եւ խանդաղատանքը աւելի բարի
աստիճանի մը կը պատկանէին քան անոնք
որոնց՝ ամէն մարդ իրեն հետ մասնակից էր:
Պարզ հոգի մը պարզ այն օրուան պէս երբ
եր մայրը իրեն պատմեց հին մարդարէու-
թիւնը.— անիկա կը տեսնէր հրաշագեղ դի-

մազծերը որոնք ձորն իվար կ'ձառագայթէին
եւ դեռ կը զարմանար որ անոնց մարդկային
օրինակը այնքան կ'ուշանար երեւալու:

Այս ատենները արդէն Տիար Ոսկեհաւաք
մեռած եւ թաղուած էր. եւ խնդրոյն ամենէն
տարօրինակ կողմը սա էր թէ իր հարստու-
թիւնը որ իր զոյութեան մարմինն ու հոգին
էր՝ իր մահուանէ առաջ անհետացեր էր՝ իր-
մէն միմիայն պոստած եւ դեղին մորթով
ծածկուած կենդանի կմախք մը թողլով։ Իր
ոսկիին ձիւնի պէս հալելէն աստի այլ եւս ա-
մէն մարդ կ'ընդունէր թէ անկեալ վաճա-
ռականին գռեհիկ դիմադծերուն եւ լեռնա-
կողին վեհատեսիլ կերպարանքին միջեւ այդ-
քան ալ ուշադրաւ նմանութիւն մը չի կար,
այսպէս ժողովուրդը՝ անոր կենդանութեան
ատենէն դադրեցաւ զինք պատուելէ եւ մեռ-
նելէն վերջ՝ զանիկա խաղաղօրէն մոռացու-
թեան գիրկը յանձնեց։ Ճշմարիտ է թէ եր-
բեմն իր յիշատակը կ'արթննար իր շինած
շքեղ պալատին կապակցութեամբ, պալատ
մը որ շատոնց փոխուած էր պանդոկի՝ օտա-
րականներու ի՝ դործածութիւն, որոնցմէ ա-
մէն ամառ զունդագունդ կուգային այցելել
այդ համբաւաւոր բնական երեւոյթը, Մեծ
Ապառաժեայ Դէմքը։ Այսպէս Տիար Ոսկե-

հաւաք՝ վարկաբեկ եւ ստուերին մէջ ձըդ-
ուած ըլլալով՝ մարդարէութեան մարդը դեռ
պիտի դար։

* * *

Նաեւ պատահեցաւ որ ժամանակին՝ Զո-
րին բնիկ զաւակներէն մէկը զինուորագըր-
ուեր էր եւ շատ կատաղի կոխուներէ վերջ՝
մեծահոչակ հրամանատար մը եղեր էր։ Ա-
նիկա ինչ անունով ալ ճանչուի պատմու-
թեան մէջ՝ բանակատեղիներու եւ ուազմա-
դաշտերու մէջ անոր ծաղրանունն էր՝ «Ա-
րիւն-եւ-Ռոտում»։ Կոխէն մաշած այս ծե-
րունի զինուորը՝ հիմա տարիքէն եւ վէրքե-
րէն տկարացած եւ պարտասած զինուորա-
կան կեանքին վրդովումներէն, թմբուկնե-
րու դափիրտուքէն եւ շեփորներու սուր շոին-
դէն՝ որոնք այնքան երկար ատեն ականջնե-
րուն մէջ հնչեր էին՝ վերջերս նպատակ յայտ
նած էր բնիկ ձորը դառնալ՝ յուսալով թէ
հանգիստ պիտի գտնէր հոն, ուր անիկա կը
յիշէր թէ օր մը թողուց իր հանգիստը։ Բը-
նակիչները, իր նախկին դրացիները եւ ա-
նոնց մեծցած զաւակները որոշած էին թըն-
դանօթի բոմբիւնով եւ հրապարակային հաց
կերոյթով մը բարիգալուստ մաղթել անուա-
նի պատերազմիկին. եւ այս պիտի ընէին աս-

տիճան մը աւելի խանգավառութեամբ՝ ո-
րովհետեւ հիմա կը հաւաստէին թէ վերջա-
պէս Մեծ Ապառաժեայ Դէմքին նմանութիւ-
նը իրօք երեւցած էր: Ծերունի «Արիւն-եւ-
Ռոտում»ի մէկ համհարզը՝ ձորին մէջէն
ուղեւորած պահուն՝ այդ նմանութիւնը նը-
կատելով շատ զարմացեր էր: Ասկէ զատ՝
զօրապետին դպրոցակիցները եւ վաղեմի
ծանօթները պատրաստ էին երդումով վկա-
յելու թէ՝ որչափ որ կը յիշէին՝ յիշեալ զօ-
րապետը իր մանկութենէն իսկ այդ վեհա-
տեսիլ պատկերին խիստ նման եղած էր. մի-
այն թէ այդ ատեն այս բանը իրենց միտքը
եկած չէր: Ուստի ամբողջ ձորին մէջ՝ յու-
զումը մէծ էր եւ շատերը տարիներով Մեծ
Ապառաժեայ Դէմքին անգամ մը իսկ նայիլ
մտարերած չէին՝ հիմա իրենց ժամանակը
անոր նայելով կ'անցնէին որպէս զի գիտնա-
յին թէ զօրապետ Արիւն-եւ-Ռոտում ինչ
բանի կը նմանէր:

Այդ մէծ խրախճանաց օրը՝ էրնէսթ՝
ձորին միւս բնակիչներուն հետ՝ գործը ձգե-
լով՝ գեղջկային հացկերոյթին պատրաստը-
ւած տեղը գնաց: Մօտեցած պահուն՝ լըս-
ուեցաւ վերապատռելի Մարտափողի ձայ-
նը որ երկինքն օրհնութիւն կը հայցէր ի-

րենց առջեւ դրուած այս աղուոր բաներուն
եւ խաղաղութեան այս նշանաւոր բարեկա-
մին վրայ՝ որուն ի պատիւ գումարուած
էին: Սեղանները՝ անտառին մէկ կտրուած
մասին վրայ զետեղուած էին, պարսպուած
բոլորտիքի ծառերէն՝ ի բաց առեալ հոն ուր
նեղ բացուածք մը դէպ արեւելք երկարե-
լով՝ հեռուէն կը ցուցընէր Մեծ Ապառաժ-
եայ Դէմքը: Զօրապետին աթոռին վերեւ՝
որ Ուաշինկութընի տնէն մնացած հնութիւն
մըն էր՝ դալարագեղ ոստերէ հիւսուած եւ
դափնիներով առատաբար խառնուած կա-
մար մը կար. ասոնց վրայ տնկուած էր իր
երկրին դրօշը որուն ներքեւ իր յաղթանակ-
ները շահած էր: Մեր բարեկամը էրնէսթ
ոտքին ծայրերուն վրայ կանգնեցաւ՝ մեծա-
նուն հիւրը տեսնելու յուսով. բայց սեղան-
ներուն չուրջ ահազին բազմութիւն մը կար
որ անձկութեամբ կը ջանար լսել բաժակա-
ճառերը եւ ի պատասխանի՝ զօրապետին
շրթներէն ինկող ամէն մէկ բառ: Եւ կամա-
ւորներու խումբ մը որ պահակազօրքի պաշ-
տօն կը կատարէր՝ իր սուխններով անդթօ-
րէն կ'ասղնտէր բազմութեան մէջ ուեւէ հան-
դարտաբարոյ անձ: Այսպէս էրնէսթ՝ իր
քաշուող բնութեան պատճառաւ՝ ետ ետ մըդ-

ուեցաւ ուր ծերունի Արիւն-եւ-Որոտումի
դէմքը իրեն այնքան անտեսանելի եղաւ որ-
քան պիտի ըլլար՝ եթէ այդ դէմքը իր փող-
փողումով միասին գեռ մարտադաշտին վը-
րայ մնացած ըլլար։ Սփոփանքի համար
դարձաւ դէպի Մեծ Ապառաժեայ Դէմքը որ՝
հաւատարիմ եւ անմոռաց բարեկամի մը
պէս՝ իրեն նայեցաւ եւ ժպտեցաւ անտառին
երկար բացուածքին մէջէն։ Նոյն ատեն,
սակայն, անիկա կրնար լսել դիտողութիւն-
ները զանազան անհատներու որոնք օրուան
հերոսին դիմագերը կը բաղդատէին հեռա-
ւոր լեռնակողին վրայ գտնուող երեսին հետ։

«Ճիշտ միւնոյն դէմքն է» կանչեց մարդ
մը՝ ուրախութենէն ոստում մը ընելով։

«Զարմանալի կերպով կը նմանի։ Այդ
իրականութիւն է» պատասխանեց ուրիշ մը։

«Միայն կը նմանի, նոյն ինքն ծե-
րունի Արիւն-եւ-Որոտումն է՝ անդրադար-
ձուած խոշորացոյց հայելիի մը մէջէն» դո-
չեց երրորդ մը։ «Եւ ինչո՞ւ չէ։ Զօրապե-
տը առանց ոեւէ տարակոյսի՝ այս կամ ո-
եւէ ուրիշ դարու մեծագոյն մարդն է»։

Եւ ասոր վրայ՝ երեք խօսակիցները մի-
ասին մեծագորդ աղաղակ մը փրցուցին որ
բազմութիւնը ելելքտրականացնելով հազա-

րաւոր ձայներէ մեծ գոռում գոչում գուրս
բերաւ։ Ասիկա լեռներու մէջ մղոններով
արձագանգեց այնպէս որ կարծես թէ Մեծ
Ապառաժեայ Դէմքը իր որոտագին շունչը
թափած էր այդ աղաղակին մէջ։ Այս բո-
լոր դիտողութիւնները եւ համասփիւռ խան-
դավառութիւնը մեր բարեկամին հետաքըր-
քըրութիւնը աւելի արթնցուց։ Ոչ թէ ա-
նիկա ոեւէ տարակոյս ունէր թէ հիմա լնր-
ջապէս լերան դէմքը՝ իր մարդկային օրի-
նակը գտած էր։ Ճշմարիտ է թէ էրնէսթ ե-
րեւակայած էր որ դարերով ակնկալուած
անձը պիտի յայտնուէր իրբեւ խաղաղու-
թեան մարդ, որ իմաստնաբար կը խօսի,
բարիք կը գործէ եւ ժողովուրդը կ'երջան-
կացնէ։ Բայց իր սովորական լայնմտու-
թեամբ եւ իր ամբողջ պարզութեամբ խոր-
հեցաւ թէ Նախախնամութիւնը ինք պէտք է
իր ուղած կերպով օրհնէ մարդկութիւնը։
Էրնէսթ կարող էր ըմբռնել թէ այս մեծ նը-
պատակը կրնայ մինչեւ իսկ պատերազմիկի
մը ձեռքով եւ արիւնաներկ սուրի մը միջո-
ցաւ իրազործուիլ՝ եթէ Աստուծոյ անդննին
խմաստութիւնը յարմար տեսնէ իրերը այդ-
պէս կարդագրել։

«Զօրապե՛տը, զօրապե՛տը» կը դոչէին

հիմա: «Լոռութիւն, լոռութիւն: Արիւն-եւ-
Որոտում ճառ պիտի խօսի»:

Ճիշդ այդպէս: Քանզի սեղանը մաքրը-
ւած ըլլալով՝ զօրապետին կենաց՝ բաժակ
պարպուած էր աղաղակներու եւ ծափահա-
րութեանց մէջ՝ եւ հիմա նա ոտքի կանգնե-
ցաւ բազմականներուն իր չնորհակալիքը ար-
տայայտելու: Իրնէսթ տեսաւ դինքը: Ահա,
հոն էր նա. իր երկու ուսանոցներէն եւ ա-
սեղնագործուած օծիքէն սկսած՝ բազմու-
թեան ուսերէն վեր կը կենար՝ կանաչ ոստե-
րէ եւ դափնիներէ հիւսուած կամարին ներ-
քեւ՝ մինչ դրօշը առկախ՝ կարծես իր ճա-
կատը կը հովանաւորէր: Եւ հոն՝ միեւնոյն
ակնարկով տեսանելի՝ անտառին բացուած-
քին մէջէն կ'երեւար Մեծ Ապառաժեայ Դէմ-
քը: Եւ այդպիսի նմանութիւն մը կա՞ր արդ-
եօք, ինչպէս ամբոխը վկայած էր: Աւա՞ղ,
իրնէսթ չէր տեսներ զայն: Պատերազմներէ
մաշած փոթորիկներէ ծեծուած, կորովալիր
եւ երկաթէ կամք արտայայտող դէմք մը կը
տեսնէր՝ բայց հեղ իմաստութիւնը, խո-
րունկ, լայն եւ գորովոտ աղապատանքը ծե-
րունի Արիւն-եւ-Որոտումի երեսին վրայ կը
պակսէին: Եւ եթէ մինչեւ իսկ Մեծ Ապա-
ռաժեայ Դէմքը զօրապետին հրամայողա-

կան խիստ երեւոյթն ալ առնէր՝ դարձեալ ա-
ւելի մեղմ գծերը զանիկա պիտի բարեխառ-
նէին:

«Ասիկա մարդարէութեան մարդը չէ»
հառաչեց իրնէսթ՝ բազմութեան մէջէն
դուրս ելնելու համար ճամբայ բանալով:
«Եւ աշխարհը դեռ սպասելո՞ւ է»:

Մէգը հեռաւոր լեռնակողին շուրջը հա-
ւաքուած էր եւ հոն կը տեսնուէին Մեծ Ա-
պառաժեայ Դէմքին հոյակապ եւ ահազդե-
ցիկ գծերը, ահազդեցիկ բայց բարի, կար-
ծես թէ հզօր հրեշտակ մը՝ բլուրներուն մէջ
նստած՝ ոսկի եւ ծիրանի ամպերէ կերտը-
ւած ձորձ մը կը զգենուր: Երբ իրնէսթ կը
նայէր՝ հաւատալու դժկամակ աչքերուն ե-
րեւցաւ ժպիտ մը որ ամբողջ դէմքին վրայ
կը ճառագայթէր հետզհետէ աւելի աճեցող
շողջումով՝ թէպէտ շրթները չէին շար-
ժեր: Հաւանաբար արեւմտեան արեւուն
լոյսն էր որ՝ իրնէսթի եւ իր դիտած առար-
կային միջեւ գլորող ցան ու ցիր գոլորշի-
ներուն մէջ կը հալէր: Բայց՝ ինչպէս միշտ՝
հիմա ալ իր հրաշալի բարեկամին երեւոյթը
այնպէս շարժեց իրնէսթի յոյսը՝ որ գոգցես
այդ յոյսը երբէք ի գերեւ չէր ելած:

«Մի՛ վախնար, իրնէսթ» կ'ըսէր իր սիր-

տը որպէս թէ Մեծ Դէմքն էր որ իրեն կը փսփսար — «Մի՛ վախնար, էրնէսթ, պիտի գայ այն»:

* * *

Աւելի տարիներ անցան արագաբար եւ խաղղութեամբ: Էրնէսթ դեռ իր բնիկ ձորին մէջ կը մնար եւ հիմա հասուն մարդ եղած էր: Աստիճանաբար եւ աննշմարելի կերպով ժողովուրդը զինք ճանչցած էր: Հիմա ալ դեռ՝ առջուան պէս, իր օրապահիկին համար կը բանէր ու կը դատէր եւ միեւնոյն պարդ սրտով մարդն էր: Բայց այնչափ խորհեր եւ զգացեր էր իր կեանքին լաւագոյն ժամերէն՝ այնքան մարդկութեան սահմանուած մեծ բարիքի մը մասին անաշխարհիկ յոյսեր տածելու նուիրեր էր որ կարծես հրեշտակներու հետ խօսակցած էր եւ անզգալաբար անոնց խմաստութենէն մաս մը իւրացուցած էր: Ասիկա ակներեւ էր իր առօրեայ կեանքին հանդարտիկ եւ խոհեմ բարեգործութեան մէջ՝ որուն հեղասահ հոսանքը իր ամբողջ երկայնքին՝ լայն եւ դալարագեղ եղերք մը կազմած էր: Օր մը չէր անցներ որ աշխարհ՝ չի բարւոքուէր՝ որովհետեւ այս մարդը՝ իր խոնարհամտութեամբ՝ անոր մէջ ապրած էր: Իր անձնական շա-

կվէն դուրս բնաւ չէր ելներ՝ բայց իր ընկերոջ համար օրհնաբեր բան մը ունէր միշտ: Նաեւ գրեթէ ակամայ՝ քարոզիչ դարձեր էր: Իր խորհուրդին զուտ եւ վսեմ պարզութիւնը՝ որ ձեռքէն բղխող բարի գործերուն մէջ կը գտնէր իր մէկ արտայայտութիւնը՝ դուրս կը հոսէր նաեւ իբրեւ խօսք: Ճշմարտութիւններ կ'ելնէին բերնէն որոնք լսողներուն կեանքին վրայ կը ներգործէին եւ զանոնք կը ձեւակերպէին: Իր ունկնդիրներուն մտքէն անդամ չէր անցներ թէ էրնէսթ իւրենց դրացին եւ մօտիկ բարեկամը՝ կրնարհասարակ մարդէ աւելի բան մը ըլլալ. ասանկ բան մը էրնէսթի մտքէն շատ աւելի հեռու էր՝ բայց անխուսափելի կերպով՝ վըտակի մը մրմունջին նման՝ իրեն բերնէն խորհուրդներ կուգային դուրս, զորս ուրիշ մարդ կային շրթներ չէին արտասանած:

* * *

Երբ ժողովուրդին միտքը քիչ մը հանդարտելու ժամանակ ունեցաւ՝ այլ եւս պատրաստ էին՝ Զօրապետ Արիւն-եւ-Որոտումի վայրագ դիմագծերուն եւ լեռնակողին բարեհամբոյր երեսին միջեւ նմանութիւն մը երեւակայելով: Բայց հիմա դարձեալ զրոյցներ եւ թերթերուն մէջ ծանուցումներ կային

որոնք կը հաւաստէին թէ Մեծ Ապառաժեայ Դէմքին նմանութիւնը նշանաւոր պետական մարդու մը լայնանիստ ուսերուն վրայ երեւցեր էր: Այն ալ՝ Տիար Ոսկեհաւաքի եւ ծեցեր էր: Արիւն-եւ-Որոտումի պէս՝ ձորին ըունի նմանութիւնը մեկնելով՝ օբնիկներէն էր բայց կանուխէն մեկնելով՝ օբնութեան ըէնսգիտութեան եւ քաղաքականութեան հետամուտ եղած էր: Հարուստին գանձերուն եւ զինուորին սուրին տեղ՝ միմիայն լեզու մը ունէր բայց անիկա՝ աւելի զօրաւոր էր քան գանձը եւ սուրը: Այնքան հիանալի պերճախօսութիւն մը ունէր՝ որ ինչ որ ալ կամենար ըսել՝ իր ունկնդիրները ստիպուած էին հաւատալու, անիրաւութիւնը իրաւացի կը թուէր եւ իրաւունքը՝ անիրաւութիւն. կը թուէր առ զարդար առեն՝ իր չնչով կրնար լուսաւոր մշուշ մը ստեղծել եւ անով օրուան բընական լոյսը խաւարեցնել: Արդարեւ իր լեռական մողական գործիք մըն էր. երբեմն կը գուն մողական գործիք մըն էր. երբեմն ալ ամեղուար որոտումի նման եւ երբեմն ալ ամեղուար որոտումի նման էր նուուողէր: Անէն անուշ նուազի մը պէս կը ճուուողէր: Անիկա պատերազմի շեփորն էր եւ խաղաղութեան երգը, եւ կարծես այդ լեզուն սիրտ մը կը պարունակէր՝ երբ այդպիսի բան չկար: Ճշմարտապէս նա զարմանալի մարդ մըն էր: Եւ իր լեզուն իրեն համար ամէն երեւակայեւ

մի յաջողութիւն շահելէ, պետական սըրահներու եւ իշխաններու ու թագաւորներու արքունեաց մէջ լսուելէ, ամբողջ աշխարհի մէջ՝ մինչեւ իսկ իբրեւ ծովեզրէ ծովեզր կանչող ձայն մը՝ իր տիբոջ հռչակը սփոելէ ետք՝ — վերջապէս համոզեց անոր հայրենակիցները որ զինք նախագահ ընտրեն: Ասկէ առաջ — արդարեւ համբաւաւոր դառնալ սկսելուն պէս՝ — իր հիացողները իրեն եւ Մեծ Ապառաժեայ Դէմքին միջեւ նմանութիւնը նկատած էին: Եւ ասիկա իրենց ուշագրութիւնը այնչափ գրաւած էր որ ամբողջ երկրին մէջ այս նշանաւոր անձնաւորութիւնը ճանչցուեցաւ «Ծերուկ Քարէ Դէմք» անունով: Այնպէս կը կարծուէր թէ այս յորջորջումը իր քաղաքական ակնկալութեանց վերջին ծայր նպաստաւոր գոյն մը կուտար. քանզի ինչպէս ոչ ոք Հռոմի մէջ պապը կրնայ ըլլալ առանց անունը փոխելու՝ նոյնպէս ալ ոչ ոք կրնայ նախագահ ըլլալ՝ առանց տարբեր անուն մը առնելու:

Մինչ իր բարեկամները իրենց լաւագոյն ջանքերը կընէին զինք նախագահ ընելու՝ «Ծերուկ Քարէ Դէմք»ը իր բնիկ ձորը այցելու համբար ճամբար ելաւ: Անտարակոյս իր միակ նպաստակն էր իր ընկեր-քաղաքա-

ցիներուն հետ ձեռք թոթվել եւ չէր մտածեր
եւ ոչ ալ հոգ կ'ընէր այս աղդեցութեան մա-
սին զոր երկրին մէջէն իրեն ըրած այս ու-
ղեւորութիւնը՝ կրնար ունենալ ընտրու-
թեանց վրայ։ Մեծանուն պետական անձը
ընդունելու համար չքեղ պատրաստութիւն-
ներ եղան. ձիաւորներու գունդ մը մեկնեցաւ
զինքը նահանգին սահմանագլուխին վրայ
դիմաւորելու, եւ բոլոր ժողովուրդը՝ իր ըդ-
րազում ճակելով՝ անոր անցնիլը տեսնելու
համար ճամբուն եզերքը խոնուեցաւ։ Ասոնց
մէջ էր իրնէսթ։ Թէպէտ նա քանի մը ան-
գամ յուսախափ եղած էր՝ բնութիւն մը ու-
նէր որ միշտ պատրաստ էր հաւատալու ինչ
որ գեղեցիկ եւ բարի կը թուէր։ Իր սիրուը
շարունակ բաց կը պահէր եւ չէր կորսնցներ
վերէն զրկուած օրհնութիւնը՝ երբ որ ալ
դար։ Հիմա ալ՝ առջի պէս զուարթաբար՝
գնաց նորէն Մեծ Ապառաժեայ Դէմքին նը-
մանութիւնը տեսնելու։

Ձիաւորաց գունդը հասաւ սիդամեմ՝
ամբոխներու շոնդալից դոփիւնով եւ ահա-
գին փոշեղէն ամպով մը՝ որ այնքան հօծ եւ
այնքան բարձր՝ որ լեռնակողին դէմքը էր-
նէսթի աչքէն բոլորովին ծածկուեցաւ։ Մօ-
տակայ վայրերուն բոլոր մեծ անձնաւորու-

թիւնները ձիով եկած էին. զինուորական
սպաններ՝ համազգեստով, խորհրդարանի ան-
դամը, գաւառապետը, թերթերու խմբա-
գիրներ, եւ շատ աղարակապաններ իրենց
կիրակնօրեայ վերաբկուն հագած եւ իրենց
համբերատար ձիերուն վրայ հեծած։ Արդա-
րեւ խիստ շողզողուն տեսարան մըն էր՝ մա-
նաւանդ որ ձիաւորաց գնդին վերեւ՝ բազ-
մաթիւ դրօշակներ կը ծածանէին։ Ասոնց
ոմանց վրայ կային նշանաւոր պետական
մարդուն եւ Մեծ Ապառաժեայ Դէմքին շը-
քեղ պատկերները՝ որոնք երկու եղբայրնե-
րու պէս մտերմաբար իրարու կը ժպտէին։
Եթէ պատկերները արժանահաւատ բաներ է-
ին՝ պէտք է խոստովանիլ թէ փոխադարձ
նմանութիւնը հարաշալի էր։ Յիշելու ենք նաեւ
թէ նւագախումբ մալ կար որ երաժշուութեան
պոռոտածայն յաղթանակով՝ լեռներուն ար-
ձագանգը կ'արթնցնէր եւ կ'անդրադարձնէր.
այնպէս որ եթերային եւ հոգեցունց մեղե-
դիներ բոլոր տեղւոյն ելեւէջներուն մէջ կը
հնչէին որպէս թէ իր բնիկ ձորին ամէն մէկ
խորշը ձայն մը ստացած ըլլար ականաւոր
հիւրին բարիգալուստ մաղթելու համար։
Բայց մեծագոյն տպաւորութիւնը այն ատեն
յառաջ եկաւ՝ երբ հեռաւոր լերան գահավէ-

Ժը ետ դարձուց երաժշտութիւնը. որովհետեւ այն ատեն Մեծ Ապառաժեայ Դէմքը գողցես իր ձայնը կ'աւելցնէր յաղթական խմբերդին՝ հաստատելով թէ վերջապէս մարդարէութեան մարդը եկած էր:

Այս միջոցին ժողովուրդը իրենց գըլ-խարկները վեր կը նետէին եւ կ'աղաղակէին այնքան տարափոխիկ խանդավառութեամբ մը որ իրնէսթի սիրտն ալ բոցավառեցաւ եւ ինք ալ անոնց պէս զլսարկը վեր կը նետէր եւ ամենէն բարձրածայն աղաղակողներէն մէկն էր: «Կեցցէ՛ մեծ մարդը. կեցցէ՛ Քարէ Դէմքը»: Բայց դեռ զինքը չէր տեսած

«Ահա հոն է» կանչեցին անոնք որ իր-նէսթի մօտը կեցած էին: Հո՛ն, հո՛ն, ծերուկ Քարէ Դէմքին նայեցէ՛ք եւ վերջն ալ լերան ծերուկին եւ տեսէ՛ք թէ երկուրեակ-ներու պէս իրարու չե՞ն նմանիր»:

Այս գեղեցիկ թափօրին մէջ՝ եկաւ բաց կառք մը որուն չորս ճերմակ ծիեր լծուած էին, եւ կառքին մէջ՝ խոշոր եւ մերկ գլուխով նստած էր համբաւառոր պետական մարդը, ծերուկ Քարէ Դէմքը:

«Խոստովանէ», ըստ իրնէսթի դրացի-ներէն մին իրեն՝ «թէ Մեծ Ապառաժեայ Դէմքը վերջապէս դտաւ իր մրցակիցը»:

Պէտք է ըսել թէ՝ երբ իրնէսթ առաջին անդամ տեսաւ կառքին բարեւող եւ ժպտող դէմքը՝ խորհեցաւ թէ անոր եւ լեռնակողին ծանօթ դէմքին միջեւ կար նմանութիւն մը: Արդարեւ մարդուն ճակատը՝ իր զանգուածային խորութեամբ, եւ միւս դիմագծերը ձեռքի համարձակ շար-ժումով մը կերտուած էին՝ կարծես՝ դիւցազ նականէ աւելի, այո՛ տիտանական նմոյշին մը վրայ: Բայց վսեմութիւնը եւ վեհաշուք ե-րեւոյթը, աստուածային աղապատանքի այդ պերճ արտայայտութիւնը որ լերան դէմքը կը պայծառացնէր եւ անոր անհեթեթ որձաքարէ նիւթը եթերացնելով հոգիի կը փոխար-կէր՝ հոս բացակայ էր: Եւ ուստի՝ զար-մանալի պետական մարդը՝ աչքերուն խո-րունկ փոսերուն մէջ տաղտուկի նման թա-ևիծ մը ունէր միշտ. կը յիշեցնէր մանուկ մը որ իր խաղալիկներուն աստիճանէն ան-դին անցած է կամ խոշոր տաղանդով եւ փոքր նպատակներով մէկը՝ որուն կեանքը հակառակ իր մեծագործութիւններուն սնա-մէջ եւ տարտամ էր՝ որովհետեւ ոչ մէկ բարձր նպատակ զայն իրականութեամբ օժ-տած էր:

Եւ դեռ իրնէսթի դրացին իր արմուկը

անոր կողերուն մէջ խրելով պատասխան մը
կը պահանջէր:

«Խոստովանէ՛, խոստովանէ՛. միթէ լե-
րան ծերուկիդ ճիշդ պատկերը չէ՞:

«Ոչ», ըստ էրնէսթ՝ կտրուկ կերպով.
«Շատ քիչ կամ ոչ մէկ նմանութիւն կը տես-
նեմ»:

«Եթէ այդպէս է՝ կը ցաւիմ Մեծ Ապա-
ռաժեայ Դէմքին վրայ» պատասխանեց դը-
րացին եւ նորէն «կեցցէ՛ Ծերուկ Քարէ Դէմ-
քը» պոռաց:

Բայց էրնէսթ անդին դարձաւ մելամազ
ձիկ եւ գրեթէ վհատած. քանզի այս էր իր
յուսախափութեանց ամենէն տիսուրը, տես-
նել մարդ մը որ կրնար մարդարէութիւնը
կատարած ըլլալ եւ չէր յօժարած: Նոյն ա-
տեն՝ ճիաւորաց դունդը, դրօշակները, նը-
ւագը եւ կառքերը իր քովէն անցան գնացին՝
եւ պոռչկոտ ամբոխն ալ՝ անոնց ետեւէն՝
թող տալով որ փոշին նստի եւ Մեծ Ապա-
ռաժեայ Դէմքը՝ անթիւ դարերէ աստի ըդ-
գեցած իր մեծ վայելչութեամբ միասին՝ նո-
րէն յայտնուի:

«Ահաւասիկ հոս եմ, էրնէսթ», ըսել կը
թուէին բարեհամբոյր շրթները՝ «Եւ քեզմէ
աւելի երկար սպասեցի բայց դեռ չեմ ձանձ-

բացած. մէ՛ վախնար, այդ մարդը պիտի
դայ»:

Տարիները գնացին հապճեպով իրենց ա-
ճապարանքին մէջ՝ իրարու գարշապարին
կուելով: Եւ հիմա սկսան ճերմակ մազեր
բերել եւ զանոնք էրնէսթի գլխուն վրայ ցըր-
ցըքնէլ: Անոր ճակտին երկայնքով ներշըն-
չող խորշոմներ եւ այտերուն վրայ ակոսներ
փորեցին: Էրնէսթ ծերունի մըն էր այլ եւս:
Բայց գլխին ճերմակ մազերէն աւելի էին իր
մտքին իմաստուն խոհերը: Իր խորշոմներն
ու ակոսները արձանագրութիւններ էին,
զորս ժամանակը փորագրեր էր եւ որոնց մէջ
կեանքի պարունակութեամբ փորձուած ի-
մաստութեան նշանաբաններ դրոշմեր էր: Եւ
էրնէսթ անծանօթ չէր մնացած: Առանց իր
հետապնդումին, առանց իր բաղձանքին ե-
կած էր համբաւը զոր այնքան բազմաթիւ
մարդիկ կը փնտուեն եւ զինքը ճանչցուցած
էր մեծ աշխարհին մէջ՝ իր խաղաղիկ կենաց
թատերաբեմին սահմաններէն անդին: Ու-
սուցչապեաներ եւ մինչեւ իսկ քաղաքներուն
դործունեայ մարդիկը հեռուէն կուգային էր
նէսթի հետ տեսակցելու: Որովհետեւ տարա-
ձայնուած էր թէ այս պարզունակ հողագոր
ծը՝ որ ուրիշներէն տարբեր գաղափարներ կը

տածէր որոնք գրքերէ քաղուած չէին այլ կը կրէին աւելի բարձր նկարագիր մը, անդորր եւ սերու վեհութիւն մը. կարծես հրեշտակ-ներու հետ հաղորդակցած էր իբրև իր առօրեայ բարեկամները: Փիլիսոփայ, քաղաքագէտ թէ մարդասէր, էրնէսթ այս այցելուները կ'ընդունէր՝ իր մանկութենէն ի վեր զինք բնորոշող քաղցրիկ անկեղծութեամբ, եւ անոնց հետ աղատաբար կը խօսէր այն ամէն բաներուն վրայ որոնք իրեն կամ անոնց համար գերազանց կամ խորունկ շահեկանութիւն մը ունէին: Խօսակցութեան միջոցին՝ իր երեսը կը լուսավառէր եւ անոնց վրայ կը փայլէր վերջալոյսի մեղմ ցոլացումով մը: Այս օրինակ տեսակցութեան մը լիութենէն յուզուած է մտածկոտ՝ իր հիւրերը կը մեկնէին եւ ձորն ի վեր անցնելով՝ կանդ կ'առնէին Մեծ Ապառաժեայ Դէմքը դիտելու համար: Եւ կը կարծէին անոր նմանութիւնը տեսած ըլլալ մարդկային կերպարանքի մը վրայ. բայց չէին կընար յիշել թէ ո՞ւր:

* * *

Մինչ էրնէսթ մեծեր եւ ծերացեր էր՝ բարերար Նախախնամութիւնը աշխարհինոր բանաստեղծ մը չնորհեր էր: Այն ալ ձորին բնիկներէն էր՝ բայց իր կեանքին մեծագոյն

մասը այս ոռմանթիկ բնագաւառէն հեռու անցնելով՝ իր դաշն նուագը յորդեցուցած էր քաղաքներու խուճապին եւ ժխորին մէջ: Եւ սակայն յաճախ իր մանկութեան մտերիմ լեռները՝ քերթուածներուն վճիտ մթնոլորտին մէջ կը բարձրացնէին իրենց ձիւնապըսակ սարերը: Ոչ ալ Մեծ Ապառաժեայ դէմքը մոռցուած էր. քանզի բանաստեղծը զայն հռչակած էր գեղօնով մը որ Դէմքին վեհափառ շրթներէն բղխած ըլլալու չափ վսեմ էր: Կընանք ըսել թէ այս հանճարեղ մարդուը երկինքէն չնաշխարհիկ օժտումներով վար իջած էր: Եթէ լեռ մը դրուատէր՝ ամբողջ մարդկութեան աչքերը՝ անոր կուրծքին վրայ հանգչող աւելի մեծ վեհութիւն մը կը տեսնէին քան ինչ որ անկէ առաջ նկատուած էր: Եթէ գեղատեսիլ լիճ մը դառնար եր նիւթը՝ անիկա՝ իր չնորհիւ՝ կը ծածկըսէր երկնային ժպիտով մը որ այլ եւս յաւերժապէս պիտի փալիլար անոր մակերեսին վրայ: Եթէ հինաւուրց եւ լայնածաւալ ովկիւնոսը երդէր՝ նոյն իսկ անոր ամեհի ծոցին խորայատակ անհունութիւնը՝ կարծես երդին յոյզերուն ազդեցութեան տակ՝ կը թուէր աւելի սաստկօրէն ուռիլ: Այսպէս աշխարհը տարբեր եւ աւելի հրապուրիչ ե-

բեւոյթ մը առաւ այն վայրկեանէն երբ բանաստեղծը իր բարեբաստիկ աչերը բացաւ անոր մէջ։ Արարիչը զանիկա նուիրած էր՝ իրեւ իր արարչադործութեան վերջին լաւագոյն բարոքումը։ Արարչադործութիւնը չէր աւարտած՝ մինչեւ որ բանաստեղծը եկաւ զայն իր մեկնաբանութեամբ ամբողջացնել։ Տպաւորութիւնը ոչ նուազ վսեմ եւ գեղեցիկ էր երբ իր տաղերուն նիւթը կ'ըւլար իր մարդկային եղբայրները կենաց հասարակ փոշիին մէջ թաթիսուած այրը կամ կինը՝ որուն նա կը հանդիպէր ամէն օր եւ պղտիկ մանուկը որ իր առօրեայ ճամբուն վրայ կը խաղար՝ կ'այլափոխուէին եթէ զանոնք տեսնէր իր քերթողական հաւատքի վայրկեաններուն մէջ։ Անիկա ցոյց կուտար հրեշտակային ազդակիցներու հետ զանոնք կապող մեծ շղթային ոսկի օղակները դուրս կ'բերէր զանոնք այդպիսի ազգակցութեան մը արժանի ընող երկնային ծնունդի մը թաքուն յատկանիշները։ Կային մարդիկ որ իրենց դատողութեան առողջութիւնը ապացուցանել կ'կարծէին պնդելով թէ բնական աշխարհին բոլոր գեղեցկութիւնը եւ վայելչութիւնը մի միայն բանաստեղծին երեւակայութեան մէջ գոյութիւն ունէին։ Այդ կարդի մար-

դիկ թող իրենց համար խօսին՝ որ անտարակոյս կը թուին արհամարհկոտ դառնասըրտութեամբ մը թսխուած ըլլալ բնութեան կողմէ որ խոզերը ստեղծելէ վերջ՝ զանոնք եր դիրտէն շիներ է։ Ամէն ուրիշ բաներու մասին՝ բանաստեղծին խոհալը՝ ամենէն իրական ճշմարտութիւնն էր։

Այս բանաստեղծին երգերը՝ կընէսթի ալձեռքը անցան։ Զանոնք կարդաց իր սովորական տաժանքէն վերջ՝ բազմած իր խրճիթին առջեւ տախտակէ նստարանին վրայ՝ ուր երկար տարիներ Մեծ Ապառաժեայ Դէմքին նայելով՝ իր հանգստեան ժամերը խորհըրդածութեամբ լեցուցեր էր։ Եւ հիմա իր հոգւոյն թելերը թրթուացնող տողերը կարդացած պահուն՝ աչքերը վերցուց դէպի խոռոշոր դէմքը որ այնքան բարութեամբ իր վըրայ կը շողար։

«Ո՛ վեհաշուք բարեկամ» մրմնջեց՝ Մեծ Ապառաժեայ Դէմքին ուղղելով իր խօսքերը, «միթէ այս մարդը արժանի չէ՞ քեզի նըմանելու»։

Դէմքը կը թուէր ժպտիկ՝ բայց բնաւ չի պատասխանեց։

Այնպէս պատահեցաւ որ բանաստեղծը՝ թէպէտ հեռու տեղ մը կը բնակէր՝ ոչ միայն

Էրնէսթի մասին լսեր էր՝ այլ նաեւ անոր նը-
կարագրին վրայ շատ խորհրդածեր էր մին-
չեւ որ իրեն ոչինչ այնքան բաղձալի երեւ-
ցաւ որքան տեսակցութիւն մը այս մարդուն
հետ որուն ինքնուսոյց իմաստութիւնը զու-
դընթաց կ'ընթանար իր կեանքին ազնիւ
պարզութեան հետ։ Ուստի ամառնային ա-
ռաւօտ մը շոգեկառք նստաւ եւ երեկոյեան
դէմ կառքէն վար իջաւ էրնէսթի խրճիթէն
ոչ շատ հեռու։ Տիար Ոսկեհաւաքի նախկին
պալատը՝ մեծ պանդոկը շատ մօտիկ կը
գտնուէր. բայց բանաստեղծը՝ պարկը ի ձե-
ռին հարցուց իսկոյն թէ էրնէսթ ո՞ւր կը բը-
նակէր եւ որոշեց անկէ հիւրասիրութիւն
խնդրել։ Տանըտ մօտենալով՝ հոն դտաւ բարի
ծերունին՝ ձեռքին մէջ հատոր մը բոնած՝ զոր
փոխն ի փոխը կը կարդար եւ յետոյ՝ էջե-
րուն մէջ դնելով՝ զորովալից աչերով Մեծ
Ապառաժեայ Դէմքին կը նայէր։

«Բարի երեկոյ» ըստ բանաստեղծը,
«կընա՞ք ճամբորդի մը մէկ գիշերուան հա-
մար օթեւան շնորհել»։

«Միրայօժար» պատասխանեց էրնէսթ եւ
յետոյ ժպտոլով յարեց՝ «կարծեմ երբէք Մեծ
Ապառաժեայ Դէմքին՝ օտարականի մը այն-
քան հիւրասիրաբար նայիլը չէի տեսած։

Բանաստեղծը նստարանին վրայ՝ էր-
նէսթի քով բազմեցաւ եւ երկուքը միասին
սկսան խօսակցիւ։ Բանաստեղծը շատ ան-
գամ ամենէն սրամիտ եւ ամենէն իմաստուն,
անձանց հետ տեսակցած էր բայց երբէք էր-
նէսթի պէս մարդու մը հետ՝ որուն խոր-
հուրդները եւ զդացումները այնքան բնական
ազատութեամբ մը կը յորդէին եւ որ մեծ
ճշմարտութիւնները՝ իր պարզ արտայայ-
տութեամբ մարդոց սրտին այնքան մօտ կը
բերէր։ Ինչպէս յաճախ ըստած էր՝ հրեշ-
տակներ կարծես դաշտերուն մէջ իրեն հետ
գործակցած էին. հրեշտակներ կարծես իրեն
հետ նստած էին վառարանին քով եւ հրեշ-
տակներու հետ՝ իրեւ բարեկամմներու հետ՝
կենակցելով՝ անոնց խորհուրդներուն վսե-
մութիւնը շնչած էր եւ զանոնք առտնին բա-
ռերու քաղցրիկ եւ խոնար հրապուրով օծած
էր։ Այս էր բանաստեղծին տպաւորութիւ-
նը։ Եւ միւս կողմէն էրնէսթ կը յուզուէր եւ
կը վրդովուէր այն բոլոր կենդանի պատկեր-
ներէն զորս բանաստեղծը՝ իր մտքէն դուրս
կը զեղուր եւ որոնք խրճիթին դրան շուրջը՝
մթնոլորտը գեղեցիկ, զուարթ եւ մտածկոտ
կերպարանքներով կը շէնցնէին։ Այս երկու
մարդոց փոխադարձ համակրանքը իրենց ա-

ւելի խորունկ իմաստներ կը յայտնէր քան
ինչ որ իւրաքանչիւրը կրնալ առանձինն գըտ
նել: Իրենց մտքերը իրարու հետ ներդաշ-
նակուելով՝ մէկ նուագ կը կազմէին եւ բերկ-
րալիր երաժշտութիւն մը կ'արտադրէին զոր
անոնցմէ ոչ մէկը կրնար իրը կոչել եւ ոչ ալ
իրեն մասը զանազանել ընկերներէն: Գոգ-
ցես զիրար իրենց մտածումներուն մէկ բարձ
րահայեաց խորանը առաջնորդած էին, այն-
քան հեռակայ եւ մինչեւ հիմա այնքան ա-
ղօտ որ դեռ երբէք անկէ ներս մտած չէին
եւ այնքան գեղեցիկ որ միշտ հոն մնալ կը
բաղձային:

Էրնէսթ՝ բանաստեղծին ունկնդրած ա-
տեն՝ կ'երեւակայէր թէ Մեծ Ապառաժեայ
Դէմքն ալ ծուած՝ մտիկ կ'ընէր: Լըջու-
թեամբ բանաստեղծին վառվոռւն աչերուն
նայեցաւ:

«Ո՞վ ես դուն, իմ զարմանալի տաղան-
դով օժտուած հիւրս» ըսաւ:

Բանաստեղծը մատը՝ էրնէսթի կարդա-
ցած գրքին վրայ դրաւ:

«Դուն այս քերթուածները կարդացեր
ես» ըսաւ: «Ուրեմն կը ճանչնաս զիս, որով-
հետեւ ես գրեցի զանոնք:»

Դարձեալ եւ աւելի ուշադրութեամբ էր-

նէսթ հետազօտեց բանաստեղծին դիմագը-
ծերը: Ետքը՝ դէպի Մեծ Ապառաժեայ Դէմ-
քը դարձաւ: Վերջը նորէն վարանկոտ դէմ-
քով մը դարձաւ իր հիւրին: Բայց երեսը
տիրեցաւ, գլուխը շարժեց եւ հառաչեց:
«Ինչո՞ւ տիրեցար» հարցուց բանաս-
տեղծը:

«Ուրովհետեւ» պատասխանեց էրնէսթ,
«ամբողջ կեանքիս մէջ՝ մարդարէութեան մը
կատարումին սպասեցի: Եւ երբ կարդացի
այս կտորները՝ սկսայ յուսաւ թէ անիկա
կրնար կատարումիլ քեզմով:»

«Դուն յուսացիր» պատասխանեց բա-
նաստեղծը՝ նուազկոտ ժպիտով մը՝ «իմ վը-
րայ գտնել Մեծ Ապառաժեայ Դէմքին նը-
մանութիւնը: Եւ հիմա յուսախար եղար-
ինչպէս նախապէս Տիար Ոսկեհաւաքէն, ծե-
րուկ Արինեւ-Ուրոտումէն եւ Քարէ Դէմ-
քէն: Այո՛, էրնէսթ, ատիկա իմ ճակատա-
դիրս է: Իմ անունս ալ պէտք է աւելցնես
այդ մեծահամբաւ երեքին վրայ եւ արձա-
նագրել յոյսերուն մէկ նոր վրիպումը: Քան-
դի ամօթահար եւ տրտում սրտով կ'ըսեմ
ո՞վ էրնէսթ — ես արժանի չեմ որ այդ բա-
րեհամբոյր եւ վեհաշուք դէմքը իմ նախա-
տիպս ըլլայ»:

«Եւ ինչո՞ւ» հարցուց էրնէսթ՝ բանաստեղծութեանց հատորը մատնանշելով: «Այսի խորհուրդները աստուածային չեն միթէ»:

«Անոնք աստուածութենէն խաղ մը ունին» պատասխանեց բանաստեղծը: Կրնասանոնց մէջ՝ երկնային երգի մը հեռաւոր արձագանքը լսել: Բայց իմ կեանքս, սիրելի՝ էրնէսթ, իմ խորհուրդներուս չհամապատասխանեց: Հոյակապ երազներ ունեցայ բայց անոնք երազ մնացին. որովհետեւ ես ապրեցայ — եւ այն ալ իմ անձնական կամքովս — խեղճ եւ գծուծ իրականութեանց մէջ: Երբեմն ալ՝ — թող համարձակիմ ըսելու — կը թերահաւատիմ այն մեծութեան, գեղեցկութեան եւ բարութեան մասին զորս՝ կ'ըսեն թէ իմ գործերս աւելի ակներեւ ըրած են բնութեան եւ մարդկային կեանքին մէջ: Ինչո՞ւ, ուրեմն, ո՛վ մաքուր հետախոյզ բարւոյն եւ ճշմարտին, յուսաս զիս գտնել աստուածայինը պատկերացնող այդ հանդիպակաց դէմքին մէջ»:

Բանաստեղծը տիրութեամբ կ'ըսէր այս բաները եւ աչքերը արտասուքով մթագնեցան: Նոյնպէս ալ էրնէսթինը:

Արեւամուտին՝ ինչպէս երկար ատենէ աստի իրեն յաճախաղէպ սովորոյթ մը եւ

դած էր՝ էրնէսթ բացօթեայ տեղ մը՝ շրջակայ բնակիչներէն կազմուած ժողովի մը պիտի խօսէր: Ինք եւ բանաստեղծը՝ թեւ թեւի մտած՝ խօսակցելով այդ տեղը գնացին: Բըլուրներուն մէջ փոքրիկ խորշ մըն էր, ետեւը մոխրագոյն գահավէժ մը որուն խոժոռ ճակատը՝ պայծառացած էր շատ մը պատառուն բոյսերուն հաճելի տերեւներով, որոնք իրենց դրասանզները բոլոր անտաշ անկիւններէն կախելով լերկ ժայռին համար օթոց մը կազմէին: Գետնէն վեր՝ կանաչներով շրջանակուած որմախորշ մը կ'երեւնար որ մարդ մը ընդունելու եւ լուրջ խորհուրդին եւ հարազատ զգացումին ինքնաբերաբար ընկերացող շարժ ու ձեւերուն ազատութիւն տալու չափ լայն էր: Էրնէսթ այս բնական բեմը ելաւ եւ իր ունկնդրութեան վրայ մտերմական բարութեան ակնարկ մը ձգեց: Անոնք ոտքի կայնած, նստած կամ ընկողմանած էին՝ ինչպէս որ ամէն մէկուն յարմար կը թուէր՝ մինչ անյայտացող արեւուն լոյսը չեղակի կ'իյնար իրենց վրայ եւ իր մեղմացած զուարթութիւնը կը խառնէր հնօրեայ անտառին հանդիսաւորութեան հետ՝ որու ճիւղերուն մէջէն եւ ներքեւէն ոսկեղին ճամանչները ստիպուած էին մաղուելու:

Ուրիշ կողմէ մը կը տեսնուէք Մեծ Ապաստած-
եայ Դէմքը՝ իր բարի երեւոյթին մէջ՝ նոյն
հանդիսաւորութեան հետ բաղադրուած միեւ
նոյն զուարթութեամբ:

Էրնէսթ խօսիլ սկսելով՝ ժողովուրդին
կուտար ինչ որ իր սրտին եւ մտքին մէջ կար:
Իր բառերը զօրութիւն ունէին՝ որովհետեւ
իր խորհուրդներուն հետ համաձայն էին: Իր
խորհուրդները՝ իրականութիւն եւ խորու-
թիւն ունէին՝ որովհետեւ իր կենցաղին հետ
ներդաշնակուած էին: Այս քարոզիչին ար-
տասանածը՝ պարզ շունչ մը չէր՝ այլ կե-
նաց խօսքեր՝ որովհետեւ բարի գործերու եւ
սուրբ սիրոյ կեանք մը հալելով անոնց մէջ
անցած էր: Այս թանկադին ըմպելիքին մէջ
լուծուած էին մարդարիտներ զուտ եւ պատ-
ուական: Ունկնդրած պահուն՝ բանաստեղ-
ծը զգաց թէ էրնէսթի էութիւնը եւ նկարա-
գիրը բանաստեղծութեան աւելի ազնիւ տե-
սակ մըն էր՝ քան ինչ որ ինք երբէք գրած
էր: Արտասուաշող աչերով՝ ակնածանօք
դիտեց պատկառելի մարդը եւ ըստ իւրովի
թէ երբէք մարդարէի եւ իմաստունի այդքան
արժանի երեւոյթ չէ եղած որքան այդ հեզ,
անուշ, խոհուն կերպարանքը՝ որուն բոյոր-
տիքը ցրցքնուած էր սպիտակ մազերու փառ-

քը: Հեռաւորութեան մէջ՝ բայց որոշապէս
տեսանելի էր Մեծ Ապաստածեայ Դէմքը՝ մա-
րը մտնող արեւուն ոսկեղէն լոյսին մէջ կար-
կառուն՝ եւ էրնէսթի ճակատը պսակող ճեր-
մակ մազերուն պէս սպիտակ մէզերով շըր-
ջապատուած, հոյակապ բարձրութեան իր
այդ նայուածքը կարծես ամբողջ աշխարհը
կ'ընդգրկէր:

Ճիշդ այդ պահուն՝ իր արտայայտելիք
մէկ խորհուրդին հետ ներդաշնակօրէն՝ էր-
նէսթի երեսը վսեմ արտայայտութիւն մը ա-
ռաւ, այնքան զեղուն, բարութեամբ՝ որ բա-
նաստեղծը՝ անդիմադրելի մղումով մը՝ թի-
ւերը վեր նետեց եւ կանչեց:

«Նայեցէ՞ք, նայեցէ՞ք, էրնէսթ ինք է
Մեծ Ապաստածեայ Դէմքին նմանութիւնը»:

Այն ատեն ժողովուրդը նայեցաւ եւ տե-
սաւ թէ ինչ որ խորատես բանաստեղծը ը-
սաւ՝ ճշմարիտ էր: Մարդարէութիւնը կա-
տարուած էր: Բայց էրնէսթ իր ըսելիքը ա-
ւարտած ըլլալով՝ բանաստեղծին թեւը ա-
ռաւ եւ յամբաքայլ դէպի տուն գնաց::: Դեռ
յուսալով թէ իրմէն աւելի բարի եւ իմաս-
տուն մարդ մը շատ չանցած պիտի երեւնաբ՝
յար եւ նման Մեծ Ապաստածեայ Դէմքին:

կութեան «օգտակար» շատ հաստատութիւններ ու շատ աղտոտութիւններ, որպիսիք են, կեղծաւորութիւն, անիրաւութիւն, խաբէութիւն, արիւնհեղութիւն, եւ այդպիսի շատ այլ թոյներ, որոնց այնքան լաւ դիմակաւորում էր Արդարութիւնը:

Եւ ահա Արդարութեանը վինտուելու ելաւնախ մի պատերազմիկ ազնւական: Շատ զօրք ժողվեց, վաշտ ու գունդ կազմեց եւ երգւեց, որ Արդարութիւնը ո՞ր ծակը մտած լինէր, պիտի հանէր, ձեռքն ու ոտը կապած՝ պիտի մէջտեղ բերէր:

Այդ պատճառով իսկ, ոտնակոխ տալով նա գիւղ ու քաղաք, արիւն սփռելով դաշտ ու ձոր, ջարդեց, սրամաշ արաւ ամեն ինչ, տակնուվրայ դարձեց ամեն ընակութիւն, եւ այդպէս առաջ էր գնում, յուսալով բռնել Արդարութիւնը:

Նրանից յետոյ ճանապարհ ընկաւ Արդարութիւնը որոնելու մի շատ հարուստ մեծատուն: Ոսկի ու արծաթ, զարդ ու զարդարնք բարձեց ուղտերի եւ վատահ իր ոսկու վրայ, տնից դուրս եկաւ: Ասում են, որ մի քանի հատ էլ սիրուն կանայք վերցրեց, որ ոսկու փայլի վրայ գեղեցկութեան հրապոյրն էլ աւելացնէ:

ԿՈՐՍՈՒԱԾ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Մի անգամ Արդարութիւնը անհետացաւ յանկարծ:

Ասենք, նա յաճախ էր կորսւում:

Խուսափելով իրան ծիւրող, պատն ի պատ խփող լլկող անձերից, յաճախ նա փախչում էր լեռները, պահում աշխարհիս հեռաւոր անկիւններում: Բայց ամեն անգամ, այսպէս կամ այնպէս, յաջողւում էր նրան գտնել, բռնել, վանդակի կամ սնտուկի մէջ դնել, ուղածին պէս դործածել, չարչարել:

Այս անգամ սակայն, չը գիտեմ ի՞նչ հրնարքով, Արդարութիւնը յաջողւեց լաւ անհետանալ. այնպէս լաւ թաքնւեց, որ մարդիկ աղօթքով, եւ գիտութեամբ, ուժով կամ ոսկով իսկ անկարող եղան նրան գտնելու:

Ակսւեց մեծ իրարանցում, առանց Արդարութեան դժւար էր ապրել. մանաւանդ որ նրա անհետանալով քաղմանում էին մարդ

— Կը տեսնէք, պնդում էր նա, Արդարութիւնը ոսկովս պիտի գնեմ, կանանցով պիտի գրաւեմ եւ սնդուկիս մէջ դրած՝ պիտի մէջտեղ բերեմ:

Այդպէս էր ահա, որ բռունցքն ու ոսկին գնացին Արդարութիւնը որոնելու... Եւ դեռ գնում են:

Թո՞ղ գնան:

* * *

Տեսնենք այժմ, թէ ո՞վ էր այն երրորդ անձը, որ խեղճ ու կրակ, ցնցոտիք հագին, ճակատը վշտերով խոր-խոր ակօսած, մտածեց ելնել Արդարութիւնը որոնելու:

Ասենք ազնւականը սուր ունէր, հարուստը՝ ոսկի, խոկ սա ի՞նչ ունէր, ինչո՞վ պիտի գտնէր Արդարութիւնը:

Թշւառն էր դա: Բոլոր ընծաների փոխարէն էլ տարած էր մի չնչին սրւակ, որ ամուր կերպով սեղմել էր կրծքին եւ յամառութեամբ ճանապարհ ընկել: Բանն այն է, որ սրւակը լքրել էր մի չը լւած հեղուկով: Որբից մի արցունք, ընկածից մի հառաչ, գործաւորից մի դառը քրտինք... Մի խօսքով, վշտերի արցունքներից մի մի կաթիլ ժողոված, լցրել էր շիշը, պինդ փակել, եւ կարծ-

ծում էր թէ տարածը անշուշտ պիտի գրաւէր Արդարութիւնը:

Ու քայլում էր: Անցնելով մեծ-մեծ քաղաքներից, խուլ հեռաւոր գիւղերից, քայլում էր անխոնջ, ձորեր ցած իջնում, ամեն քայլափոխին էլ կանգ առնելով՝ կանչում.

— Ո՞ւր ես, Արդարութիւն:

Արդարութիւնը չը կար: Ոչ երեւում էր, ոչ էլ ձայն տալիս:

* * *

Անօթի, ծարաւ, յոգնած, վշտալից, երկար թափառեց թշւառը, ամեն ուղղութեամն, սրտի վրայ սեղմած ունենալով սրւակը, որի հեղուկը սկսել էր եռալ ու տաքնալ: Արդարութիւնը սակայն, չը խղճացնրան էլ. ոչ երեւաց, ոչ էլ գոյութիւնը յայտնեց:

Վերջապէս, երբ յուսաքեկ, ուժասպառասել էր լեռան կատարին, նստեց մի ժայռի վրայ եւ սկսեց մտածել, թէ ի զուր էր Արդարութիւն որոնելը, քանի որ խուսափում էր նա թշւառից անգամ:

Եւ երբ այդպէս մտածեց, բարկացած հանեց ծոցից սրւակն ու խփեց ժայռին:

— Գնա ոչնչացիր, գոչեց նա, ի զուր են

բոլոր վշտերն ու արցունքները. Արդարութիւնը թշւառին չի սիրում...

Բայց հազիւթէ սրւակը փշուել էր, լըստեց մի ահեղ որոտում, հոսած արցունքներից թանձր ծուխ բարձրացաւ, փրփրաց, ոլորտեց եւ նրա միջից, ահարեկ թշւառի առաջ, դուրս ցցւեց մի ահեղ հսկայ:

Սարսափած թշւառը ընկաւ երեսի վրայ:

— Ելի՛ր, կանչեց հսկան մեծաձայն. եւ լիր եւ մի վախենալ:

— Ո՞վ ես դու, ահեղ ոգի, հարցրեց թշւառը:

— Ե՞ս, գոչեց հսկան, — Ես բողոքն եմ, որ ծնայ այդ թափած արցունքներից եւ որ պիտի աշխարհ բերեմ անհետացած Արդարութիւնը... նայիր...

Ապա արշալոյսի կարմրորակ լոյսի մէջ ցցւեց հսկայի վեհ հասակը, դարձած դէպի բարձրութիւնները, ուր սկսել էր մի փոթոքիկ եւ ուր գետինն ամբողջ դողում էր դղըրդիւնով:

Եւ հեռուն հսկայի պարզած ձեռքի կողմը, մի կոյտ մաքուր ամպերի բացւած քից երեւան եկաւ թաքնւած Արդարութիւնը, խո-

բունկ, ախուր հայեացքով, եւ առանց կշիռքի, առանց մեծ սրի*:

— Ե՛կ, Արդարութիւն, կանչեց Բողոքը, ես ծնւել եմ եւ իմ ձայնը թող քեզ համար կշիռք եւ սուր դառնայ, Ե՛կ, Արդարութիւն...

Բայց Արդարութիւնը անշարժ ու տըլսուր, նայեց նրան, նայեց թշւառին եւ ասաց.

— Դեռ ոչ... դեռ դու փոքր ես. գնա՛քալ-լիր, կուտակիր արցունք, կուտակիր փշտեր, մեծացիր որպէս ովկէան, կատաղիր որպէս հեղեղատ, եւ այն ժամանակ միայն ես կը դամ իմ սրով եւ իմ կշիռքով...

Ապա ամմպը սահեց եւ Արդարութիւնը նորից անհետացաւ իր անմատչելի բարձրութեան մէջ...



* * *

Այդ օրւանից ահա՝ պատերազմիկ զօրենը արիւնի մէջն է որոնում Արդարութիւնը, հարուստը՝ ոսկու, եւ թշւառը, նստած իր

* Հնումն Արդարութիւնը նկարւում էր որպէս մի դիցուհի, աչքերը կապած, մի ձեռքին սուր, եւ միւսին կշիռք:

վշտերի մօտ, արցունքներովը մեծացնում է
ԲՈՂՈՔԻՆ, որ նա վերակոչէ աշխարհում՝
կորսւած Արդարութիւնը...

ՎՐԹԱՆՔԱ ՓԱՓԱԶԵԱՆ



ՄԱՅՐԵՐԸ

«Շատ ձմեռների սառնամանիքներ
հալուսեցին, հասաւ գարունը, եկան ծի-
ծեռնակները, կենցաղասէր մարդիկ տե-
սան եւ խնդացին, բայց նրանք երբեք չը
կարողացան տեսնել իրանց սիրելինե-
րին»:

Եղիշէ

Ա.

Գիւղական փոքրիկ եկեղեցու կիսա-
խաւարի մէջ խնկի ծուխը պալան-պալան
բարձրանում էր այն երեկոյ եւ բակ կապում
լուսամուտների շուրջը։ Կանթեղի աղօտ
լոյսի առաջ քահանան մոմուալով քաղում էր
աղօթքները եւ բազմաթիւ ժամուորները
մերթ գետնատարած խոնաւ խսիրների վը-
րայ, մերթ ոտքի կանգնած ու բազկատա-
րած՝ մըմնջում էին մի ընդհանուր ու խուլ

մռմռոց հանելով։ Կանանց բաժնում սեւացած սեան վրայ կախուած էր Աստուածածինի նկարը մի մգլած, դեղնած շրջանակի մէջ եւ նրա առաջ կանգնած էր մի տարիքաւոր կին՝ Սուսանը։ Այդ կինը եւ այդ նկարը երկու մայրեր էին, որոնք նայում էին իրար ակնապիշ եւ կարծես ջանք էին անում հասկանալ միմեանց մտքերը, կարդալ միմեանց սրտերը։ Տիրամայրը վերեւումն էր՝ սեան վրայ, Սուսանը ներքեւում՝ գետնի վրայ. մէկը սուրբ էր, կարող եւ հրաշտործ, միւսը՝ խեղճ, վշտահար, անզօր մի պառաւ, որ եկել էր նրա առաջ լաց լինելու, աղերսելու։ Միաձնի փոքրիկ, գանգրահեր գլուխը սղմած էր կուսական կրծքին, Աստուածամայրը խանդաղատանքով ու ժալտով նայում էր վար, իր ոտների տակ սողացող, դալարուող բազմութեանը, նայում էր նոյն ժպտով նաեւ Սուսանին, որ եկել էր ցաւոտ կուրծքը նրա առաջ բանալու։

Շրջանակի վրայ վեց փոքրիկ, դալար մեղրամոմեր, վշտատեսիլ ու դեղին, պլազլալով վառում էին եւ գունատ ու խորհրդաւոր լուսով՝ երերուն, աղօտ փայլ էին տալիս Աստուածամօր հեղ դէմքին, փոքրիկ Քրիստոսի լիքը, ձինափայլ մարմնին, որ

այդ փայլի մէջ լողում էր ինչպէս մուգ լըճի վրայ վաղորդեան մշուշի մէջ լողացող սպիտակ կարապը։ Խնկի ծուխը չորս կողմից կաթնապոյն քուլաներով գալարում, պառյտներ էր կազմում աստուածային մօրեւ զաւակի շուրջը եւ կարծես աշխատում էր իր ծալքերի մէջ պարուրել և վեր տանել ացդերկնային զոյգը. չէ՞ որ նրանք շատ բան ունէին պատմելու աշխարհից, այնքան արցունքներ Ամենակալի գահի առաջ փոելու։

Վաղուց էր այնտեղ կանգնած Սուսանը։ Եկեղեցու զանգի ձայնը լսելուն պէս նա եկաւ, հասաւ, իր դողդոջուն ու պառաւ մատներով մեղրամոմերը կպցը այրուած, սեւացած շրջանակի, համբուրեց, երեսը խաչակնքեց եւ քարացաւ իր տեղում։ Մոմերի կէսն արդէն վառուել էր եւ Սուսանը կանգնած էր գեռ միեւնոյն տեղում, արտասուաթոր աչքերը չէր հեռացնում Տիրամօր պատկերից, դողդոջողացող շրթունքներից բառերը թափուում էին, հա՛ թափուում, կրակի խօսքեր, ցաւի, աղերսանքի, պաղատանքի խօսքեր—Սուսանը աղօթում էր։ Արտասուքի կաթիլներ ժայռի վրայ փշրուող վտակի ցընցուղների պէս յորդառատ դուրս էին ցայտում աչքերից եւ գլորուում ծեր դէմքի խոր-

շումների վրայով, ու փոքրիկ հոսանուտ ակօսներ կազմում աչքերի տակից մինչեւ ծըռնօտը։ Սուսանն աղօթում էր իր միակ որդու, իր զարիբ, թափառական Սաքօխ համար, որ քանի մի օր առաջ թողեց, գնաց դէպի մութ անյայտը, դէպի հեռուն...

«Ո՞վ սուրբ Տիրամէր, ասում էր նա, բոլոր ցաւոտ սրտերի, բոլոր վշտացած հոգիների, բոլոր մղկտացող մայրերի ու գըթոտ մայր, ձեռքս քո փէջն եմ ձգել, էրուած, մորմոքուած սիրտս բերել եմ քո սուրբ ոտների տակ դնելու. բա՛ց այն, Տիրամէր, տես, արցունքը մի կողմ, կրակը միւս կողմն են բռնել սրտիս եւ արցունքը վառ կրակը մարել չի կարողանում, բոցերը շա՛տ են. բա՛ց այն ու նայիր՝ անձարների մայր, չէ՞ դու սրտերի կրակը հասկանալ, զդալ դիտես, տես ինչեր կան իմ եփուած սրտում, ու յետոյ մի ճար, մի դարման, ողորմած թագուհի։ Իմ ծով մեղքից էս ծեր օրերիս Փալաղը մի դաղ քաշեց սրտիս, մի խորը դաղ եւ էրուած տեղը դեռ մխում է, մխում. դու խօ տեսար, սուրբ մայր, թէ էն մէկ ջիւանս, սարի պէս տղամարդ, ինչպէս կտոր կտոր արին անօրէնները. ա՛խ ցաւով ծնած, մեծացրած զաւակիս էս կոտրած ձեռ-

ներովս արիւնոտ գերեզման իջեցրի։ Ի՞նչ անեմ, դուցէ իմ մեղքից, դուցէ Աստուած էր վրաս բարկացել։ Այս մէկն է գնա՛ց… մղկտացի, աղաչեցի, լաց եղայ, ձեռք ու ուոքն ընկայ, որ ըլ գնայ, բայց գնա՛ց… թէ ո՞ւր, այն դու ինձանից լաւ դիտես, Տիրամէր… հեռու սարերում, ձորերում քարը՝ բարձ, ժայռն՝ անկողին, օձերի հետ ջուրը, դաղանների հետ բունը կիսելով՝ նա թափառում է եւ ես անտէր, անտիրական, ձեռքս չոր գետնին, սիրտս՝ դող, հոգիս՝ ցաւած, օրս՝ սեւ, թաց աչքս դրանը բռնած գիշեր, ցերեկ մղկտում, վշվշում եմ։ Տիրամէր, ողորմած մէրիկ, քո ոտն եմ եկել, ես էլ չեմ տեսնում նրան, դու անշուշտ տեսնում ես, ա՛խ, քո բարի, քո ողորմած, քո քաղցր աչքը նրանից մի՛ հեռացրու, քո սրհովանին ամպի պէս նրա գլխից պակաս մի՛ արա; չարից, ցաւից, դարդից, արիւնոց նըրան ազատ պահիր, չէ՞ դու կարող ես, չէ որ դու ուզես, մութ ամպն էլ նրա գլխով չի անցնի։ Սրտիս վրայ էլ սաղ տեղ չի մնացել, ողջ խոցոտուած՝ պատառ-պատառ է եղած, էլ տեղ չը կայ նոր դանակ մխելու, էլ տեղ չը կայ մի նոր դաղ քաշելու, էլ ճար չը կայ նոր խոց բանալու. նրա սեւ յատա-

կում, ինչպէս սեւ լիճը մութ այրում, արիւնը ծով է կապել ու ցաւերիս բոցերից եռ է գալիս, պղպջում ինչպէս լի կաթսան օջաղի վրայ: Փրկիր նրան, իմ զաւակին, Տիրամէր, բարեխօս եղիր նրա մօտ, որ այնպէս սիրով գրկել, սղմում ես քո սուրբ կնծքին. տես նա ինչպէս փարում է քո մայրական ըստինքներին, ինչպէս ուզում է լսել քո սրտի ձայնը, մա՛յր, մա՛յր, ախր ես էլ եմ մայր, ես էլ սիրտ ունեմ, կուրծք ունեմ, մայրական կաթովս քանիսին կերակրեցի, կրծքիս վրայ քանիսին ջերմացրի եւ էլ չը կա՛ն, չը կա՛ն, ոչ մէկը չը կայ ութ ծնունդ նստեցի, ութ երկունք քաշեցի, եւ այժմ էն մէկն է: Ի՞նչպէս դիմանամ, սուրբ Տիրամէր, կուրծքը չոր է, սիրտս մարած, մոխիր դարձած դարդի բոցից, սպիտակ մաղերիս վրայ սեւ կապած, մէջքս երկու տակ ծալուած, մեռայ գերեզմանները լիզելով, չոր հողը գրկելով իմ շարան շարան արնակոլու մեռելների, ու չը կայ մէկը, որ սղմեմ կրծքիս, չը կայ մէկը, որ իմ սրտի ձայնը լսի, չէ՞ ես էլ իսկ եմ, մեղք եմ, մայր եմ, պառաւած, անզօր մայր, ո՞վ դու թշուառների, խեղճերի, անձարների ողորմած մա՛յր: Ուխտ եմ անում քո սուրբ պատկերի առաջ, թո՛ղ լսի ինձ մեր

ամենի տէրը, սուրբ Աստուածորդիդ, ամեն երեկոյ այստեղ քո առաջը կը վառեմ վեց մոմը, կ'ընկնեմ, կը լիզեմ սառը հողը. անձարի պէս փէշերիցդ կը կախուեմ, քեղ հանգիստ չեմ տայ, քո աչքից չեմ հեռանայ, այստեղ կը ճշամ, կը սդամ, կը լամ, կ'աղաղակեմ երկնքովը մէկ, որ դու ինձ լսես, որ իմ միակ զաւակին փրկես, պահես, պաշտպանես: Օ՛, ողորմած Տիրամէր, քո սիրով լայն է, սէրդ՝ անչափ, մենակ նրան մի՛ հասեր, աղաչում եմ, նախ հասիր բոլոր ուրիշ անձարներին, խեղճերին, նեղեալներին, քեղ կանչողներին, որ այնքան շատ են մեր վէրան աշխարհում, մեր սեւ երկնքի տակ, ամենից վերջը միայն իմ ձայնը լսիր, մեղաւոր սրտիս խնդիրը կատարիր, մայր մայր, բոլոր վշտացած հոգիների, անտէր անձարների ողորմած մա՛յր:»

Մոմերը մէկիկ-մէկիկ այրուեցին ու մարեցին, Աստուածածնի եւ ըիստոսի դէմքերը կամաց-կամաց լուծուեցին ու կորան խաւարի մէջ. քահանայի ձայնը լոեց, աղօթաւորների մըմունջները դաղարեցին, եկեղեցին դատարկուեց, կանանց բաժնից է սպիտակ չարսաւաւոր ստուերներն իրար յետեւց մեղմով դուրս գնացին. Սուսանն այն-

տեղ մնաց մենակ եւ դեռ աղօթում էր, դեռ նա աչքերը վար չէր բերում Տիրամօր պատկերից, դեռ չորացած բազուկները տարածած նա օդնութիւն, դժութիւն էր աղերսում եւ լալիս էր ու լալիս...

— Ո՞րդի, ա՛յ Սուսան խաթուն.

Սուսանը շարունակում էր աղօթքը, այժմ նա ծունկ էր չոքել եւ չէր տեսնում թէ ի՞նչ է կատարում իր շուրջը, չէր էլ լսում ոչինչ:

— Սուսան խաթուն, ուշ է, ժամը պըլթաւ, որդի:

Կինը գլուխը բարձրացրեց, խօսողը ծերունի քահանան էր:

— Տէրտէր ջան, աջիդ մեռնեմ, աղօթում եմ:

— Հա, որդի, դիտեմ, որ աղօթում ես, լաւ ես անում, թո՛ղ Աստուած լիի, ասում եմ, որ ժամը պրծաւ, էլ մարդ չըկայ, տե՛ս:

— Դու դիտես չէ՞՝, հայր ջան, էն մէկն էնպէս բէմուրազ եղաւ, մէկէլները գնացին, արեան ծով էր, խեղդեց բոլորին, էս մէկն էլ չոլերն ընկաւ, ես եկել եմ Աստուածածնի փէշերից կախուել:

— Լաւ ես անում, զաւակս, լաւ ես անում, բայց ուշ է արդէն:

— Գիտե՞ս, հայր ջան, չեմ թողնի, չեմ թողնի նրա փէշերը. ամեն օր էսպէս կը գամ, ես ի՞նչ եմ արել, որ էսքան սեւը մենակ քաշեմ, որ էսքան ցաւը մենակ ինձ տան. մեղք չե՞մ, մայր եմ էէ՛, սա էլ մայր է, էս Տիրամէրը, տես, տես ինչպէս գրկել է իր զաւակին, տես ինչպէս սղմում է կրծքին. իսկ ես ոչ ոք չունեմ, ոչ ո՞ք: Դու դիտես չէ՞՝, տէրտէր ջան, չէ՞ քեզ հետ դրինք հուզ արնակոլոլ զաւակներիս:

— Հա՛ հա՛, որդի, դէ հիմա բաւական է, մնացածն էլ էզուց:

— Տէրտէր, ոտիդ մեռնեմ, դուման բռնեց իմ գլխին, ի՞նչ դուման. սար ու ձոր մթնեց. էս չար օրերին, էս չար ժամանակին, նա էլ թողեց, գնաց... ես էլ ո՞ւր գընամ, չոր գլուխս ո՞ւր տանեմ, դէ Տիրամէրն այստեղ է, ամեն օր կը գամ, մոմ էլ կը բերեմ, կիրակիներն էլ թազա հաց կը թիւեմ, կը բաժնեմ, մատաղ կ'անեմ, արցունք էլ դեռ ունեմ, աչքերս դեռ չեն մարել, ա՛յ էս հողը թրշեմ, դէ նա էլ մայր է, սիրտ ունի, սրտի մոմուռը կը հասկանայ, մի ճար կ'անի, էնպէս չէ՞՝, հայր ջան:

— Այդպէս է, որդի, ամեն օր արի, ազօթիր, Տիրամէրը ողորմած է, բարեխօս կը

լինի, իսկ հիմա գնանք, տես այսօր ուշ է,
մոմերդ մարել են:

Սուսանը կարծես միայն այժմ նկատեց,
որ մոմերը վառուել, վերջացրել են, նայեց
վեր, խաւարի մէջ, սեան վրայ պատկեր-
ներն էլ չէին երեւում, էլ Աստուածածնի
կարմիր պարեզօտը եւ կապոյտ ծածկոցը
չէր նշմարւում, էլ նրա հեղ աչքերը ժպտով
չէին նայում վար, փոքրիկ Քրիստոսի ձիւ-
նաթոյր մարմինը եկեղեցու խաւարամած
մթնոլորտում էլ չէր լողում մի կտոր ճեր-
մակ ամպի պէս, այդ բոլորի փոխարէն,
փոքրիկ ծխոտ շրջանակի մէջ հաղիւ նշմար-
ւում էին մի քանի անորոշ բծեր, մութ ըստ-
ուերներ:

Սուսանը խաչակնքեց երեսը ու կամաց-
կամաց երերալով դուրս գնաց: Քահանան
կանգնած նայում էր նրան յետեւից եւ երբ
այդ փոքրիկ, դողդոջուն ստուերը խսպառ-
ծածկուեց դրսի խաւարի մէջ, նա գլուխն օ-
րօրեց խորհրդաւոր ճեւով.

— Խեղճ կին, ասաց նա կամացուկ,
ի՞նչ է լինելու վերջը, խելքն արդէն կար-
ծես տեղը չէ. փառք քեզ Աստուած, հազար
բերան փառք:

Դուրսը մութ էր:

Բ.

Էլի գարուններ եկան բոլորեցին Սու-
սանի գլխով, էլի դաշտ ու ձորեր ծաղիկնե-
րով ու կանաչներով ծածկուեցին: Բակի մի
հատիկ խնձորենին մի քանի անգամ ծաղկեց
եւ բուրմունք արձակեց իր շուրջը, պատերի
նեղ ճեղքերի մէջ ճնջուկները բուն դրեցին
եւ ձագեր հանեցին. Հօտերն ու նախիրները
դաշտերը կենդանացրին, իսկ արագիլները
արդէն մի քանի անգամ չուեցին հեռու, հե-
ռու եւ կրկին վերադարձան: Էլի աշուններ
եկան իրանց վհատեցուցիչ քամիներով եւ
ծառերի տերեւնները լիզեցին, թռչուններն
պհապին ու տխուր երամներով թողին ու հե-
ռացան գեղնած դաշտերից. կռունկները վըշ
տուած կղզոցով սեւ ցելերի վրայ հատիկներ
մուրալով երկնքի երեսից անցան, բայց Սու-
սանի որդին չը կար ու չը կար: Մենակ էր
Սուսանն իր խրճիթում, մենակ ու մոռացը-
ւած. նրան միսիթարիչ ու ընկեր մնացել էր
իրանց ծեր շունը, որ իր տիրուհու պէս այն-
քան բաներ էր տեսել եւ նրա պէս կարծես
սպասում էր մէկին: Երբ գարնանը բակի

խնձորենու վրայ առաջին կոկոնները բացւում էին, Սուսանը նայում էր ուշադրութեամբ ծառի ճիւղերին եւ դառնում էր ոտների տակ թաւալող շանը:

— Բօղար, խնձորենին ծաղկել է, շուտով նա կը գայ, այնպէս չէ^o:

Եւ Բօղարը օրօրում էր իր պոչը, շեշտակի նայում տիրուհու աչքերին ասես ինը շան համաձայնութեան: Անցնում էր գարունը, անցնում էր ամառը, էլի վրայ էին հասնում աշնանային ցրտերը, խնձորենին մերկանում էր տերեւներից եւ տիրութեամբ օրօրում իր կատարը ցուրտ հովերի առաջ, Սուսանը նայում էր վշտով եւ կըկին դառնում իր շանը:

— Բօղար, չեկաւ, չեկաւ բէրաղդը, դարնանը կը գայ, այնպէս չէ^o:

Եւ շունը կըկին օրօրում էր իր պոչը եւ պառաւն սպասում էր յուսով նոր գարնանը, որ խնձորենին ծաղկի, որ թուզունները վերադառնան եւ նրանց հետ միասին Սաքօն յայտնուի:

Նա սպասում էր եւ Սաքօի համար կամաց-կամաց պատրաստում էր փափուկ շատ փափուկ անկողին: Բուրդը հաւաքել էր տարիների ընթացքում եւ մատներով

մաքրում էր ամեն օր, ապա կարում եւ անկողինը դնում ծալքը, յետոյ նրան թւում էր, թէ հարկաւոր է քանդել նորէն փափկացը-նել, ցած էր բերում եւ վերսկսում տասն անդամ կըկինած աշխատանքը:

Դրա հետ միաժամանակ նա կատարում էր իր ուխտը սրբութեամբ. ամեն երեկոյ զնում էր եկեղեցի, վեց մոմը դողդոջուն ձեռքով կացնում Տիրամօր պատկերի սեւացած, այրուած շրջանակի վրայ, ձեռքերը տարածում էր դէպի վեր, դէպի երկինք եւ աղօթում, աղօթում: Եւ ամեն երեկոյ աղօթքից յետոյ, երբ բոլոր ժամաւրները դուրս էին գնում, նա դառնում էր տէրտէրին.

— Սաքօն կը գա^oյ այնպէս չէ^o, տէրտէր:

— Հա՛, որդի ի հարկէ կը գայ, քա այնքան արցունքները, աղօթքները...

— Բերանդ տաճար է, տէրտէր ջան, տաճար, բերնիդ մեռնեմ, ասա՛, ասա՛, այսպէս ասա՛, դու որ ասում ես, Տիրամէրն էլ ժպտում է, յոյսը սրտիս մէջ վարդի պէս բացւում է:

— Հապա, որդի, Տիրամէրը ո՞ւմ խըն-չիրն է թողել անկատար, երկնքի դռների

նրա բարեխօսութեան առաջ միշտ բաց են:
 Եւ Սուսանը յուսով ու հանգստացած
 տուն էր վերադառնում, ուր նրան սպասում
 էր Բօղարը, որ կաղկանձելով փաթաթւում
 էր տիրուհու ոտներին: Սուսանը, հաւատա-
 ցած էր, որ որդին կը գայ, անպատճառ կը
 գայ, ի՞նչպէս կարող էր Տիրամայրը խարել
 նրան, նա այնպէս ժպտով, այնպէս քաղցր
 է նայում վերից, երբ Սուսանը մոմերը վա-
 ռում է եւ աղօթել սկսում: Ի՞նչպէս կարող
 էր նա չի լսել մի մօր աղաչանք, որ այնքան
 տառապել է, այնպէս տանջուել, այնքան
 լացել, մրմնջացել: Ի՞նչու պէտք է Տիրա-
 մէրը այնքան ցաւեր միայն նրա բաժին տայ.
 մէկ էլ ի՞նչ գժուար է նրա համար կատա-
 րել մի մօր այսքան աղաչանքը. որ նա կա-
 մենայ, որ նա մի քաղցր աչք ձգի, բաւա-
 կան է, մնացածը հեշտ է, Սուսանի որդին
 ինքն իրան կը գայ ողջ եւ առողջ:

Եւ ամիսներ ու տարիներ էին անցնում
 Սուսանի գլխով, որդին չը կար ու չը կար,
 բայց նա չէր յուսահատուում, Տիրամէրը
 ժպտում էր եւ նա հաւատացած էր, որ Սա-
 քօն կը գայ:

— Տիրամօր փէշիցն եմ բռնել, ասում
 էր նա յաճախ իր հարեւաներին, Տիրամօր

փէշիցն չորս տարի է, նա ինձ ամեն օր
 ժպտում է... Նա ինձ խոստանում է... Տի-
 րամօր ժպի՛տը...

Հարեւաները լսում էին եւ խորհրդաւոր
 ձեւով գլուխներն օրօրում կրկնելով՝
 — Խեղճ կին, խեղճ կին:

Սուսանը սպասում էր... նա յաճախ ե-
 րեւակայում էր այն օրը, այն վայրկեանը,
 երբ զաւակը կը գայ... Նախ բակի դուռը
 ճռուում է բարձր, յետոյ թրը՝ խկ, ծածկւում
 է... շունը, այս խելօք Բօղարը, վազում է
 կատաղած, բայց յանկարծ ձայնը կտրում է,
 չներն ախր չեն մոռանում տէրերին՝ այնպէս
 չէ, Բօղար, դու խօմ չե՞ս մոռացել Սաքո-
 իս, դառնում էր նա շանը. կենդանին նա-
 յում էր խելացի աչքերով եւ կարծես ուզում
 էր ասել, հա, ի հարկէ չեմ մոռացել: Երե-
 ւակայական պատկերը շարունակում էր,
 շունը լռում է, թաւալւում է գետնին, փա-
 թաթւում է նրա ոտներին, կաղկանձում ու-
 րախութիւնից: Ինքը՝ Սուսանը, այդ ժա-
 մանակ նստած է սրահում, դէ ծեր է, աչ-
 քերը լաւ չեն տեսնում, համ էր որդին փոխ-
 ուել է, քանի՛ տարի է... նայում է եւ չի
 ճանաչում. ահա նա մօտենում է, մօր ոտ-
 ները դողդողում են, փորձում է վերկենալ,

բայց չի կարողանում, բարձրանում է՝ ընկենում, վեր է կենում, դարձեալ ընկնում, առաջ է ձգւում բոլոր ուժով, ոյժ է դործ դընում եւ ձեռքերը տարածած փաթաթւում է նրա պարանոցով.

— Ա՛խ քոռանամ ես... դո՞ւ ես, Սաքօջան... դու ես... դէ հիմա թաղիր ինձ, եկա՞ր... ե՞րբ եկար... ախր ես մեղք եմ... Տիրամէրն ասաց կը գաս, եւ եկար, դէ հիմա թաղիր ինձ... եւ արձունքները թափում են եւ Սուսանը երջանիկ է...

Օրական մի քանի անգամ այս սիոնիկէ պատկերը գալիս է անցնում նրա աչքի առաջից. նա ինքն իրան տեսնում է գրկախառնուած որդու հետ, լալիս է եւ արցունքները զովացուցիչ են:

Եւ ի՞նչ լաւ է, լաւ է այդ բոլորը...

Մի ժամանակ նրա համար երդումներից գերագոյնը իր որդու արեւն էր, որդու զըլուխն էր. վաղուց է, որ նա այդ թողել է, այդ արեւը այժմ շատ է հեռու, շատ է թանկ, որպէս զի մայրը յանձն առնի հետութեամբ «բերան բերել» ամեն անգամ, այժմ նա երդում է որդու գալուստով.

— Որդուս գալուստը վկայ... եւ նա արտասանում այդ երեք բառը այնպիսի շեշ-

տով, այնպիսի հաւատով. այդ երդումը նըրա սրբութիւն սրբոցն է, նրա կեանքի սիւնն է, նրանով է ապրում, չնչում, հաւատում. նայում է դռանը եւ սպասում այն թրիսկոցին, որ նուիրական գալուստը պիտի աւետէ:

Տարիներն անցնում են տարիների յետեւց, խնձորենին ծաղկում է ու մերկանում, տարափոխիկ թռչունները գնում են ու գալիս, Սաքօն չը կայ, բայց Սուսանը շարունակում է աղօթել, շարունակում է հաւատալ ու երդուել.

— Որդուս գալուստը վկա՞յ...
Հարեւանները լսում են, գլուխներն օրօրում:

— Խե՞ղճ կին, խե՞ղճ կին:
Եւ Տիրամէրը ժամում ժպտում է, յուստուու, պայծառ ժպտով. Սուսանն իրաւունք ունի կրկնել՝

— Որդուս գալուստը վկա՞յ...

գ.

Այն գիշե՞րը... ա՞խ այս աշնանային գիշերները ինչո՞ւ իրանց խաւար ծալքերում բերում են միշտ այնքան սեւ, այնպէս անորոշ, խեղդող զգացմունք: Դրսից լսում

Է մանրամաղ անձրեւի կրկտոցը, եւ կտուր-
ներից ու պատերից կաթկաթում է ջուրը
անվերջ, յուսահատեցուցիչ միակերպու-
թեամբ՝ ճլը՝ փփ, ճլը՝ փ, ճլը՝ փ... դրսում,
մութ փողոցներում անց ու դարձը վաղուց
դադարել է. այդպիսի չար ժամին ո՞ր ա-
դամորդին դուրսը կը մնայ:

Սուսանն անքուն է դեռ. նա նստած է եւ
մտածում է իր Սաքօի մասին. ո՞ւր է նա
այժմ, ո՞ր չօլում, ո՞ր ձորում, ո՞ր այրի
մէջ, կամ ժայռի տակ կծկուած: Սարերում
այժմ ինչպէս ցուրտ է. նա էլ երեւի թրջը-
ւած է, կրակ չունի, ի՞նչպէս վառի, նրանք
կրակ չեն անում, այն թափառականները, որ
վառեն, լաւ չէ, ասում են... հիմա ի՞նչպէս
մրսում է իր Սաքօն, այսպիսի՛ դիշեր...

— Օ՛, քոռանամ ես, որդի, հոգիս
դուրս գայ քեզ համար. ո՞վ սուրբ Տէրամէր,
քե՛զ եմ ապաւինել, դու բարեխօս եղիր:

— Ո՞վ գիտէ, դուցէ Սաքօն սարերում
չէ, շարունակում է մտածել Սուսանը, դուցէ
հէնց գալիս է, չար գիշեր է, բայց նա կարող
է դալ, տղամարդ է, այն էլ սարերի տղա-
մարդ, որ ուզի, կը գայ:

Անցեալ օրը ինքը թափառական դնչու-
ին Փալ բացել տուեց, նա ասաց. «Սարերին

թառող արծիւը այս օրերս ցած կը սլանայ»:

— Յետո՞յ:

— Յետո՞յ... գնչուն նայեց իր եղուն-
դին, մնաց մտածկոտ, կմկմաց, յետո՞յ...
շարունակեց նա, յետոյ նորէն վեր կը բարձ-
րանայ:

Վերջին խօսքերը լաւ չէին, մտածում է
Սուսանը. «Սարերում թառող արծիւը ցած
կը սլանայ», այդ լաւ է, «յետոյ վեր կը
բարձրանայ», ի՞նչ կը լինէր, որ անիծուա-
ծը վերջին խօսքերը չասէր. ուրեմն Սաքօն
կը գայ, էլի կ'երթայ, բացատրում էր Սու-
սանը:

— Հա, հա, արի, արծիւս, արի՛, թառ-
լանս, ցած արի մէկ տեսնեմ, որ ողջ, առողջ
ես, մէկ համբուրեմ սիրուն ճակատ, մէկ
երեսս երեսիդ քսեմ, մէկ գլուխդ կրծքիս
սղմեմ, էս քոռացած աչքերովս մէկ կուշտ
կուշտ նայեմ քեզ, ու էլի գնա, թո՛ղ Տիրա-
մէրը քեզ պահի, որդի, թէկուզ սարերի վը-
րայ, ձորերի մէջ, դէ որ գնում ես, ես սե-
ւաւորս ի՞նչ կարող եմ անել, դու խօ արծիւ
ես, գնչուն ասաց, արծիւ բալա:

Դրսում շարունակում է քար լոռութիւ-
նը. չներն էլ չեն հաջում, նրանք անձրեւի
տակ տղկուած՝ քաշուել են զանազան ծակ ու

ծուկ մտել, ոտ ու գլուխ իրար խառնած,
կծիկ դարձած՝ մրափում են այս դէզի տակ,
այն դռան առաջ: Եւ անձրեւը շարունա-
կում է մաղուել, եւ ջրերի ձայնը լսում է
միակերպ, անվերջ ճլը՛փ, ճլը՛փ, ճլը՛փ...
Չար, վատ գիշեր է, բայց Սուսանն էլի ըս-
պասում է իր որդուն, գնչուն ասաց՝ «ար-
ծիւը ցած կը սլանայ, էլի վեր կը բարձրա-
նայ»...

— Թող ցած սլանայ եւ էլի վեր բարձ-
րանայ, գոնէ տեսնեմ թէ աղատ է ցաւից,
չոռից, գոնէ...

— Թրը՛խկ, թրը՛խկ, թրը՛խկ...

Բակի դուռն են թակում, Բօղարը հըռ-
փաց եւ նետուեց դէպի այն կողմը:

— Թրըխկ, թրըխկ...

Սուսանը ցնցուեց ու դողաց բոլոր մար-
մինով, բայց ինքն էլ չիմանալով ինչու, մի
վայրկեան մէխուած մնաց իր տեղում ան-
շարժ եւ ամբողջապէս լսողութիւն դարձած,
բերանաբաց, չնչակտուր. նա լսում էր, թէ
ինչպէս չունը կատաղաբար չանգուստ է դու-
ռը եւ ինչպէս դրսից խփում են.

— Թրը՛խկ, թրը՛խկ...

Այս անգամ նա վեր թուաւ տեղից, երե-
րալով վազեց տան դուռը բանալու, այդ սո-

վորական գործն այժմ նրան չի յաջողւում,
մի բան է պատահել վակին եւ սողնակը յետ
չի գնում. նա քաշքչում է, թափ է տալիս,
ի դուր, իսկ չունը դրսում հաջում է կատա-
ղաբար եւ դուռը թակում են դրսից.

— Թրը՛խկ, թրը՛խկ...

Վերջապէս նա դուռը բացեց եւ դուրս ե-
կաւ խրճիթից, նա բակումն է, անձրեւը
թափում է գլխին, բայց նա դողդողալով,
հեւալով, ցեխերի միջից երերալով, տնքա-
լով վազում է դէպի բակի դուռը. սաստիկ
շտապելուց նրա ոտները խառնում են զգես-
տի ծալքերին եւ երեսի վրայ ընկնում է ցե-
խերի մէջ. թրջում է իսպառ, այդ էլ նրա
փոյթը չէ, նա վեր է կենում եւ դարձեալ
վազում. ահա եւ բակի դուռը:

— Սուս, սուս, Բօղար. նա՛ է, նա է, լըլ
կուս դու, սո՛ւս, թող որ դուռը բանամ: Եւ
դարձեալ դուռը չի բացում, ձեռները դո-
ղում են, սիրտը թոթուում է՝ ասես կրծքից
դուրս փախչելու համար, վերջապէս ճոճը-
ռալով դուռը բացուեց, այժմ խաւարի մէջ
նրա առաջ կանգնած է մի մութ մարդկային
ստուեր, հազիւ հազ նկատելի:

— Ո՞վ է... ո՞վ ես դու...

— Ես... ես Աստուծու մարդ եմ, ...

անվնաս ու անպէտք. դողում եմ ցրտից, թրջուած եմ, հեռուից եմ գալ. . . ուշացայ, անձրեւի տակ մնացի, մութը վրայ հասաւ սարերում, նոր հասայ, ես անպէտք մարդ եմ. Աստծու արարած. . . Տե՛ս, ես դողում եմ, մի տեղ, մի կրակ, մի ճար, Տիրամօ՛ր սիրուն. . .

— Տիրամօր սիրուն, կրկնեց Սուսանը մեքենայաբար, մի վայրկեան լոեց, յուսահատ զայրոյթով կրծոտեց չրթունքները մըր մընջալով.

— Նա չի՛, նա չի՛, օ՛, անողորմ մարդ:

— Չար գիշեր է, շարունակեց անծանօթը, խեղճին ո՛վ տեղ կը տայ, քանի՛ դուռ եմ թակել, բացող չը կայ, վախենում են, ես անպէտք մարդ եմ, էլի վախենում են, դէ ես էլ Աստծու ստեղծածն եմ:

— Աստծու ստեղծածը. հա, աղամորդիներն Աստծու ստեղծածներն են, ասաց Սուսանը, բայց մտածում էր ուրիշ բան եւ քիչ մնաց ասէր՝ անողորմ, անաստուած մարդ, դու անպէտք ես, բայց ոչ անվնաս, տե՛ս թէ ինձ ինչքան վնաս տուիր, սրտիս թելը կտրուեց, ոտներս դողում են, ես թուլանում, ես մեռնում եմ. . . ո՞ւմ էի սպասում, ով դուրս եկաւ. մըսո՞ւմ ես, ջհանդա-

մը թէ մըսում ես. թրջուած ես, էն լա՛ւ է՛ որ թրջուած ես. քո տեղն է, դու ինձ տան-ջեցիր, սարերում մէկը կայ, քեղնից լաւ է, նա էլ է թրջուած, նա էլ է մըսում եւ նա էս չար ժամին ո՛չ ոքի դուռը չի թակի: Սուսանը մտածում էր այս բոլորը, ուզում էր ասել բարձրածայն, ճշալով, ուզում էր դուռն էլ շրխկալով ծամբորդի երեսին, թողնել, որ նա դողայ դըսում, բայց չը կարողացաւ, մտածածը չասուեց, ծնօտները փակուեցին, մի առժամանակ մնաց լուռ:

— Ղարիբի տէր եմ, դու էլ ղարիբ ես, ներս արի, ասաց նա վերջապէս:

— Տիրամէրը հասնի ղարիբին:

— Հա՛, Տիրամէրը հասնի ղարիբին. սուս, Բօղար, սուս, մի զայրացիր, ի՞նչ անենք, Աստծու ստեղծածն է, խեղճ է, անձար է. Տիրամէր, բոլոր անձարներին, բոլոր տառապեալներին հասիր, յետոյ նրան, մըմնջում էր պառաւը ցեխերի միջից դանդաղութեամբ քայլելով եւ օտարականը հետեւում էր նրան:

Ներս մտան. ձիթէ ձրագը պլալում էր. պառաւը դարձաւ, նայեց օտարականին: Ծեր մարդ էր. սպիտակ մաղերով ու միրու-

քով. Խղճուկ զգեստները ողջ թրջուած՝ ծը-
լանքներից ջուրը կաթկաթում էր: Նա դո-
դում էր ցրտից ամբողջ մարմնով: Նրա մի
ուսից կախուած էր մի պարկ, կիսով չափ լի
հացով, իսկ միւս ուսից մի երկար բան, որ
սաղի էր նմանում: Սուսանը նայում էր ու-
շադրութեամբ.

— Աշո՞ւղ ես, հարցրեց նա:

— Դէ, մէրիկ, աշուղ չեմ, այլ գզրար,
ես թափառում եմ գիւղից գիւղ, դոնից դուռ
գզում եմ բուրդ ու բամբակ ով տալիս է. այս
էլ աշուղութիւն է, մէրիկ, տես ես զարկում
եմ այս լարին, նա ցոյց տուեց իր գործի-
քը. Եւ նրա հաստ լարը լաց է լինում իմ
հարուածների տակ, եւ լալով բուրդ է գը-
զում, այդ լացի գնով, սեւ օրով ես ապրում
եմ. լոնչ անեմ, մէրիկ, ջիւանները արնա-
կուու եղան մեր վէրան աշխարհում, ես եմ
մնացել, ծեր օրերիս, սեւ օրերիս դռնէ դուռ
թափառական: Անպէտք եմ, մէրիկ, ան-
պէտք, Աստուած հոգիս էլ չի առնում, որ
աղատուեմ:

— Սուս, սուս, ողորմելի, Աստծու դէմ
մի խօսիր. Նրա ստեղծած արարածների մէջ
անպէտքը չը կայ. Երբ նա կամեցել է քեզ
աշխարհ ձգել, լուռ, պապանձուիր ու քա-

շիր ճակատագիրդ: Դէ, հան այդ պարկի,
դէն դիր մէջքիդ գործիքները, լարն ու աղե-
ղը, մօտեցիր թոնրին, տաքացիր, շորերդ
չորացրու: Անձարին մի ճար միշտ կը լի-
նի, Տիրամէրը վկայ, թող նա հասնի բոլոր
դարիբ-դուրբաթներին, յետոյ նրան, նրան,
էն սարերի արծւին.

«Ե՞րբ կը գա՞յ ։ ։ ։» վերջին խօսքերը նա
արտասանեց ինքն իրան:

— Շէն մնաս, մէ՛րիկ, շէն մնաս, թող
Աստուած քո սրտի բոլոր ուխտը կատարի,
օջաղիցդ՝ կրակ, տաշտիցդ՝ հացն անպակաս
անի:

Օտարականը վար գրեց իր պարկը, ցած-
քերեց ուսից գործիքները, մօտեցաւ թոն-
րին, կծկուեց ու մնջեց: Դրսում անձրեւը
շարունակում էր, ջուրը կաթկթում էր միա-
կերպ, անվերջ ճլըփոցով, խաւար էր ու
ցուրտ. Սուսանն անքուն՝ դեռ երկար ժա-
մանակ շարունակում էր մտածել նրա մա-
սին, որ սարերում, այրերում մրսում դո-
դում է այս չար գիշերին:

— Դու հասնես, Տիրամէր, դու բարե-
խօս լինիս, մրմնջում էր նա, եւ սիրու ճըլ-
մըլում էր ցաւից:

Դ.

Լուսացաւ. անձրեւը դադարեց. բաց-
ուեց աշնանային մի ցուրտ ու պայծառ օր:
Մարդիկ դուրս սողացին բնակարաններից:
Սուսանի հիւրը նոյնպէս պատրաստում էր
դուրս ընկնել իր գիշերային ապաստարա-
նից: Նա դանդաղութեամբ վերցրեց իր
պարկը, կախեց ուսից, առաւ նաեւ բուրդ
գզելու գործիքը եւ դարձաւ Սուսանին.

— Շէն մնաս, մէրիկ, օջաղդ վառ մնայ:

— Գնո՞ւմ ես:

— Հա, գնում եմ ցնցոտիներս ու ան-
պէտք գլուխս երկրէ երկիր, գիւղէ գիւղ,
դոնէ դուռ քաշ տալու, մինչեւ մի տեղ շան-
սատակ լինեմ ու մաշուած, տրորուած ոս-
կորներս հանդիստ առնեն: Եւ մինչ օտարա-
կանը խօսում էր, պառաւը մտածում էր,
տեսնես սա չի^o տեսել նրան, էն սարերի ար-
ծուին:

— Լսիր. դու շա՞տ ես ման եկել:

— Շա՞տ, խիստ շատ:

— Սարերում, ձորերում:

— Սարերում, ձորերում:

Պառաւը գլուխը քաշ ձդեց ու լոեց:

— Ինչո՞ւ ես հարցնում, մէրիկ:
— Է՛հ, հէնց էնպէս, տեսնում եմ, որ
շատ տանջուած ես:

— Հա՛, մէրիկ, տանջանքը իմ եղբայրն
է, մենք միասին ծնուեցինք, այժմ էլ անբա-
ժան ենք:

— Տանջանքը քո եղբայրն է, էէ՛, խեղճ
մարդ, ես էլ նրա պէս մի քոյր ունեմ, ա-
սում էր պառաւն ինքն իրան: Նա մտած-
կոտ էր, կարծես ե՛ւ ուզում էր մի բան հար-
ցընել ե՛ւ վախենում էր պատասխանից: Օ-
տարականը երեւի այդ նկատում էր եւ ըս-
պասում:

— Լսի՛ր, դու սարերում արծիւ տեսե՞լ
ես, հարցըց Սուսանը: Նրան թուաց, որ
այս օտարականն էլ պիտի հասկանայ, որ
արծիւը նա՛ է, Սաքօն է: Տիրեց լոռութիւն,
նրանք նայում էին իրար ուշադրութեամբ,
օտարականը չը հասկացաւ տարօրինակ հար-
ցը. Սուսանն այդ նկատեց եւ կարծես ար-
դարանալու համար շարունակեց.

— Գնչուն ասաց՝ «Սարերի արծիւը ցած
կը սլանայ, էլի վեր կը բարձրանայ», սպա-
սեցի՝ ցած չը սլացաւ, ինչո՞ւ:

Օտարականն այժմ նայում էր աւելի

զարմացած, հարցն աւելի քան օտարութի
էր:

— Բան չեմ հասկանում, մէրիկ, ասաց
նա, ես արծիւ չեմ տեսել, սեւ օր շատ տե-
սել եմ, խեղճ ու կրակ գդրար եմ, քո յարկի
տակ աղ ու հաց կերայ, թէ բուրդ ունես,
բեր գդեմ, գնամ իմ ցաւը հոգամ:

Պառաւի աչքերը փայլեցին. նրա դլիսով
կարծես մի լուսաւոր միտք անցաւ. որդու
անկողինը, այդ ի՞նչպէս է, որ նա մոռա-
ցել է:

— Բուրդ, հա՛, բուրդ ունեմ, ի՞նչ լաւ
ասացիր, ողորմի հօրդ, գդելու բուրդ, որ
փափուկ լինի, էնպէս չէ՞ որ գդեն, բուրդը
փափուկ է լինում, անկողինն էլ լաւ. մա-
տերովս եմ քրքրել, բայց այդ քիչ է:

Եւ նա ծալքից ցած բերեց որդու անկո-
ղինը, քանդեց, բուրդը դուրս թափեց գըղ-
րարի առաջ.

— Ա՛յ, գդիր, զարկ, լաւ զարկ լարիդ,
թող փափիի:

Օտարականը գործիքը ցած բերեց ու-
սից, հացի պարկն էլ մի կողմ դրեց, ծունկ
չոքեց եւ սկսեց զարկել իր գործիքի հաստ
լարին: Բուրդը գդում էր ամպերի պէս
բուլա քուլա բարձրանում, իսկ լարն ասես

լալիս, հեծում էր նրա հարուածների տակ:
— Լա՛ց, լաց ընկե՛ր, մոմոռում էր նա,
ցաւով ենք ծնւում, լացով վաստակում, ա-
րիւնով գերեզման մտնում. լա՛ց, լաց իմ
խեղճ ընկեր. մեր աշխարհում ո՞վ չի լալիս,
սար ու քարն էլ է տնքում: Եւ լարը հեծե-
ծում էր եւ բուրդը գդում բարդ, բարդ
բարձրանում:

Սուսանը լոռութեամբ եւ հիացմունքով
նայում էր: Գործը շարունակում էր, դըղ-
րարն այս անդամ ե՛ւ զարկում էր ե՛ւ եր-
գում, կարծես իր լարի հետ մէկտեղ հեծե-
ծում էր ու լալիս. նա ասում էր.

«Գարահիսար լերան կրծքին նա էլ ընկաւ
վիրաւոր,

Կուծքը պատռած, սիրտը խոցուած չար
թշնամու գնդակով.

Ճէռուտ լերան լերի կատարից վար սլացիր
սեւ արծիւ,

Թեւերդ բաց, լայն թեւերդ ու ջիւանին հով
արա:

Խոցուած սրտից մուգ արիւնը կաթիւ կաթիւ
կը ծորայ,

Ա՛խ ջիւանի կեանքն է հոսում ցաւոտ կրծքի
լայն վէրքից.

Ժէռոտ լերան լերկ կատարից վար սլացիր
սեւ արծիւ,
թեւերդ բաց, լայն թեւերդ ու ջիւանին հով
արա»:

Սուսանը լսում էր սկզբում ուշադրու-
թեամբ, բայց կամաց-կամաց նա կարծես մի
մեծ սարսափի առաջ աչքերը չոեց ու դու-
նատուեց.

— Այդ ի՞նչ ես երգում... ա'յ մարդ.

Օտարականը գլուխը բարձրացրեց. գոր
ծը թողեց, նայում էր, զարմացած այս կը-
նոջ յուղմունքի վրայ եւ կարծես խօսք չէր
գտնում պատասխանելու

— Սուս, սուս, անողորմ, շարունակեց
Սուսանը, թող այդ սեւ արծուի երգը, ես
սեւը չեմ ուզում, գնչուն այդպէս չասաց,
վեր կաց շուտով հեռացիր, Աստուած քեզ
հետ, երգիր քո սեւ արծիւն ուրիշ տեղ, ես
վախենում եմ քեզանից, վախենում եմ քո
երգից. ես դողում եմ քո շրթունքներից,
նրանց շարժումներից, փակիր բերանդ, ա-
ղաչում եմ, քեզանից կախուած չէ՞՝ պա-
պանձուիր, թող սեւ արծիւը սարի կատա-
րին մնայ... ջիւա՞ն... արիւնաքա՞մ...
Տիրամէ՛ր, Տիրամէ՛ր, ես վախենում եմ այս

ողորմելուց, դու ի՞նչ կ'ասես, եաման Տի-
րամէր... գնա, գնա:

Օտարականը շփոթուած՝ շարունակում
էր նայել.

— Ինչու, մէրիկ, ի՞նչ արեցի, չէ՞ դու
ասացիր որ բուրդ գզեմ, ի՞նչ վատ բան ա-
սացի, մոմուում եմ ինձ համար: Սուսանը
լսել չէր ուզում:

— Գնա', գնա', գնա': ի սէր Աստուածոյ
գնա', դու բէխէր մարդ ես, քո բերանից մահ
է թափուում, ես դողում եմ, գնա'...

Օտարականն այս անդամ վերցրեց գոր-
ծիքն ու պարկը, ձգեց ուսերին եւ վճռական
քայլուածքով դուրս եկաւ խրճիթից: Նա
արդէն բակումն էր, արդէն մօտ էր դուռը
բանալու եւ փողոց դուրս գալու, երբ Սու-
սանը վաղէ վաղ նրան հասաւ, կախուեց փէ-
շից, աչքերը չոած, դողդողալով ու չնչա-
կտուր ճչաց.

— Կա'ց, կա'ց, չեմ կարող, չեմ կարող,
ասա, աղաչում եմ ասա' ինձ, ո՞վ է այն
լեռնալանջի վիրաւորը.

— Տէր Աստուած, այդ հին բան է, շատ
հին. ամենքը գիտեն, հին երդ է, ամենքն են
երդում:

— Հի՞ն է... Սուսանը կարծես մի փոքր

հանգստացաւ, որ «բանը» այնպէս հին է:
— Հին է, մէրիկ, քանի՛ տարի է ինչ
երգում են ամեն տեղ:

— Ո՞վ է, ո՞վ է այն ջիւան վիրաւորը.
— Չը գիտե՞ս, արարաշխարհը գիտէ
Գարահիսարի բանը, եաման բան էր. վէրան
մնայ Գարահիսարը, քանի՛ սն էին...:

— Ո՞վ է ջիւանը, քեզ ասում եմ, անո-
ղո՞րմ...:

Մի՞թէ չը գիտես, Սաքօն է:

— Սաքօ՞ն... ու՛ռւհ, անաստուած, նը
զովք քեզ. այդ ի՞նչ ասիր, նզովք քո շըր-
թունքներին, քո եկած ճանապարհին, քո
ծննդին... սուտ է, սուտ է, Տիրամէրը կայ,
աղօթքս, մոմերը, սուտ ես խօսում, չար
սատանան ես դու, դուրս, դուրս, դուրս...
բայց չէ, կաց, կա՛ց, աղաչում եմ սուտ էր,
այնպէս չէ՞ դու սուտ ասացիր... լո՞ւռ է,
լո՞ւռ է, անողորմը, դէ դուրս, դուրս, բէ-
խէր ոտքդ կոտրուէր, դու եկել ես ինձ տան-
ջելու, դեւերի բաժին դառնայ քո հոգին,
դու սուտ ես ասում, դո՞ւրս...

Օտարականը կարծելով՝ որ կինը գըժ-
ուեց, գլուխը կորցրած դուրս փախաւ փողոց
առանց յետ նայելու, իսկ Սուսանը շարու-
նակում էր ճաշլ եւ երկինք աղաղակել։ Երբ

նրա ձայնի վրայ հարեւանները չորս կողմից
հաւաքուեցին, Սուսանը դեռ վազվզում էր
բակում ինչագարի պէս, կուրծքը՝ բաց ա-
րած, չորացած ստինքները բռնած ցոյց էր
տալիս երկնքին.

— Նայիր վերից կապուտուր, նայիր էս
չորացած աղբիւրներին, քանիսին կերակրե-
ցի սրանցով, քանիսին իմ միս ու արիւնը
տուի, մեծացրի, էլ չը կան, չը կան, ոչ մէկը
չը կայ... Մէկ Սաքօն է, Սաքօ՞ն, էն սարե-
րի արծիւը, էն էլ... ի՞նչ ասաց անիրաւը...
ճի՞շտ է, դու չը տեսա՞ր... Սաքօ՞ն, սարը
մթնե՞ց, արծիւը սեւ կապեց, ճի՞շտ է...
բա դու ի՞նչ ասիր, ի՞նչ արիր, մայր եմ, չէ
մայր էի, էլ մայր չեմ, ութը ծնո՞ւնդ, ու-
թը երկունք, հազար ցաւ, հազար խոց սեւա-
ւոր սրտիս... ու՛ռւհ... Եւ ան ջարդուած
ընկաւ ինձորենու տակ, ծեր գլուխը կախ-
ուեց կրծքին, արցունքը թափուեց, թափ-
ուեց, իսկ վերեւից ծառի վերջին, գեղնած
տերեւները մէկիկ մէկիկ մաղում էին նը-
րա գլխին եւ ճիւղերը մերկ ու դողդովուն օ-
րօրում էին աշնանային սառն քամու առաջ։

Ե.

Սուսանը հիւանդ է, Սուսանը մեռնում է...

— Հին բան է որդի, հին բան, ասում էր նրա գլխավերեւը նստած ծերունի քահանան, որ եկել էր հիւանդին վերջին մխիթարութիւնն ասելու, վերջին հաղորդութիւնը տալու:

— Հի՞ն բան է, կրկնում էր մեռնողը, Տիրամէրն էլ գիտէ՞ր, տէրտէր ջան:

— Աշարհ գիտէր, որդի, քեզանից բացի ամենքը գիտէին:

Դո՞ւ էլ գիտէիր:

— Դէ որդի, թէ քեզ էլ ասէինք ի՞նչ օգուտ, ցաւդ դրանով չէր թեթեւանայ. այնքան մայրեր լաց եղան, այնքան սրտեր փըշը ուեցին, այնքան զլուխներ սեւ կապեցին, է՛հ, ի՞նչ անենք, մեր ճակատագիրն է:

— Մեր ճակատագիրն է, որ էսպէս արիւն-արցունք քամենք, մղկտա՞նք... թող առաջուց ասէիր ինձ, թէ մեր ճակատագիրն է. քանի՛ տարի է, մաշեցի. ժամի դուռը գընալ գալով, մատներս տրորեցի մոմ վառելով: Տիրամէրը ժպտում էր, ժպտում, խեկ

դու հիմա ես ասում մեր ճակատագիրն է:

— Դէ ի՞նչ ասէի, որդի, աղօթում էիր, Դրանից ի՞նչ վնաս, աղօթքը սուրբ բան է, ես ի՞նչպէս քո եւ Աստծու մէջ ընկնէի. Երեւի նա ուզում էր, որ դու չիմանաս «Էն բանը»:

Տիրամէրը խարե՛ց, նա խօմ կարո՞ղ էր երազով ինձ յայտնել, կը գար երազիս ու կ'ասէր՝ «Սեւ կապիր Սուսան, սեւ կապիր, արեւդ խաւարեց, օջաղդ մարե՛ց», բայց նա այդ չասաց, նա խարե՛ց, ժպտաց ու խարե՛ց:

— Օօ՛, մի ասա՛ այդ, որդի ինձ, ամենքս էր մահկանացու ենք, հանդերձեալ կեանք կայ, հաշիւ ու համար ունենք տալու, դու էլ, դէ տարիքդ անցած է, ճաշակուիր որդի, ասա՞ մեղայ Աստուծոյ:

Պառաւը գլուխը տարուբերեց որպէս մերժման անհամաձայնութեան նշան.

— Զէ՛, չէ՛, Տիրամէրը խարե՛ց, ես խոռվ եմ ժամից, պատարագից, Տիրամօրից, երկնքից, թո՞ղ այսուհետեւ դժոխքի բոցերին բաժին դառնամ:

— Մի ասիր այդ, որդի, մի՛ ասիր, հոգուդ մեղք մի անիր:

— Ես հոգի չունեմ, իմ հոգին մոխիր է դարձած դարդի կրակից :

Տասներորդ անդամն էր քահանան կը ըստ նում իր առաջարկութիւնը, տասներորդ անդամը նա ձեռքի հաղորդութիւնը մօտեցնում էր նրա շրթունքներին եւ Սուսանը միշտ մերժում էր, նա խռով էր Աստծուց, Տիրամօրից... արդէն ամիսներ էր, որ նա էլ եկեղեցի չէր գնացել. սարսափելի դոյժից յետոյ նա մի անդամ, մի վերջին անդամ երերալով գնաց, կանգնեց Տիրամօր պատկերի առաջ, առանց մոմի, առանց աղօթքի եւ բոլոր ձայնով ճաց.

— Դու ինձ խարեցիր, Տիրամէ՛ր:

Ժամաւորները յետ նայեցին, ամենքը կարծեցին թէ նա խելազար է: Սուսանն առանց ուշք դարձնելու իր շուրջը, դուրս եկաւ ժամից, գնաց, փակուեց իր տանը, մենակ ու սգաւոր:

Զատկին քահանան եկաւ տունն օրհնելու, միիթարութիւն խօսելու, մերժեց այժմ էլ հիւանդընկած անկողնում, նա մեռնում է եւ չի ուզում հաղորդուել: Հարեւանուհիները սոսկում են այդ անաստուածութիւնից, նրանք հաւաքուած՝ համոզում, ինդրում, աղաչում են, ի զուր, Սուսանն

անդրդուելի է, ծնօտները փակ եւ դէմքը վճռական:

— Զէ, չեմ ուզում, դիտմամբ չեմ ուզում, որ հոգիս սատանայի բաժին դառնայ, ես կը կանգնեմ Աստծու գահի առաջ եւ Տիրամօրից զանգատ կ'անեմ եւ յետոյ այնպիսի բաներ կ'ասեմ, այնպիսի բանե՛ր: Ա՛յ էս չորացած ստինքներս ցոյց կը տամ ու կ'ասեմ, ի՞նչ արիր, Տէ՛ր, մեռանք, փոթոթուեցինք վարում, ճշացինք, աղերսեցինք, ձայներս աստղերին հասաւ եւ դու մեղ չը հասար. հիմա տար ինձ կպրի կարասը, ես ի՞նչ, ես մի կտոր բոց եմ, ձգիր ինձ կը-րակի մէջ, բոցը բոցին ի՞նչ կ'անի. հա՛, կպրի կարասը, ես այնտեղ կը պլպլամ, կը վառուեմ ու կ'սպասեմ, որ ինձ նման սեւաւոր բոլոր մայրերը բոց դառած հասնեն ինձ եւ մենք ամենքս միասին հրդեհ կազմենք, այնպիսի հրդեհ, որպիսին վարումն է, վէրան, սեւ վաթանում, թող երկինքն էլ վառուի նրա պէս, թող երկինք էլ մոխիր դառնայ, տար, տար ինձ կպրի կարասը, ես բոց եմ, մի կտոր կը ակ:

— Որդի, աղաչում եմ, առաջ լացակամած քահանան, այդ ի՞նչ ես ասում, տես, էս ծեր տեղովս ես քեզ աղերսում եմ, մի՛

ասիր այդ, քեզ համար ես էլ պատասխանատու եմ Աստծու առաջ:

— Պատասխանատո՞ւ ես, դու էլ ասա Տիրամէրը խաբե՛ց. մայր էր, սիրտ պիտի ունենար, բայց խաբեց. ինքը երջանիկ է, ինքը զաւակը կրծքին սղմած ունի, իսկ ուրիշն խաբե՛ց...

— Տիրամէ՛րը:

— Հա՛ Տիրամէրը:

— Նայիր այստեղ:

Քահանան ցոյց տուեց իր Աւետարանը, նրա երեսի խաչելութիւնը: Խաչուած Քրիստոսի ոտների տակ սգում էր Աստուածածինը մի խուրձ սրեր միխուած սրտում:

— Ճանաչո՞ւմ ես, շարունակեց քահանան ամտը դնելով Աստուածածնի վրայ, սա էլ է Տիրամէր:

Պառաւը նայում էր աչքերը լայն, բերանը բաց, զարմացած:

— Նայիր, նայիր, երկար նայիր, ասում էր քահանան, դու միայն երջանիկ Տիրամէրն ես տեսել, տես եւ այս սգաւոր, այս գժբաղդ մայրը: Պառաւը ձգուեց առաջ շըն չակտուր, դողդոջուն ձեռքերը մեկնեց եւ բռնեց Աւետարանը, մօտեցրեց աչքերին:

— Տես, քանի՛ սուր է մտել սիրտը, չէ՞ այն էլ նրա որդին է խաչուած վերեւում:

— Հա՛, հա, նրա Որդին է խաչուած:

— Նա մեռնում է աշխարհի համար, մեր բոլորի համար:

— Նա մեռնում է մեր բոլորի համար... իսկ իմ Սաքօ՞ն...

— Սաքօն, որդի, է՛հ, նա էլ մեր սեւ ու վէրան աշխարհի... Այդպէս է որդի, մայրերը ծնում են երկունքով, պահում են ցաւերով, մարդակեր աշխարհը տանում է, տանում, ի՞նչ անենք:

— Մայրերը ծնում են երկունքով, պահում են ցաւերով ու աշխարհը տանում է, հա, հա. տանում է անողորմ աշխարհը:

— Սաքօն էլ գնաց, ուր շատերն գնացել են նրանից առաջ, եւ ուր շատերն էլ կ'երթան նրանից յետոյ, ի՞նչ անենք:

— Սաքօն էլ գնաց, ուր սա՞ է գնացէլ, հա, տէրտէր, էս խաչի վրայ Մեռնո՞ղը:

— Հա՛: որդի, նոյն ճանապարհով, աշխարհի համար:

— Մեղայ Աստուծու, մեղայ Աստուծու ես մեղաւոր եմ. պառաւի ձայնը կերկերաց,

արցունքները թափուեցին, նա Աւետարանը
սղմեց շրթունքներին՝ մրմնջալով,
— Խեղճ մայրեր, խեղճ մայրեր...



Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԿՈՅՐԸ

(Գիւղական յիշատակներ)

Խիտ կանաչներով պատաժ բուներէն վեր
բարձրացող ծառերուն հսկայ ճիւղերը կը
տատանէին մութին մէջ՝ երերուն ստուեր-
ներ յօրինելով։ Ամառնային ծաղիկներու
կծու ու ծանր հոտ մը կը տարածուէր հան-
դարս օդին մէջ՝ գինովցնող բուրումներով։
Սեւ լոռութեան մէջ մեքենաբար կը լսուէր
միջատի մը բղղիւնը որ երբեմն կը մոռցուէր
նոյն խսկ իր միօրինակութեանը մէջ։ Եւ
հեռուէն շունի մը ձայնը կուգար, որ խեղ-
ճուկ, հիւանդ հաչիւնով մը կուլար։

մօտենար: Զայնը հիանալի էր. առանց ճի-
դի, եղանակը կը հոսէր, զողղղալով, ա-
նուշ ելեւէջներով։ Մէկէն կը բարձրանար,
դիւթիչ, ուժեղ, եւ ահա կ'իջնէր նորէն, կը
մարէր՝ իրը թէ ճնշուած կուրծքէ մը կ'եւ-
լէր։

Կամաց կամաց, երգին ու գիշերուան
աղղեցութեանը տակ գինով՝ կը թուէր ին-
ծի որ աներեւոյթ պարիկներ էին որ օդին
մէջ կ'երգէին, մինչ ձայնին երազուն անու-
շութիւնը կարծես կ'հաստատէր պատրանքս։

Քիչ մը ետքը՝ ձայնը դադրեցաւ, եւ մօ-
տակայ մարդերուն մէջէն դանդաղ խըր-
տուք մը լսուեցաւ։

Ամէնքս ալ, լուռ, անշարժ՝ ընկողմա-
նած էինք խոտերուն վրայ, միտքերնիս տար
բեր մտածումներու մէջ թափառուն։

Հիմա կը հասկնայի որ այն ծառերուն
ներքեւ մարդկային կուրծք մը կ'ուռէր յու-
զումներով։

Մութի ծալքերով ու անհամար ստուեր-
ներով շրջանակուած՝ անկարելի էր տեսնել
քայլ մը անդին, բայց արդէն թեթեւ ոտնա-
ձայն մը մեղի կը մօտենար։

Չվախցանք. տանը վարձւորներէն մէկը
ըլլալու էր՝ պարտէղին մէջ մնացած. բայց

նոյն վայրկեանին իսկ երեսիս շունչ մը զգա-
ցի, եւ ծանօթ ձայն մը կ'ըսէր ինծի։

— Կ'աղաչեմ, ո՞ւր եմ։

Անմիջապէս հասկցայ. կոյրն էր։

Դեռատի աղջիկ մըն էր՝ սիրուն, խար-
տեաշ՝ որ հօրը հետ մինակ կ'ապրէր մեր
տանը մէկ սենեակը. կոյր էր, բայց գոց աչ-
քերը պատճառ մը եղած չէին աւրելու դէմ-
քին ամբողջ հրապոյրը, ցաւոտ հրապոյր մը։
Քովս նստաւ եղեամէն թրջուած խոտերուն
վրայ։

— Դո՞ւն էիր երգողը, ըսի կամաց ձայ-
նով մը, իրը թէ վախնայի խանդարել շուրջն
ծանրացող լուռթիւնը։

— Այո՛, ըսաւ, եւ պահ մը ետքը աւել-
ցուց. օ՛հ, խենթեցե՛ր էի այս գիշեր, յի-
շատակներէս չարչարուած՝ պարտէղ փա-
խայ, եւ՝ մոռնալով ամէն բան՝ երգեի, —
հիմա չեմ գիտեր, ո՞ւր եմ խարխափելով
հասայ հոս։

Միշտ հետաքրքիր եղած էի գիտնալ
խեղճ աղջկան անցեալը. առիթը չուզեցի
փախցնել, եւ հարցուցի։

— Ի՞նչ յիշատակներէ յուզուած էիք։

— Վա՛ղը, ըսաւ ծանր ծանր, եղօրս
մահուան տարեղարձն է։

— Եղբօ՞րդ . . . :

— Ա՛խ, հիմա մի՛ հարցներ, պատասխանեց, վաղն առտու կը պատմեմ քեղի:

Գիշերը բաւական յառաջացեր էր, տուն դարձանք: — Անհանգիստ անցուցի մնացած ժամերը. եւ դեռ բոլորովին չէր լուսցեր, երբ ելայ: Կողմնակի պատուհանէ մը կը տեսնուէր ընդարձակ դաշտ մը որ կը վերջանար լեռներու շարքով մը: Հեռուն, միայնակ շոճի մը իր հաստ ճիւղերը կը տարածէր: Դեռ գիւղը կը քնանար: Հեռուէն բոժոժներու հնչուն ձայն մը կուղար. գիւղացիներ էին որոնք ծիերու վրայ ամաններով կաթ բեռցած՝ կանուխէն մօտակայ տեղերը կը տանէին: Քիչ մը ետքը, աքաղաղները խօսիլ սկսան, անոնց խառնուեցան ոչխարներուն մայիւնը եւ հորթերուն բառաշիւնը:

Վարը, տան տիրուհին արթնցած էր արդէն եւ կովու մը ետեւէն կ'երթար՝ խթանով մը զայն դիմացի դաշտը քշելով: Վար իշայ, տասը վայրկեանէն ամբողջ գիւղը արթընցած էր: Հոսկէ մարդ մը կ'երթար՝ մշակի դործիքները ուսերուն վրայ առած, հոնկէ աղջիկ մը կ'երեւար որ կաթ կը բերէր: Լեռներու երկու ծայրերուն մէջտեղը

խտացած գորշագոյն ամպերը հետզհետէ կը ճերմկնային, կը վարդագունէին. հորիզոնին վրայ ցըռւած բոլոր ամպի պատառները դէպի հոն կը վաղէին: Հինգ վայրկեան ետքը, թեւ թեւի կը քալէինք թարմ խոտերուն վրայ:

Հօտերը արածելու կը հանէին, ոչխարներուն մէջէն կ'երթայինք ծծելով մաքուր օդը, որուն մէջ վայրի ծաղիկներուն հոտը խառնուած մեղրի համ ունէր:

Եղեամէն թրջուած խոտերը մեր ոտքերուն տակ ճնշուելով՝ իրենց ներքեւ պահուած մանուշակներուն հոտը օդին մէջ կը տարածուէր:

Եկեղեցին զանդակը տարտամօրէն կը զօղանչէր, հեռուն այծերը խենթի պէս կը ցատկուտէին թաւուտներուն մէջ:

Ծառի մը տակ նստանք, եւ մինչդեռ աչքս մեր առջեւ փոռուող Մարմարային կապոյտին մէջ կը մոլորէր, կոյրն ինծի իր պատմութիւնը պատմեց:

Այն ատեն իմացայ որ քանի մը տարի առաջ եղբօրը հետ երջանիկ կ'ապրի եղեր, երբ ծաղկախտի համաճարակի մը միջոցին՝ եղբայրը կը վարակուի: Զինքը հեռու կը պահեն եղբօրմէն, եւ հայրը մինակ կը հըս-

կէր զաւկին վրայ: Մայրը մեռած էր արդէն:

Իրիկուն մը, չղիմանալով, հակառակ արգելքին, կամաց կամաց եղբօրը սենեակը կ'իջնէ, հազար վարանումներով, ու վախերով, չէ՛թէ իր անձին համար, այլ այն ահուելի անակնկալին՝ զոր պիտի ունենար սենեակին անկիւնը եղբայրը պառկած տեսնելով:

Կը յաջողի եղբօրը սենեակը սպրդիլ, մինչդեռ հայրը՝ յոդնած՝ քնանալու դացեր էր:

Այդ գիշերը, առտուան դէմ, հիւանդին վիճակը կը գէջնայ, հոգեվարքը կ'սկսի, եւ ա՛լ չեն կրնար զինք անկէ բաժնել:

Քոյր եւ եղբայր, իրարու հետ կը խօսին, գլուխ գլխի, արցունքներով:

Մեռնելու մօտիկ, եղբայրը կը խնդրէ քրոջմէն որ երգէ: Աղջիկը աղուոր ձայն ունէր:

Արցունքներէն խղղուած, խեղճը իր եղանակներուն է՛ն անուշը, է՛ն տխուրը կ'երգէ:

Դեռ երգը չաւարտած՝ եղբայրը կը մեռնի:

Հետեւեալ օր ինք ալ հիւանդ էր: Ծաղ-

կախուը իրեն համար աւելի անգութ եղաւ. կեանքը չառաւ, բայց աչքին լոյսը յաւէտ ցամքեցուց:

Երբ այս պատմութիւնն աւարտեց, գըլուխն ուսիս դրաւ թեթեւօրէն եւ սկսաւ հեծ կըլտալ. օ՛հ, ի՞նչ տխուր են առանց արցունքի հեծկլտանքները . . . :

Եւսոյ շտկուեցաւ ու նորէն սկսաւ երգել իր երգը, այն երգը որ առջի գիշերն ալ երգած էր:

Հիմա երգը աւելի տխուր կուգար ինծի, աւելի ցաւոտ:

Ու երգին եղանակն ա՛յնքան անուշ, ա՛յնքան յուզիչ էր որ խօսուն ցաւ մը, ներդաշնակուած հառաչ մը կը թուէր ինծի:

ԶԱՊԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ





ՇԱՌ ՈՒՇ

Ամայի եւ հովանուտ ծառուղիէն, իրիկ-նամուտի իր սովորական ճեմելավայրը, որ գիւղին ծայրը կ'երկննար, Արաքսի կ'անցնէր հովի պէս:

Իր սվելդ ու մարմնեղ հասակը կը դիւրաթեքէր, սօսիներու շուքին տակ, մեքենական քալուածքի մը անդիտակից յոդնութիւններով: Ու երբեմն, երազէ սթափածի նման, նպատակի մը դիմելու երեւոյթը կ'առնէր ան:

Պարզ էր արդուզարդը, բայց աղնիւ դըրոշմով մը տոգորուած. մութ գոյները կը սիրէր ան: Պտոյտի հագուստ մը, զրեթէ միշտ նոյնը, որ գօնէքդ արտայայտութեամբ մը կը կեղծէր այդ կնոջ զգայնիկ ինքնութիւնը:

Հազիւ երեսուն տարեկան կար. սեւ մա-

զեր ու սեւ աչքեր, շուշանաթոյր մորթի մը վրայ ստուերագործուած. ազնուական գեղեցկութիւն մը՝ որ էնքօգէ կ'ընէր էն անպատկառ նայուածքներուն իսկ:

Անուշագիր, կարծես մտասեւեռ, կը սահէր համաչափ քայլերով, երբ աղքատ գնչուհիի մը լալկան մոլտուքը յամբացուց իր գնացքը:

— Աղուո՞ր տիկին, աստուած սիրականիդ հասցնէ քեզ...:

Դողով մը կեցաւ Արաքսի, իր մարմը-րած աչուըները այդ խղճալի էակին վրայ յառելէն՝ ձեռքը անզգալաբար պոլոքներու հետ քովլնտի կախուած ոսկեթել քսակին տարաւ:

Մուրացկանուհին կը շարունակէր իր աղերսանքը:

— Բայց ինչէ՞ն դիտես որ ես սիրական մը ունիմ, հծծեց Արաքսի՝ տրտմութեան մէջ թաթխուած զարմացկոտ նայուածքը վեր առնելով յանկարծ:

— Օ՞չ, եթէ ձեզի պէս աղուոր տիկին մը, ձեզի պէս հարուստ տիկին մը չի սիրէ՛ ・・・, պատասխանեց համարձակ՝ իր աղտո-տած ճմովթկուած դէմքը հակասելով իր մաքուր ակռաններուն փղոսկրին հետ:

— Ու եթէ անկարելի ըլլայ մաղթանքդ
այս աշխարհին մէջ, հծծեց դառնութեամբ
Արաքսի, տխուր ու միամիտ նայուածքը
դամելով գետինը:

— Այն ատեն, վրայ բերաւ միւսը՝ շը-
ւարած, այն ա՛տեն . . . :

— Այն ատեն, անդիի աշխարհի մէջ,
հատը . . . , ընդմիջեց ան, աչքը արցունքի շի-
թով մը փալիլուն, եւ աղքատին կաշիացած
կեղտոտ ափին մէջ դնելով արծաթ զրամ մը:

— Ի՞նչ դժբախտ կին՝ այդ բարի տի-
կինը, մրմնջեց գնչուհին, երբ արդէն ան կը
շարունակէր ընթացքը:

Հազիւ քանի մը քայլ հեռացած էր Ա-
րաքսի, գրաւուած այդ վրդովիչ խօսքերէն,
ու բացագանչեց հիւանդ հողիի մը մելամաղ-
ձոտութեամբ:

— Երանելի՛ կին . . . :

Ու երկու կիները հեռացան, մին դէպի
յառաջ, ծառուղիին դէպի ծայրը, առանց
նպատակի, անկարելի երազին մէջ թափա-
ռայած, վաղուան տարակոյսէն վարակ-
ուած ախտաւոր, եւ միւսը յաջող օրուան մը
իրիկունը ըմբռչնելէն, հապճեպելով զը-
ւարթօրէն դէպի մերձաւոր վրանը, ուր բո-

պիկ ու անվարտի լաճերը կը սպասէին ի-
րենց մօրկան:

* * *

Երբ Արաքսի այրի մնաց, իր սիրտին
պարապութենէն սարսափեցաւ: Մէրը իրեն
համար ամէն բան էր, եւ կ'ուզէր կամաց
կամաց հասնիլ անոր եւ քիչ քիչ զգալ անոր
տիրապետումը, աւելի լաւ վայելելու հա-
մար այդ երջանկութիւնը: Բայց իր ամու-
սինը, առջի օրէն հիւանդ մը, իրեն հետ հո-
գէր միայն բերած էր այդ հիւանալի կնոջ,
այնպէս որ Արաքսի դեռ սէրը չի ճանչցած,
հազիւ թէ կուահած ան, համոզուած էր թէ
կեանքը պարտքի հատուցումն է միայն, եւ
այս յուսախարութեան մէջ տարութեր, յա-
ճախ. զգացած էր թէ իր հոգին կը մսէր:

Սեւերուն մէջ պարուրուած իր մարմինը
զգլիչ կորութիւններով կը շրջագծուէր.
Եւ հակումներէն ու վշտակրանքէն փոսացած
էր նշաճեւ սեւ աչուրներուն վհկութիւնը ի-
րերուն եւ հոգիներուն վրայ հասելէն, հա-
մակրանքի տաք շունչ մթնոլորտ մը կը
ստեղծէր ինք իր շուրջը: Իր ճակտին վրայ
երազի մը շէջքը եւ իր շուրթներուն ծայրը
ժպտումի մը ծալքը կը տիրէին: Կեանքը
արհամարհելով ժեսդ մը ունէր ինչ որ կու-

տար իրեն ազնուատիպ շահեկանութիւն մը:
Դեռ չի թղթատուած գիրքն էր, որուն էջե-
րը բացուած էին արդէն, բայց ուր ոչինչ
կարդացուած էր տակաւին:

Արաքսի ունէր մէկ խօսքով այն ամէն
թաքուն եւ խորունկ չեմ գիտեր ինչը, ան-
շօշափելի, շատ մտերիմ, ու շատ նրբազդե-
ցիկ, որ Լեւոնի պէս ռաֆինէ երիտասարդի
մը յափրացած սիրտը կրնային վրդովել:

Միեւնոյն շրջանակին մէջ ապրած եր-
կուքն ալ, միշտ իրարու հանդիպած էին ա-
նոնք:

Լեւոն, կարեւոր վարչութեան մը մէջ
պաշտօնեայ, լուրջ ու դժուարահաճ երիտա-
սարդ մըն էր. շատ քիչ բարեկամներ ունէր.
անոր համար հպարտի տեղ անցած էր:

Ամէն տեղ չէր, ամենուն հետ չէր, ինչ
պէս իր գիրքին տէր երիտասարդներէն շա-
տերը՝ որ երեւալու համար կը պատուառուին:
Ան իր արժանիքին որոշ գիտակցութիւնը ու-
նէր, բայց ամբարտաւան չէր բնաւ: Իրեն
համար գերազոյն հաճոյքը գրականութիւնն
էր. շատ կը կարդար. ու մէկ երկու հեղ հը-
րապարակ իջած էր «Գիսաւոր» ծածկանու-
նին տակ եւ ուշադրութիւն գրաւած:

* * *

Երբ առաջին անգամ, մեծ սուրբին մէջ,
Լեւոն տեսաւ Արաքսին, տարօրինակ ցնցում
մը զգաց զոր մէկէն ի մէկ չի գիտցաւ յայ-
տորոշել:

Այդ կնոջ կրած կորուստը, ցաւատանջ
կենցաղը, վշտակիր հոդին, տժզունած դէմ-
քին գողտը արտայայտութիւնը, ամէն ինչ,
իր պարզութիւնը, եւ իր մէն մի բառը, ըդ-
բաղեցուցին Լեւոնը: Գերեզմանի մը խորը
նայած էին այդ աչուրները, եւ հիմակ ա-
ւելի աղուոր էին անոնք, որովհետեւ հի-
ւանդ կը թուէին:

Երբոր իրարմէ բաժնուեցան, Լեւոն իր
կրած տպաւորութիւնը տարրալուծեց, ու
երկար ատեն թաղուած մնաց հաճելի մտա-
ծումներու մէջ: Վաղուան անուշ երազը
հիւսեց:

Իր զգայուն սիրտը շատ բանաստեղծու-
թիւն ունէր, եւ իր հոդեբանութիւնը ինքը
շատ հեռուները մոլորեցուց: Կարծեց պահ
մը, եւ ցանկաց իսկ սիրել այդ շնորհագեղ
կինը: Սիրել այդ կինը, կեանքի այնքան
պատրանքներէն վերջ: հասնելու համար սի-
րոյ լաւագոյն ըմբռնումին, երազին քօղերը
վեր առնելու համար, ապրելու համար մէկ
վայրկեանը որուն յաւիտենականութիւնն է

միակ երջանկութիւնը՝ զոր միամիտները
այլուր կը փնտռեն յաճախ:

Մէկանց յափշտակուած, որպէս թէ ա-
ռաջուց բնաւ տեսած չըլլար այդ կինը, Լե-
ւոն կ'ապրէր ամէն օր միեւնոյն ազգեցու-
թեան տակ՝ միշտ վառ ու միշտ նոր: Իր
միտքը կը վերադառնար այդ տիսքէնիկէ
դէմքին. կը յիշէր այդ մեղի ու երկար նայ-
ուածքը՝ որուն մէջ արցունք մը կը բանաս-
տեղծէր. իր մէն մի ծեսդը որուն մէջ իր ազ-
նիւ հոգին կը թալկանար, իւրաքանչիւր
խօսքը, երդ մը իր մարդրիտ ակոաներուն
մարդրասարին վրայ եւ բոյր մը իր բուստ
շուրթերուն վարդին վրայ, իւրաքանչիւրը
դեռ կը կրկնէր Լեւոնին ախտավարակ հո-
գիին մէջ այդ կնոջ հմայաթափ սիրտին սի-
րելու հրաւէրը:

Երկար ատեն տեւեց այդ ինքնամփո-
փումը ու ալ կը սիրէր Լեւոն. չի կրցաւ այլ
եւս խորհիլ ինքդինքը. եւ այս իրողութիւնը
վերացուց ինքը:

Դեղերեցաւ անոր շուրջը, փնտռեց ա-
նոր հետքերը, յաճախեց միեւնոյն շրջանա-
կը, առիթներ ստեղծեց. ու վերջապէս մը
բացաւ իր սիրտը, երկար ատեն դարպասէ մը

վերջ, երբ այլ եւս իր բնածին խրոխտու-
թիւնը տեղի տուաւ սիրոյ պայքարին:

Արաքսի անդրդուելի կը մնար իր ան-
տարբերութեան մէջ, միշտ բարձր ու միշտ
անմատոյց:

Իրեն համար Լեւոնը առաջինը չէր, եւ
ոչ ալ վերջինը, այն տուփասէրներու վոհ-
մակին որ իրենց խարդախուած զգացում-
ներուն իր ոտքերուն տակ կը դնէին: Գիտէր
թէ զեղանի էր եւ գրաւիչ, եւ եթէ բնական
կը գտնէր որ ցանկային իրեն, բայց չէր նե-
րեր ինքինքին որ թեթեւաբար տեղի տայ:

Մանաւանդ գոեհիկ ըլլալու վախը ու-
նէր, ինք կը բաղձար տէրը մնալ իր սրտին.
Իրեն համար կինը իրաւունք ունէր իր սիր-
տին ուզածը սիրելու, եւ չէր ներեր որ աղ-
ղեցութիւն մը կրէ եւ սիրոյ առաջարկ մը
ընդունելու զիջանի. անբռնաբարելի կը նը-
կատէր սիրելու անկախութիւնը եւ կը սպա-
սէր որ իր սիրտը սիրէ:

Այսպէս կը դատէր Լեւոնը, եւ կը խոր-
հէր թէ ան ալ, դարուս զաւակը, կը կար-
ծէր իրաւունք ունենալ հասնելու անպատ-
ճառ այն կնոջ որուն ցանկալու քմահաճոյ-
քը ունեցած էր:

— Սիրոյ բախտախնդիրներ, կ'ըսէր մը
տովի Արաքսի:

* * *

Ամիսներ անցան, եւ Լեռնի ջանքերը
ապարդիւն մնացին կընլու համար անոր
սիրտը. մանաւանդ պղտիկցած ըլլալու գա-
ղափարը կը տանջէր զինքը, ու ժողվեց իր
բոլոր ուժը:

Զափ դրաւ իր հետպնդումներուն, ու
կամաց կամաց, քար դնելով սիրտին վրայ,
հեռացաւ իր սիրականին վտանգաւոր ներ-
կայութենէն: Զարաչար կրած էր անոր դիւ-
թազդը, եւ գերմարդկային զոհողութիւննե-
րով կրցաւ զապել իր զգացումները որ ուրիշ
ուեէ խառնուածքի համար ծայրայեղու-
թեանց առաջնորդ ըլլային գուցէ:

Օրին մէկն ալ պղտիկ ճամբորդութիւն
մը սարքեց ու անձայն մեկնեցաւ քաղքէն:

Սակայն այդ մեկնումը Արաքսիին ու-
շէն չի վրիպեցաւ: Ընդհակառակիլ:

Այն վերապահումներուն հակառակ՝ որ
մերժումի մը սաստկութեամբ կ'ազդէին Լե-
ռնին, այդ կինը քիչ քիչ զգացումի մը զար-
թումը կասկածած էր իր կոյս սիրտին մէջ:
Կը վարժուէր սիրելու դաղափարին, համոզ-
ուելով հետզհետէ թէ Լեռն վերջապէս թե-

թեւաբարոյ դարպասողներէն տարբեր բան
մըն էր: Խորհող միտք մը, որ այնքան ինք-
նաճանաչ է եւ դիւրահաղորդ, կ'ըսէր ինք-
նին, կիրքի մը համար չէ որ պիտի ուզէ
կնկան մը ոտքը իյնալ:

Եւ ճիշդ այդ միջոցին էր որ Լեռն, յու-
սակտուր, նախ հեռու փախած էր իր զղանց
քէն, եւ յետոյ ճամբորդութեան մը անտեղի
զաղափարը ունեցած էր:

Արաքսի ատ լսելուն դղրդուեցաւ:

Անոր համակրելի կերպարանքը եւ հա-
մեմուած խօսակցութիւնը յիշեց, էն պղտիկ
մանրամասնութիւններով զբաղուեցաւ. հա-
ճոյք կը զդար այդ թափառումներէն, կը
գզուէր այդ տարտամ երազը: Ու, ինչ որ
շատ շուտ հաստատեց, յայտնապէս զգաց
պարապը զոր Լեռն ձգած էր իր շուրջ:

Իրեն համար բնական դարձած էր այդ
ազնիւ անձին ներկայութիւնը, եւ հիմակ
պէտքի մը պէս կը ճնշէր ատ իր վրայ: Իր
աչուրներուն մէջ կ'որոնէր այն աղերսոտ
նայուածքը որ իր սիրտին ժայռին դէմ կը
փշուէր. անոր ինզուին ծայրը կ'ըղձար կըր-
կին լսել այն աղտոտ բառերը, «բայց, Տի-
կին...», «Օ՛հ, սիրտ չունիք», եւ դեռ կարճ

խօսքեր, միշտ կը կնուած՝ որոնց ռամկութենէն վաղուց զգուած էր:

Բայց հիմակ, աւաղ, կ'ուզէր որ իր ծանօթները յաճախ կեւոնին վրան խօսէին, անոր սիրոյն ժէջ իր հողին օր օրի կը ցանցուէր:

— Կեւոնին ստանաւորը կարդացի՞ք, ըստ օր մը իրենց տան մտերիմներէն մին. նորավէլ գրելը գիտէի, բայց բանաստեղծը ըլլալը նոր յայտնութիւն մը եղաւ:

Եւ Արաքսի փնտուց այդ ստանաւորը պարունակող Վասիսը, ու քսան հեղ կարդաց, գոց ըրաւ ան:

Վերնագիրն էր «Զի Հասկցուած»: Այս քառեակը մանաւանդ ծանր աղղեց իրեն, լացուց խեղճլ:

Զի խորհեցար գոնէ քէ սէրն անողոք վընխոներ այ աւնի՛ որոնց կ'ենթարկուիս Գուցէ օր մը գուն ալ, ո՞վ կին, որ անհոգ կըրցար մերժել անհուն սէրը իմ սրտիս:

Արաքսի անյաղթելիօրէն կը սիրէր կեւոնը, ու չէր կընար չի սիրել:

Խոռվայրոյ սպասեց անոր վերադարձին:

* * *

Երբ լրացաւ եռամսեայ արձակուրդը,

Կեւոն վերագարձաւ՝ գեղեցիկ տպաւորութիւններ հետը բերելով. այլ եւս բուժուած էր ան. իր սէրէն յիշատակ մը մնացած էր, հիւանդագին յուշ մը, փլատակի մը պէս թախծալից, երբեւ սպիացած վէրք մը՝ որ դեռ ժամանակ մը կը կտտայ:

Յաւէտ խոյս տուաւ Արաքսիին եւ ջանաց անոր չի հանդպիլ տեղ մը. աւելի պաղարիւնով կը կշռադատէր իր ստորնացումը այդ անհաղորդ եւ անյողդողդ կնոջ հանդէպ:

Բայց նոյնը չէր Արաքսիին համար:

Ան սպասեց անձկալից առաջին հանդիպումին, այնքան շուտ՝ որքան օր օրի ուռճացող իր սէրը կը յուսադրէր ինքը. ինքնավլստահ իր հրապոյըներուն ուժին վրայ, իր սիրազեղ թելազրութեանց անձնատուր, անխուսափելի կը գտնէր կեւոնին համար փնտը ուել հանուր իր երազի առարկան եւ անոր մօտ յածիլ զգուշաւոր հետապնդումով մը:

Իրողութիւնը կը պատոէր իր միամըտութիւնը: Կեւոն աւելի քան երբեք հեռու կը վախչէր իրմէ, կը վախնար ան նոյն իսկ իր հին սիրոյն վրայ անդրադառնալէ. պարքարէն հաղիւ ազտած էր, եւ միանդամ ընդ

միշտ համոզուած էր թէ անկարելի փորձին
մէջ չարաչար յաղթուած էր ինք:

Աւելին իսկ: Արաքսին ալ լսեց այն զը-
րոյցը թէ Լեւոն պիտի ամուսնանայ վերջա-
պէս Օրիորդ Մատլէն Գ.ի հետ, տեղի տա-
լով ասոր բուռն եւ տառապագին սիրոյն,
զոր ինք չէր կրցած երբեք փոխարինել, եւ որ
խօսքի նիւթ եղած էր ատեն մը: Այդ գա-
ղափարը սաստիկ հարուած մը պէս ցնցած
էր Արաքսին. իր սէրը ալ հիւանդութիւն մը
եղած էր. անոր բուժումին վրայ խորհելով
անքուն գիշերներ անցուց: Միջոց մը փնտը-
ռեց արգիլելու այդ բանը. ճար մը միայն
կար — խոստովանիլ իր սէրը — և ատ պի-
տի բաւէր ելեքտրացնելու Լեւոնը: Ատ չէ՞ր
անոր իտէալը:

Առտու մը, աղուոր արշալոյսը իր տըժ-
գոյն հոգին համբուրեց. սարսուաց ու տեն-
դագին, հետեւեալ նամակը դրեց.

«Լեւոնս,

«Կը զգամ թէ հալարտութիւնը անձնա-
զոհութիւն պիտի ըլլայ ասկէ անդին. ու ես՝
մաշող գաղտնիքը քեզի յանձնելու պէտքէն
ընկճուած եմ:

«Ժամանակը եւ հեռակայութիւնը որ

յաճախ սրտերը կը բաժնեն, իմս քուկինիու-
գերի ըրին:

«Կը խոստովանիմ թէ քեզ յանկարծ չի
կրցայ հասկնալ. բայց այսօր համոզուած եմ
թէ քենէ զատ ոչ մէկը պիտի կրնամ սիրել:

«Վաղը կէս օրէն վերջ մեղի եկուր. պի-
տի ըսեմ քեզի թէ ի՞նչպէս կը սիրեմ քեզ:

ԱՐԱՔՍԻ»

* * *

Լեւոն պաշտօնատեղին երթալուն պէս՝
գրասեղանին վրայ գտաւ մանիշակաբոյը
նամակը. կնկան գիրը տեսաւ ու դողալէն
բացաւ պահարանը: Աչքին չի հաւտաց. ա-
նակնկալ էր ատ. կրկին կարդաց, եւ զգաց
անոր մէջ Արաքսիին հոգին:

Տենդոտուած, բոլորովին դղրդուած, ե-
լաւ տեղէն ու պատուհանին առջեւ գնաց կե-
ցաւ:

Անդուլ կը խաղար իր մանրիկ պեխերուն
հետ: Իր աչքերը կը փայլատակէին. սիր-
տը կը տրոփէր ուժդէն. ու դեռ մատուցները
կը դողային, որպէս թէ գանձ մը եւ կամ
դագաղ մը բացած ըլլային անոնք:

Գանձ մը՝ երբեմն, դագաղ մը՝ հիմակ,
այդ վարդագոյն նամակը:

— Շա՞տ ուշ, փսփսաց, ու քանի մը բու-
պէ վերջ — շա՞տ ուշ — կրկնեց լեւոն, նա-
մակը գրալանին մէջ դնելով, իր յուզման չափ
մը դնելու մատնուած ճիգով մը:

Ապուշի պէս բան մըն էր մինչեւ իրե-
կուն. յոդնած մեկնեցաւ՝ սովորականէն քիչ
մը կանուխ:

Հսկայ չէնքին դրան առջեւ շուարած
պահ մը կեցաւ, ու տարտամութեանց մէջ
ցնորաթափառ այդ հողին արծուային սլա-
ցում մը ունեցաւ յանկարծ. լոյսի պէս բան
մը ցոլաց իր տմոյն ճակտին վրայ՝ որուն
տակ փոթորիկ մը պայթած էր: Ա՛յ որո-
շումը տուած էր. կառք մը կանչեց եւ Մատ-
* * *

Արաքսի տառապանքի երկու անտանելի
օրեր անցուցած էր, եւ երկու օրուան մէջ
անձանաչ եղած էր: Սպասումի վայրկեան-
ները յաւիտենական թուած էին իրեն. Լե-
ւոն ոչ հրաւելին պատասխանած էր եւ ոչ
ալ իրեն երկու բառ գրած էր. եւ այս լուս-
թիւնը անմեկնելի էր ու ջախջախիչ:

Տան պատշտամը նստած էր օրբաթոռին
մէջ: Կը սիրէր վերջալոյսին հոդ մնալ,
սաղարթներու մէջտեղ թաղուած, անրջօ-
րէն, եւ իր աչքերը խորասուղել ծովուն հե-

ռաւոր ալքերուն մէջ: Իր սիրահար հոգին
ամէն ատենէ աւելի բնութեան կապուած է,
եւ անոր դիւթանքներուն մէջ կ'ախորժէր
դիտել ցոլացումը իր սիրոյն՝ որ կ'աղուոր-
ցընէր այլ եւս ամէն բան:

Բայց անձկութիւնը կը սեղմէր ինքը. ա-
ռաջին անդամն էր որ կը զգար այդ յոյզե-
բը եւ անքիծ երանութեան հեռապատկերը
միայն կը լուսաւորէր ինքը այդ գաղտնի-
քին մէջ:

Յանկարծ սպասուհին նամակ մը բե-
րաւ: Առանց վրան նայելու, խօլաժպիտ,
սարսուալէն բացաւ պղտիկ սիրուն նամա-
կը...:

— Ա՛հ, գոչեց շանթահարուած խելա-
ցընորութեամբ. ու գրեթէ նուաղած ինկաւ
աթուին խորը:

Աղդատոմս մըն էր ատիկա:

Լեիոն ՍՍ.ՐԳԻՍԵԱՆ
ԵՒ

ՄԱՏԼԻՆ ԳԻՈՐԳԵԱՆ
ՆՇԱՆՈՒԱԾ

Իրիկուան սիւքը կը փէքր վարդենիին
հոծ տերեւներուն մէջէն. արեւը շատոնց
անձնասպան եղած էր, ու վերջալոյսն ալ-

Կ'ոգեւորէր: Իսկ ծաղիկները պարտէզէն
վեր կը դրկէին իրենց վերջին համբոյրները
որ գիշերը կը բուրումնաւէտէին տակաւ:

Հեռուն, գորտերը կը սկսէին կրկուալ.
Եւ ճպուռները իրենց ճրճռանքներով՝ հողի-
ները մելամաղձիկ կ'ընէին:

Արաքսի պաղ մը զգաց իր թեթեւ քէն-
եռուախն մէջ, ու երկար քունէ մը արթըն-
ցածի պէս չորս կողմը դիտեց մէյ մը: Հո-
գին կը ցաւէր:

Նայեցաւ նորէն ձեռքին մէջ քրտնած
պղտիկ քարդին վրայ, առանց որոշելու մու-
թէն պտղած տառերը:

Ու աչքերը անթարթօրէն անոր վրայ
սեւեռած.

— Շա՛տ ուշ, արդարեւ, մրմնջեց:
Մեոցուցի իր սէրը, եւ իմս ծնաւ: Հիմակ
պէտք է որ սիրեմ անհնարին սէրը, պէտք է
որ տառապիմ . . . , աւելցուց անուշ, փաղա-
քուշ չեշտով մը զոր օդին խոնաւութիւնը կը
թրջէր:

Քանի մը վայրկեան նորէն միրճուե-
ցաւ իր անհուն թախծանքին մէջ. այս ան-
գամ միայն զգաց իր այրիութիւնը՝ իր դըժ-
բախտ սիրոյն մէջ լքուած ու մենաւոր: Ու
մսելով, սարսուալով, ջղաձգօրէն ոտքի եւ

լաւ. մութին մէջ իր նկուն ու ցայտուն հա-
սակը ցցուեցաւ՝ բողոքի մը պէս դէպի եր-
կինք, վարդենիէն շիւղ մը փրցուց, եւ

— Շա՛տ ուշ, փափսաց կրկին, ու, վար
նետելով շիւղը, կիսաբաց դուռնէն ներս մը-
տաւ եւ անհետացաւ,

Ու գիշերը լալով մտիկ ըրաւ վիրաւոր
սիրտի այս դառն հեծեծանքը . . . :

ՎԱՀԱՆ ՄԱԼԻԶԵԱՆ





ԿԵՇՈՅԻ ՎԱՐԴ ՄԸ

Գրեց՝ Ի ԶՐԿՅԻԼ ԶԵՆԿՎԻԼ (1)

Օր մը Հայպէլի մտքէն անշաւ թէ պէտք
է ամուսնանայ ալ: Այս պատճառաւ ընդ-
փոյթ Զուկըրման՝ մեծ Շատխանին* դիմեց:

— Քեզի շատ յարմար մէկը ունիմ, ը-
սաւ ամուսնական գործերու այս մեծ միջ-
նորդը:

(1) Իզրէյիլ Զենկվիլ, Հրեայ գրադէտ մըն է,
որ իր ուսումը ստացած է Լոնտոն, եւ որուն վէպերն
ու նորավէպերը մեծ հռչակ հանեցին վերջերս: Կե-
րպոյի Վարդ Մը մին է այն գեղեցիկ նորավէպերէն,
ուր հեղինակը համարձակախօսութիւն սրախօսու-
թեան խառնելով կը պատկերացնէ Հրէական կեան-
քին դրուադներէն մին:

Ծ. Թ.

* Հստ Հրէական սովորութեան Շատխան ամուս-
նական գործերու գործակալ է, որու կը դիմեն յար-
մար վեսացու եւ հարսնցու գտնել ուղղներ:

— Գեղեցի՞ն է, Հարցուց Լայպէլ:
— Հայրը կօշիկի եւ մուճակի վաճառա-
տուն մը ունի, պատասխանեց Զուկըրման
խանդակաթ:

— Ուրեմն կ'երեւի թէ դրամօժիտ ունի,
վրայ բերաւ Լայպէլ եռանդադին:

— Անտարա՛կոյս դրամօժիտ ունի. մա-
նաւանդ քեզի պէս գեղեցիկ մարդու մը հա-
մար:

— Որքա՞ն է կը կարծես:

— Անշուշտ խոչոր վաճառատուն մը չէ,
այսուհանդերձ քու կօշիկներդ փոքրաքա-
նակ վաճառականի մը գնով կրնաս գնել հոն
եւ կնոջդ կօշիկներ նաև՝ թերեւս կաշիին գը-
նով:

— Ե՞րբ կրնամ տեսնել զայն:

— Պիտի կարդադրեմ որ յառաջիկայ
Շաբաթ կէսօրէն ետք այցելես իրեն:

— Միայն մէկ ոսկի (սավրին) պիտի
պահանջես ինձմէ, այնպէս չէ՞:

— Այո՛, միայն այդչափ: Կրոշէն** մը
իսկ աւելի դրամ չեմ ուզեր: Ա՛յնքան բա-
րեպաշտ աղջիկ մը: Վստահ եմ թէ երջանիկ

** Գերմանական արծաթ դրամ երկու սէնթ ար-
ժէքով, որ այժմ գործածութենէ ինկած է:

պիտի ըլլաս: Գեղջկական հիանալի վարք
ու բարք ունի: Անչուշտ դրամօժիտէն հինգ
առ հարիւր յանձնաբարողչք պիտի տաս
ինծի, այնպէս չէ^թ:

— Հը՛: Լաւ հոգս չէ: Թերեւս դրա-
մօժիտ իսկ չեն տար, մտածեց ինքն իրեն ե-
րիտասարդ փեսացուն, Շատխանը խաբած
ըլլալու միթարութեամբ:

Սյդ Շաբաթ օրը Լայպէլ գնաց տեսնել
օրիորդը, եւ կիրակի օրը Զուկըրմանի՝ Շատ
խանի, քով գնաց տեսակցութեան համար:

— Բայց օրիորդդ չիլ է, դոչեց Լայպէլ
զայրացկոտ:

— Սքանչե՛լի բան մը, պատասխանեց
Զուկըրման:— Կին մը, որ շիլ աչք ունի, չը
կրնար շեշտակի նայիլ իր ամուսնոյն վրայ
եւ զայն յաղթահարել: Ո՞վ պիտի ուղէր նը-
կուն եւ գլխահակ կենալ շլակն կնոջ մը առ-
ջեւ:

— Կրնայի հանդուրժել անոր շիլ ըլլա-
լուն, յարեց Լայպէլ երկմիտ շեշտով, բայց
օրիորդը նոյն ատեն կը թոթովէ:

— Ինչ որ աւելի լաւ է քեզի համար հա-
կաճառութեան մը կամ կոխի մը պարագա-
յին: Խօսելու դժուարութիւնը զինք պիտի
ստիպէ որ ուրիշ կիներէ անհամեմատ աւելի

լուռ ու մունջ կենայ: Մինչ առիթը ներկա-
յացած է, լաւ կ'ըլլայ որ ձեռք ձգես զայն:

— Բայց ձախ սրունդը կաղ է, դոչեց
Լայպէլ ճարահատ:

— Աստուած չնո՞րհք տայ քեզի: Լսել
է չես ըմբներ թէ ի՞նչ մեծ առաւելութիւն
մըն է քեզի համար ունենալ կին մը՝ որ ան-
կարող պիտի ըլլայ քեզի ընկերանալ ամէն
տեղ որ կ'երթաս:

Լայպէլի համբերութիւնը հատաւ:

— Ի՞նչ կ'ըսես, աղջիկը կուզ է, բո-
դոքեց թեկնածուն մոլեզնած:

— Սիրելի՛ս Լայպէլ, ըսաւ ամուսնա-
կան գործերու միջնորդը, աղերսագին թօթ-
վելով իր ուսերը եւ ափերը լայն լայն բա-
նալով:— Կատարելութիւն չե՛ս ակնկալեր
անշուշտ:

Հակառակ ասոր Լայպէլ իր ոչ-բանաւոր
դիրքին մէջ յամառեցաւ մնաց: Լսաւ Զու-
կըրմանի թէ՝ իր ժամանակը կը վատնէ եւ
զինք կը ծաղրէ:

— Քեզ կը ծաղրե՞մ, վրայ բերաւ Շատ-
խանը զայրագին, երբ ես քեզի կօշիկի եւ
մուճակի գործարանատիրոջ մը աղջիկը կը
ներկայացնեմ իրը հարսնցու: Եթէ մերժես
զայն, այն ատեն դուն ինքզինքու ծաղրելի

պիտի դարձնես։ Կրնամ ըսել թէ անոր դը-
րամօժիտը քեզ կարող պիտի ընէ դերձակի
գործարան մը բանալու։ Ներկայիս շա-
բաթական երեսուն շիլինկի փոխարէն իբր
ստրուկ կը ձեւես ու կը կտրես։ Մեծ անի-
րաւութիւն է այդ։ Եթէ երբեք քանի մը
մեքենաներ ունենայիր, կարող պիտի ըլլա-
յիր ձեւողներ վարձել քեզի իբր գործառոր։
Եւ այս օրերս այնքա՞ն աժան կարելի է ձեռք
ձգել զանոնք։

Ասոր վրայ Լայպէլ կասեցաւ, եւ մեկ-
նեցաւ առանց որոշ կերպով վերջացնելու իր
բանակցութիւնները։ Անոր ամբողջ շաբա-
թը տարակոյսի մէջով պատեցաւ, գործը ա-
նըստոյդ եղաւ, անոր կաւիճի նշանները ի-
րենց սովորական ճշտութիւնը կորուսին, եւ
սկսաւ իր կերպասին համեմատ չկտրել իր
վերաբերուն։ Անոր մոլորումները չափազանց
ուշադրաւ հանգամանք մը ստացան, եւ գե-
ղանի մոռզ կրիյն, փնթի եւ կեղեքող գործա-
րանատիրոջ երէց աղջիկը, որ միեւնոյն սեն-
եակի մէջ մէքենայ մը կը վարէր, կնոջական
յայտնատեսութեամբ մը գուշակեց թէ Լայ-
պէլ սիրահարեր էր։

— Ի՞նչ է ցաւդ, հարցուց Ռոզ, եխտիշ
լեզուն իրեն օդնութեան կանչելով, երբ կէ-

սօրուան թեթեւ ճաշիկնին կ'ընէին — հաց ու
պանիր եւ կոճապղպեղի դարեջուր (նիննըր-
պիր) — մեքենաներու ժիսորին ընդմէջ, եւ
երբ տակաւին ատոնց քրտնաթոր գերեալնե-
րը դադար չէին առած։

— Ինձի հարսնցու մը կ'առաջարկեն
կոր, պատասխանեց Լայպէլ գլխահակ։

— Հարսնցո՞ւ մը, բացազանչեց Ռոզ։
Քեզի՞։ Ռոզ տարիներէ ի վեր անոր քով
աշխատեր էր եւ ընտանութեամբ վարժուեր
էր եղակի երկրորդ դէմքով խօսիլ անոր։
Լայպէլ գլուխը շարժեց ի հաստատութիւն,
եւ կտոր մը հոլանտական պանիր թիւեց բեր-
նին մէջ։

— Որո՞ւ հետ, հարցուց Ռոզ։ Երիտա-
սարդը ամօթի զգացում մը ունեցաւ։ Այս
պատճառաւ վարեջուրի քարէ շիշը իր ծարա-
ւի շրթունքներուն տարաւ եւ կուլ տալու ա-
տեն կամացուկ մը ըստաւ։

— Իի Վոլքովիչի հետ։

— Իի Վոլքո՞վիչ, վրայ բերաւ Ռոզ հե-
տասպառ։ Լի՞, այսինքն կօշիկի եւ մուճա-
կի գործարանատիրոջ դո՞ւստրը։

Լայպէլ գլուխը վար կախեց։ Հազիւ
գիտէր՝ թէ ինչո՞ւ։ Զհամարձակեցաւ անոր
աչքերուն նայիլ։ Վայրահակ աչքերը այս

Կ'ըսէին։ Երկար դադար մը տիրեց։

— Ինչո՞ւ չես ընդունիր զայն, ըստ
Ռող։ Աւելի քան հարցում մըն էր այս հար-
ցապնդումը. ոչ միայն արհամարհանք կար
ատոր մէջ ա՛յլ թերեւս նոյն իսկ ատելավառ
խայթոց մը։

Լայպէլ չպատասխանեց։ Շփոթեցնող
լուսթիւնը տիրեց նորէն եւ տիրեց ընդ եր-
կար։ Ի վերջոյ Ռող խղեց լուսթիւնը։

— Արդեօք անո՞ր համար է որ զիս ա-
ւելի կը սիրես, հարցուց գեղանի օիրորդը։

Կարծես թէ Լայպէլ շանթի փայլատա-
կում մը տեսաւ օդին մէջ, որ պայթեցաւ,
եւ ելեքտրական հոսանքին հարուածը իր
սրտին մէջ զգաց երիտասարդը։ Ցնցումի
ազդեցութեան տակ անոր գլուխը վեր բարձ-
րացաւ, այնպէս որ աչքերը սեւեռեալ յառե-
ցան այն դէմքին վրայ որու գեղեցկութիւնն
ու փափկութիւնը առաջին անգամ ըլլալով
յայտնուեցան իրեն։ Իր վաղեմի գործակցին
ընտանի դէմքը անյայտացեր էր ալ. աս
դէմքը փաղաքուշ, տարփածու եւ ժպտալիր
դէմք մըն էր՝ նշանակ աննիւթական ու ա-
ներեւակայելի շատ մը բաներու։

Այո՛ քեզ, պատասխանեց Լայպէլ, ա-
ռանց տեսանելի տատամսումի մը։

— Քե՛զ, ո՞չ շատ լաւ, պատասխանեց
Ռող առանց այլ եւ այլի։

Եւ փոխադարձ հասկցողութեան այդ
դիւթալիր վայրկեանին Լայպէլ ժամանակ
չունեցաւ զարմանալու թէ ինչո՞ւ Ռողի վրայ
մտածած չէր առաջ։ Ցետոյ յիշեց թէ գե-
ղանի օրիորդը ընկերային աւելի բարձր դա-
սակարգի մը կը վերաբերէր քան ինք։

Պարագան գեռ յոյժ երազային էր՝ այդ
մասին բացատրութիւններ փնտոելու հա-
մար։ Լայպէլ սիրատարփ կերպով կոճապըզ
պեղէ գարեջուրի շիշը տուաւ անոր. Ռող
ումպ մը առաւ անկէ իր հաւատարմութեան
ուխտն ընելու ձեւակերպութեամբ մը, որ
երկուքին միայն հասկնալի էր։ Երբ Լայ-
պէլ կուլ տուաւ այն՝ ինչ որ մնացեր էր շի-
շին մէջ, գինովցաւ։ Հացի եւ պանիրի փը-
շուրները այս նեկտարին հետ ամբրոսիոսի
համը տուին իրեն։ Անոնք չհամարձակեցան
զիրար համբուրել։ Այս բոլոր իրադարձու-
թեանց յեղակարծ հանգամանքը զիրենք ա-
մօթխած ըրաւ, եւ շրթունքներու պաչելը,
պիտի նկատուէր իրենց նշանուիլը ծանուցա-
նող թնդանօթի որոտում մը։ Գաղտնիք մը
ունենալու այս զգացումին մէջ ինքնին ա-
ւելի գրգոտ անուշութիւն մը կար, բացի այն

պարագայէն, որ երկուքն ալ չէին փափաքեր այս լուրը հաղորդել դերձակներու գլխաւորին՝ գործարանատիրոջ՝ դաժան փոքրիկ ծերուկին: Լայպէլի կաւիճի նշանները այդ կէսօրէն ետք ալ շարունակ անորոշ եւ անճիշտ էին, ինչ որ ցոյց կուտար թէ Ռոզ ո՛ր քան ճշդութեամբ զայդ վերագրած էր սիրոյ:

Այդ իրիկուն մեկնելէն առաջ, Ռոզ հարցուց անոր.—

— Վաստա՞հ ես թէ Լի Վոլքովիչը չես ուզեր:

— Եթէ նոյն իսկ աշխարհի բոլոր կօշիկներն ինծի տան, դարձեալ չեմ ուզեր զայն, պատասխանեց Լայպէլ ուժգին:

— Իսկ ես, վրայ բերաւ Ռոզ, աւելի պիտի նախընտրէի առանց մուձակի մնալ քան առանց քեզի:

Գործատեղին դուրսի կողմը՝ սանդուխի գլուխը՝ այնքան գէշ լուսաւորուած էր, որ մթութեան մէջ անոնց շրթները իրարու փական:

— Ո՛չ, ո՛չ, դեռ հիմա ատոր ժամանակը չէ, ըստ Ռոզ: Դուն դեռ Լի Վոլքովիչին դարպաս կ'ընես: Զի գիտնալու ես թէ

Զուկըրման թերեւս քեզ անքակտելի կերպով կապած կապկապած է անոր:

— Ո՛չ, ըստ Լայպէլ, օրիորդը միայն մէկ անդամ տեսած եմ:

— Այս բայց Զուկըրման՝ Շատխանը՝ անոր հայրը բազում անդամներ տեսած է, պնդեց Ռոզ: Այսպիսի խեղանդամ օրիորդի մը համար անոր ստանալիք յանձնարարող-չէքը անտարակոյս մեծ է: Ուստի այս իրիկուն պէտք է Զուկըրմանին քով երթաս եւ ըսես թէ քու սիրտդ Լի Վոլքովիչի համար չբարախեր:

— Համբուրէ զիս որ երթամ, թախան-ձեց Լայպէլ:

— Գնա՛, եւ վերջը կը համբուրեմ քեզ, ըստ Ռոզ հաստատամիտ:

— Ե՞րբ պիտի ըսենք հայրիկիդ, հարցուց Լայպէլ, եւ անոր շրթունքներուն տեղ, ձեռքը սեղմելով բաւականացաւ:

— Անմիջապէս որ Լիի խնդրէն ազատես օձիքդ:

— Բայց հայրիկդ հաւանութիւն պիտի տա՞յ:

— Զեմ կարծեր որ ուրախ պիտի ըլլայ, ըստ Ռոզ համարձակ: Բայց մօրս մահէն յետոյ — թող խաղաղութեամբ ննջէ անոր

Հոգին — իշխանութիւնը իմ ձեռքս անցաւ:
— Ա՛հ, շատ աղէկ բան է այդ, ըստ
Լայպէլ որու մտածելու կերպը մակերեւու-
թային էր:

Լայպէլ ընթրիքի սեղանին առջեւ գը-
տաւ Զուկըրմանը: Մեծ Շատիսանը աթոռ
մը հրամցուց իրեն, բայց ուրիշ ոչինչ: Մի-
այն մասնաւոր եւ հանդիսաւոր առիթներու
կը վերապահէր իր հիւրասիրութիւնը, զոր
կ'արտայայտէր լեմոնատ եւ «լեցուած կա-
պիկներ» հրամցնելով իր հիւրերուն:

Լայպէլի վերջնական որոշումը լսելու
համար մեծ Շատիսանը վերջին ծայր խոռո-
ված էր, նոյն իսկ մարսողութիւնը կորսըն-
ցընելու աստիճան, եւ նախատալից հար-
ցումներով կը յոգնեցնէր զայն:

— Բաե՛լ է կը լրես կօշիկի եւ մուճակի
գործարանատէր մը՝ որովհետեւ իր դուստ-
րը կորաքամակ է, բացադանչեց ան երկրա-
յութեամբ:

Կո՛ւզ է, ո՛չ թէ կորաքամակ, դոչեց
Լայպէլ:

— Ենթադրենք թէ այդպէս է: Երեւա-
կայէ անդամ մը թէ վիճակդ որքան պիտի
բարւոքուի, երբ քու սեփական մեքենաներն
ունենաս: Որովհետեւ ուղտերը սապատներ

ունին, կը թողո՞ւնք որ անոնք մերբեռները
չկրեն:

— Ո՛հ, կին մը ուղտ մը չէ, ըստ Լայ-
պէլ իմաստունի մը հովն առած:

— Եւ միայն ձեւել գիտցող գերձակ մը
դերձակներու գործարանատէր չէ, պատաս-
խանեց Զուկըրման:

— Կը բաւէ՛, կը բաւէ՛, դոչեց Լայպէլ:
Կ'ըսեմ քեզի թէ եթէ անիկա մեքենաներու
մթերանոց մըն իսկ ըլլայ, դարձեալ չեմ
ուղեր զայն:

— Ասոր տակը անպատճառ բան մը կայ,
պնդեց Զուկըրման առանց համոզուելու:

Լայպէլ դլուխը թօթվեց. — Բան մը չը
կայ, միայն անոր սապատը, ըստ երիտա-
սարդ փեսացուն սրտմտութեան թոռցիկ
շեշտով մը:

— Մովսէս Մէնտէլսոն ալ սապատ մը
ունէր, դիտել տուաւ Զուկըրման յանդիմա-
նական շեշտով:

— Այո՛, բայց հերետիկոս մըն էր այն,
ըստ Լայպէլ, որ անուսում եւ անդրագէտ
երիտասարդ մըն էր: — Եւ յետոյ Մէնտէլ-
սոն այր մարդ մըն էր: Երկու սապատ ու-
նեցող այր մարդ մը իւրաքանչիւր սապատի
համար կին մը կընել: Բայց սապատ

ունեցող կին մը չկրնար իր սապատին վրայ
ամուսին մըն ալ ակնկալել:

— Լեզուկ չարախօսութենէ հեռու պա-
հէ, ըստ Շատխան բարկութեամբ.— Եթէ
ամէն մարդ ալ քեզի պէս խօսէր, Լի Լոլքո-
վիչ բնաւ պիտի չկրնար ամուսնանալ:

Լայպէլ ուսերը թօթվեց եւ դիտել տը-
ւաւ թէ կուզ աղջիկները, որոնք թէ կը թո-
թովեն, թէ շիւ շիւ կը նային եւ թէ կը կա-
ղան, սովորաբար խորանի տակ չեն առաջ-
նորդուիր:

— Պարապ խօսք, ոչնչարանութիւն,
գոչեց Զուկըրման բարկութեամբ.— Ինծի
չեն դիմեր, ատոր համար արդպէս կը պա-
տահի:

— Լի Վոլքովիչ քեզի դիմած է բայց
ինծի երբեք պիտի չկրնայ մօտենալ, ըստ
Լայպէլ: Ասոր վրայ անիկա ոտքի ելաւ,
կծիկը դնել ուզելով:

Հնդհուպ Զուկըրման համակերպութեան
հառաջ մը արձակեց:

— Թո՛ղ այդպէս ըլլայ: Ուրեմն ուրիշ
մէկու մը պէտք է նայիլ. ո՛չ աւելի, ո՛չ պա-
կաս:

— Ո՛չ, ուեւէ մէկը չեմ ուզեր, պատաս-
խանեց Լայպէլ չուտ մը:

Զուկըրման ընդհատեց իր ուտելը : —
Մէկը չես ուզե՞ր: Բայց չէ՞ որ ինծի դիմե-
ցիր որպէսզի մէկը գտնեմ քեզի:

— Գի — տեմ, թոթովեց Լայպէլ, բայց
միտքս փո — խեցի, փո — խեցի:

— Հիլէլի համբերութիւնը պէտք է ու-
նենալ քեզի հետ գործ ընելու համար, գո-
չեց Զուկըրման: — Բայց ամէն պարագայի
տակ պէտք է վճարես իմ յանձնարարողչէքս
կրած նեղութեանս փոխարէն: Զես կրնար
այսպիսի խօսք մը ետ առնել գործին ճիշդ
մէջտեղը: Ո՛չ, ո՛չ: Անշուշտ եթէ ուզես
կրնաս վաղը խենդ ու խելառ խաղալ, եւ Լի
Վոլքովիչը կորսնցնել, բայց չես կրնար ին-
ծի հետ կատակ ընել:

— Բայց եթէ ուեւէ մէկ չե՞մ ուզեր, ը-
ստ Լայպէլ գլխահակ:

Զուկըրման անոր վրայ կասկածանքի
խորամանկ ակնարկ մը ձգեց:

— Զըսի՞ թէ ասոր տակը բան մը կայ:
Լայպէլ ինքզինք յանցաւոր զգաց եւ

հարցուց ճարահատ:

— Բայց աչքիդ առջեւ զո՞վ ունիս:

— Թերեւս մտքիդ մէջ դուն ունիս մէ-

կը, պատասխանեց Զուկըրման միամտա-

բար:

Լայպէլ կեղծաւորական հառաչ մը քա-
շեց, եւ ըսաւ.

— Ո՛ւհ, չեմ գիտեր թէ Ռոզ Կրիյն —
ուր ես կը գործեմ. . . . ըսաւ ան, եւ ընդ-
հատեց:

— Վախ չունիմ, ըսաւ Զուկըրման: Ա-
նոր անունը ցանկին մէջ ունիմ արդէն: Քա-
նի մը ամիս առաջ հայրը զայն ինծի յանձ-
նեց, բայց անիկա դժուարահաճ մարդ մը կը
թուի ինծի: Աղջիկն ալ դիւրահաճ չէ, գե-
ղեցիկ ըլլալուն համար:

— Թերեւս Ռոզ մէկու մը վրայ աչք ու-
նէր, գիտել տուաւ Լայպէլ:

Զուկըրմանի սուր ականջները Լայպէլի
ինքնահաճ յաղթութեան շեշտը լսեցին:

— Դուն ի՞նքդ կը խնդրես անոր ձեռ-
քը, բացադանչեց մեծ Շատիսանը սարսա-
փահար շեշտերով:

— Ենթադրենք թէ այդպէս է, ըսաւ
ըսաւ Լայպէլ աներկիւդ:

— Զիս խարե՛ր ես դուն: Եւ իլիփէդ
Կրիյն ա՛լ խարեր է զիս: Արդէն գիտէի թէ
անիկա խարեբայ մըն է: Երկո՞ւքդ ալ խա-
րեր էք զիս:

— Դիտումով չըրի, ըսաւ Լայպէլ մեղմ
շեշտով:

— Դիտումով ըրած ես: Խնդիրը իմ
ձեռքէս ետ առնելու իրաւունք չունէիր: Ի՞նչ
իրաւունք ունէիր Ռոզ Կրիյնի ձեռքը խնդրե-
լու անձամբ:

— Զինդրեցի, գոչեց Լայպէլ յուզուած
շեշտով:

— Ուրեմն հօրմէ՛ն խնդրած ես:

— Ո՛չ դեռ հօրմէն չեմ խնդրած:

— Ուրեմն ի՞նչ գիտես որ Ռոզ պիտի
ընդունի քեզ:

— Գի — տեմ, թոթովեց Լայպէլ, մա-
սամբ ստախօսի եւ մասսամբ ալ դողի մը զգա-
ցումով համակուած: Անոր ուղեղը փոթոր-
կեցաւ. կարող չէր յիշել թէ խնդիրը ինչ-
պէս պատահեր էր: Գիտէր, սակայն, թէ
ինք չէր խնդրած անոր ձեռքը, միւս կողմէն
չէր կընար ըսել թէ անիկա խնդրած էր իր
ձեռքը:

— Դուն գիտես թէ աղջիկը քեզ պիտի
չմերժէ, կրկնեց Զուկըրման մտախոհ: Բայց
անիկա ալ գիտէ՞:

— Այո, յիրաւի՛, ըսաւ երիտասարդը
անխորհրդաբար, երկուքս միասին կարգա-
դըրեցինք այդ խնդիրը:

— Երկուքդ ալ գիտէք ուրեմն: Եւ հայրն
ալ գիտէ՞:

— Ո՞չ տակաւին:

— Ա՞հ, ուրեմն պէտք է որ անոր հաւանութիւնը ստանամ, յարեց Զուկըրման վճռական շեշտով:

— Խոր — հեցայ ես անձնապէս խօսիլ անոր:

— Դուն, անձնապէս վրայ բերաւ Զուկըրման սարսափահար: Խելքդ թոռւցե՞ր ես ծօ: Այս սխալդ աւելի գէշ պիտի ըլլայ քան այն զոր արդէն գործեր ես:

— Ո՞ր սխալը, հարցուց Լայպէլ զայրագին:

— Այն սխալը զոր գործեցիր՝ ուղղակի եւ անձամբ օրիորդին առաջարկելով խնդիրը: Ամուսնութենէդ յետոյ եթէ պատահի որ կռուխս իրեն հետ, անիկա միշտ քու երեսդ պիտի զարնէ, թէ դուն էիր իրեն հետ ամուսնանալ վափաքողը: Եւ յետոյ, եթէ աղջկայ մը ըսես թէ սիրես զինք հայրը պիտի խորհի թէ պէտք է ամուսնանաս անոր հետ այնպէս՝ ինչպէս որ է: Բայց եղածը եղած է, ըսաւ մեծ Շատխանը ու տրտմադէն հառաչ մը արձակեց:

— Դեռ ի՞նչ կ'ուզեմ ես: Կը սիրեմ զայն, այդչափը կը բաւէ, վրայ բերաւ երիտասարդ սիրահարը:

— Խե՞ղձ վայտի կտոր, գոչեց Զուկըրման արհամարհանքով:— Սէրը մեքենաներ չդարձներ, ոչ ալ կրնայ գնել զանոնք: Պէտք է որ դրամօժիտ մը ձեռք բերես: Բողին հայրը խոշոր գուլպայ մը ունի: Կրնան դրամօժիտ մը տալ քեզի:

Լայպէլի աչքերը շողացին: Մտածեց թէ ոեւէ արգելիչ պատճառ չկար, որ իր համբոյրներուն հետ հաց ու պանիր ալ խառնուէր:

— Հոս նայէ՛: Եթէ անոր հօրը քով դուն անձամբ երթաս, յարեց Շատխանը, շատ հաւանական է որ իր աղջիկն իսկ պիտի չտայ քեզի, ո՞ւր մնաց դրամօժիտը: Ամէն պարագայի տակ դուն բաւական պինդ երես ունենալու ես, որ այսքան բարձր յոյսեր կը տածես: Ինչպէս ամենէն առաջ ըսած էիր, բեննի մը իսկ չունիս դուն: Մինչեւ որ դրամօժիտը չստանաս, նոյն իսկ իմ յանձնաբարողչէքս վճարելու անկարող ես: Բայց եթէ ես երթամ անոր հօրը քով, վըստահ եմ թէ պնդերեսութեամբ խոշոր գումար մը կրնամ ստանալ, ո՞ւր մնաց աղջիկը:

— Այս, կարծեմ լաւ կ'ըլլայ որ դուն երթաս, ըսաւ Լայպէլ խանդադին:

— Բայց եթէ այս գործը ընեմ քեզի

համար ոսկի մը աւելի պիտի պահանջեմ քեզմէ, յիշել տուաւ Զուկըրման:

— Ոսկի մը աւելի, բացագանչեց Լայ-պէլ սարսափահար: Ինչո՞ւ:

Որովհետեւ Ռող Կրիյնի սապատը ոսկի է, պատասխանեց Զուկըրման պատղամա-խօսի մը Արծութեամք: Եւ յետոյ գեղեցիկ ալ է: Շատ մը երիտասարդներ թեկնածու են անոր:

— Բայց սովորաբար դրամօժիտէն մի-այն հինգ առ հարիւր յանձնարարողչք կը ստանաս դուն:

— Ինչ որ պիտի առնէի Վոլքովիչի հա-մար աւելի քիչ պիտի առնեմ ասոր համար, դիտել տուաւ Զուկըրման: Անշուշտ դիտես թէ Կրիյն ուրիշ աղջիկներ ալ ունի նուազ գեղեցիկ քան զիոզ:

— Այո՛, խնդիրը աւելի դիւրաւ կը կար-դադրուի ուրեմն: Հինգ շիլին ինչպէ՞ս է:

— Էլիփէզ Կրիյն կծծի մարդ մըն է, ը-ստ Շատիսան ի պատասխան:

— Ամենէն շատը տասնըհինգ շիլին կու տամ քեզի:

— Ամենէն քիչը պէտք է որ տասներկուք ու կէս տաս: Էլիփէզ Կրիյն սոսկալի յա-մառութեամք սակարկութիւն կ'ընէ:

Տարբերութիւնը կիսեցին իրենց մէջ՝ եւ տասն ու մէկ շիլին ու երեք բեննի բաւ հա-մարուեցաւ էլիփէզ Կրիյնի կծծիութիւնը՝ բաղդատմամք Վոլքովիչի ժլատութեան:

Նոյն իսկ յաջորդ օրը Զուկըրման՝ Կրիյ-նի գործատեղիին վրայ կատարեց իր արշա-ւանքը: Ռող հակեցաւ իր կարին վրայ, սիրաը յուզումնավառ: Լայպէլ առաջուց անոր հաղորդած էր այն զարտուղի միջոց-ները որոնցմով պիտի շահէր զինք, եւ գե-ղանի օրիորդն ալ հաւանութիւն յայտներ էր այդ կատակերգութեան: Այս կերպով Ռող պիտի ազատուէր՝ եթէ ոչ ուրիշ նեղու-թիւններէ գէթ իր հայրը խելքի բերելու տա-ժանքէն:

Զուկըրման յեղակարծ եւ չնչասպառ մը-տաւ ներս: Բերկրալի զգացումի մը ճնշու-մին տակ կը հեւար: Մետաքսէ կապոյտ թաշկինակը անոր վերարկուի ծայրէն դէպի վար կը կախուէր ընդ քարշ եւ յարածուի:

— Վերջա՛պէս, գոչեց Զուկըրման, ա-լեհեր եւ փոքրահասակ գործարանատիրոջ ուղղելով իր խօսքը: Վերջապէ՛ս յարմա-րագոյն մարդը գտայ քեզի:

— Իրաւ, խոնչեց էլիփէզ առանց երբեք ազդուելու: Երկավանկ պատասխանը յու-

զումով բարախուն էր։ Ասոր նշանակութիւնը սա էր։ — Երես ունի՞ս քովս գալու՝ անթերի մարդ գտած ըլլալու յոյսով։

— Փափաքածդ բոլոր յատկութիւնները ունի ան, վրայ բերաւ Զուկըրման իրը նախարան, անանկ չեշտով մը՝ որ կը հերքէր երկավանկ բառին բոլոր լոելեայն իմանալի նշանակութիւնը։ — Անիկա երիտասարդ է, զօրաւոր, Աստուածավախ։ — — —

— Դրամ ունի՞ս, ընդմիջեց ծերունի դերձակը երեսը կախ։

— Դրամ պիտի ունենայ երբոր ամուսնանայ, պատասխանեց Զուկըրման առանց վարանելու։

— Ո՛հ, հառաչեց հայրը, որուն ձայնը մեղմեցաւ եւ ոտքը անշարժ մնաց մեքենայի ոտնարանին վրայ։ Մեքենաներէն մէէկը անձամբ ինք կը վարէր, եւ այսպէս գործաւորի մը շաբաթավճարը ինք կը շահէր։ — Որչա՞փ կը պահանջէ։

— Կարծեմ յիսուն ոսկի։ Եթէ յիսուն ոսկի տալով ազատիս՝ բախտաւոր պէտք է որ համարես ինքզինքդ, պատասխանեց Զուկըրման իրեն յատուկ գոհունակ երկդիմութեամբ։

Ելիփէզ սկզբունքով դլուխը կը թօթվէր։

— Այո՛, պիտի տաս երբ հասկնաս թէ ի՞նչ — պիտի գեղեցիկ երիտասարդ մըն է ան, ըստ Զուկըրման։

Լայպէլի դէմքին վրայ նկարուող խոռով-քի եւ երկիւղի շառագոյն կարմրութիւնը համեստութեան վարդերանդ ճառագայթու-մի փոխուեցաւ, վասն զի գործարանատիրոջ մեքենայի ժխորին դադարելուն չնորհիւ, չէր կրնար չլսել անոնց խօսակցութիւնը։

— Հսէ՛ տեսնեմ ո՞վ է, վրայ բերաւ է-լիփէզ։

— Նախ դուն ինծի ըսէ՛ թէ յիսուն ոս-կի պիտի տա՞ս, դեռահասակ, առողջ, աշ-խատասէր, Աստուածավախ երիտասարդ մը, որուն նպատակն է իր հաշոյն դերձակի խանութ մը բանալ։ Արդէն դուն գիտես թէ ո՛րքան շաւահէտ է այդ գործը։

— Այդ կարգի երիտասարդի մը քսան եօթ ոսկի ու տասը շիլին կուտամ, ըստ է-լիփէզ խանդավառութեան նոպայէ մը բըռ-նուած։

Զուկըրման սրտին խորերէն հառաչ մը քաշեց, բայց Լայպէլի սիրտը ուրախութե-նէն ցնցուեցաւ։ Զո՞րս ամսուան թոշակը միահաղոյն ստանալ։ Քսան եօթ ոսկի եւ տաս շիլինկի միջոցաւ անիկա անտարակոյս կըր-

նար շատ մը մեքենաներ ձեռք բերել, մանաւանդ մաս առ մաս վճարելու պայմանով։ Իր աչքերը չեղակի Ռողի կողմը զարձուց, որ ծերուկին ու Զուկը մանին խօսակցութիւնը լսելու սահմանէն դուրս էր։

— Եթէ երբեք չխոսանաս երեսուն ոսկի տալ, ժամավաճառութիւն պիտի ըլլայ անոր անունը յիշել, ըստ Զուկը ման։

— Լա՛ւ, ո՞վ է։

Զուկը ման ծոեցաւ, եւ հօրը ականջն իվեր փափաց։

— Ո՞վ։ Լայպէ՛ւ, գոչեց էլլիփէղ չսրաչար նախատուած։

— Սո՛ւս, ըստ Զուկը ման, այլապէս ասիկա հիմա հրճուանքդ կ'իմանայ եւ աւելի կը պահանջէ։ Այսու ամենայնիւ քիթը շատ բարձր տնկած է։

— Բ - ա - յ - ց, լիուտաց ապշահար հայրը՝ թուքերը ցայտելով աջ ու ահեակի, ես արդէն կը ճանչնամ լայպէլը։ Ամէն օր կը տեսնեմ զինք։ Պէտք չունիմ Շատխանի մը որ ինծի արդէն ծանօթ երիտասարդ մը կը դտնէ, մանաւանդ իմ գործառորներէս մէկը։

— Թէ ինչ կ'ըսես, դուն ալ չես գիտեր, պատասխանեց Զուկը ման դաժան կերպով։

Մարդ ամենէն քիչ կը ճանչնայ այն ամձը զոր ամէն օր կը տեսնէ։ Կ'երաշխաւորեմ թէ եթէ երբեք ես քու ուշադրութիւնդ չըհրաւիրէի, դուն բնաւ պիտի չերազէիր փեսայ մը ունենալ յանձին լայպէլի։ Խոստովանէ տեսնեմ, իրողութիւնը այդպէս չէ։

Էլլիփէղ տարտամ խոնչիւնով բան մը մրթմրթաց եւ Շատխանը շարունակեց յաղթական։ Այնչափ մտածեցի։ Այսու հանդերձ քու աղջկանդ հոդ տանելու համար աւելի լաւ երիտասարդ մը ո՞ւր կընայիր գըտնել։

— Լոկ աղջիկս առնելով գոհ պէտք է որ ըլլայ, մռլտաց հայրը։

Զուկը ման ծերուկին տկարանալը զգաց եւ բուռն թափով յարձակեցաւ անոր վրայ։

— Տեսնենք թէ լայպէլ անպայման պիտի ուղէ՛ աղջիկդ։ Դեռ այս խնդրոյ մասին անոր քով չգացի։ Նախ ուղեցի ծրագրիս համար քու հաւանութիւնդ ստանալ։ Լայպէլ, որ լսեց այս բառերը, հիացաւ Զուկը մանի յայտարարութիւններուն տառացի ճշգրտութեան։

— Բայց չէի գիտեր թէ դրամ պիտի ունենար այն, մրմուաց էլլիփէղ։

— Անշուշտ չէիր գիտեր դուն։ Շատ-

Խանի մը պաշտօնը այս է արդէն — բուն
իսկ քթիդ ծայրը գտնուող բաները մատնա-
նիշ ընել քեզի:

— Բայց Լայպէլ այս դրամը ո՞ւրկէ
ձեռք պիտի անցնէ:

— Քե՛զմէ, ըստ Զուկըրման անվե-
րապահ:

— Ինձմէ:

— Հապա ո՞րմէ: Անոր գործարանատէ-
րը դուն չե՞ս: Վճարման թուականը պիտի
ըլլայ ամուսնութեան օրը:

— Ենայա՞ծ է այդչափ դրամ:

— Ծախսած չէ դեռ, ըստ Զուկըրման
անհամբեր:

— Ի՞նչ, ըսել կ'ուզե՞ս թէ յիսուն ոսկի
խնայեր է:

— Իրաւամբ դանձ մը պիտի ըլլար անի-
կա եթէ երբեք քու ամսաթոշակներէն յի-
սուն ոսկի կարենար խնայել, ըստ Զուկըր-
ման: — Թերեւս երեսուն հաւանական է:

— Բայց յիսուն ըսիր առաջ:

— Լա՛ւ, դուն երեսունի իջար, պատաս-
խանեց Շատխանը: — Զես կրնար աւելի ակն-
կալել անկէ քան ինչ որ քու աղջիկդ կը բե-
րէ իրեն:

— Ես ամենեւին երեսուն չէի ըսած,

դիտել տուաւ էլիփէզ: Քսան եօթ ոսկի տաս
շիլին էր վերջին խօսքս:

— Շատ լաւ, այդ մեր բանակցութեան
հիմը պիտի կազմէ, ըստ Զուկըրման հա-
մակերպութեամբ: — Այս իրիկուն պիտի այ-
ցելեմ անոր: Եթէ հիմա երթամ ու խօսիմ,
Լայպէլ պիտի տեսնէ որ շատ անձկալից ես
դուն, եւ իր զինը պիտի բարձրացնէ, ինչ որ
լաւ չէ: Քեզի այսքան աժան փեսայ մը գըտ-
նելուս համար անշուշտ ինծի ոսկի մը աւելի
պիտի տաս:

— Բեննի մը իսկ աւելի չեմ տար:

— Շատ մի վախնար, ըստ Զուկըրման
ոխակալութեամբ, հաւանական չէ որ կարող
պիտի ըլլամ համոզել զայն՝ այսքան աժան
աներ մը ունենալու համար, այնպէս որ խոս
տանալուդ համար բնաւ վնաս պիտի չընես:

— Թող այդպէս ըլլայ, ըստ էլիփէզ
ձանձրոյթի արտայատութեամբ մը, եւ վեր
ըսկսաւ իր մեքենան շարժել:

— Քսան եօթը ոսկի տասը շիլին, ըստ
Զուկըրման մեքենային ժխորին ընդմէջ:

էլիփէզ գլուխը շարժեց ի նշան հաւա-
նութեան եւ իր մեքենայի անիւները աւելի
շոնդալից կերպով դարձնել սկսաւ:

— Ամուսնութենէն առաջ պիտի վճա-

բես, մի՛ մոռնար, յարեց Շատիսանը:

Մեքենան կարեւորութիւն չընծայեց:

— Պսակաղըութենէն առաջ: Մի՛ մոռնար, յեղեղեց Զուկըրման:— Խորանին առջեւ երթա՛լէ առաջ:

— Առ այժմ դնա՛, դնա՛, խոնչեց էլիւփէղ անհամբեր շարժումով մը:

— Ամէն ինչ կը կարդաղըուի: Եւ աւեհեր մարդը գլխահակ ու անշարժ հակեցաւ եր գործին վրայ:

Իրիկունը Ռող վարպետութեամբ իր հօրմէն կերպով մը հասկցաւ Զուկըրմանի այցելութեան նալատակը, եւ խոստովանեցաւ թէ ինք համակիր էր այդ գաղափարին:

— Բայց, հայրիկ կը կարծե՞ս թէ անիկա պիտի առնէ զիս, հարցուց գեղանի աղջիկը գդուանուշ նայուածքով մը:

— Ուեէ երիտասարդ պիտի ուզէր առնել իմ Ռողին:

— Ա՛հ, բայց Լայպէլ տարբեր է: Այսքան տարիներ իմ քովս նստաւ՝ բայց բառ մը չըսաւ:

— Իր գործին վրայ կը մտածէր անշուշտ, բարի խնայաէր երիտասարդ մըն է նա, պատասխանեց հայրը:

Ճիշդ այս բոպէին Զուկըրման կը ջանայ

Համողել զայն, այնպէս չէ՞: Կ'երեւի թէ շատ դրամ պիտի պահանջէ:

— Մի խոռովիր աղջիկս, ըստ հայրը, եւ իր տժողոյն ձեռքով անոր մազերը փայտայեց:

Զուկըրման յաջորդ օրը նորէն եկաւ ծերուկին քով եւ հաղորդեց թէ կարելի պիտի չըլլար երեսուն ոսկիէն պակաս գումարով Լայպէլը ձեռք բերել, եւ էլիփէղ այս վիճաբանութենէն յոգնած զնաց Լայպէլին քով, որ մինչեւ այդ վայրկեանը իր կաւիճի գիտական գծագրութեան մէջ թաղուած էր խընամու կերպով. ծերունին առաջին անգամ ըլլալով խնդիրը պարզեց անոր:— Ես ստկարկելիք մարդ մը չեմ, ըստ էլիփէղ եւ իր թուխ ձեռքը կարկառեց երիտասարդին. յանկարծ շաքարօղիի (բըմ) շիշ մը դուրս հանուեցաւ, չեմ գիտեր թէ ուրիշ, եւ հինգը բոպէ գործաւորները գաղար առին, եւ «ձեռք»երը՝ (գործաւորները) զարմանահար յուղումով խմեցին շաքարօղին: Անոնք Զուկըրմանի այցելութեանց նպատակը գուշակեր էին եւ պատրաստուած էին չնորհաւորելու Ռողը: Սակայն Լայպէլի անուան յիշատակութիւնը որոտընդուստ դղրդիւն մը յառաջ բերաւ:

Նշանտուքի պաշտօնական արարողութիւնը աւելի մեծ խնճոյքով տեղի ունեցաւ եւ վերջապէս հարսնիքի օրը հասաւ: Լայպէլ լուսափայլ կը շողար անկիւնագիծ թիկնոցի (Փրաք-քոք) մը մէջ, զոր բուն իսկ իր ձեռքով ձեւեր էր. եւ Ռոզ միաձի կառքէ մը (Քէպ) դուրս ելաւ ծաղիկներու, գեղեցկութեան եւ սպիտակ մետաքսի մէջ պարուրուած. անոր ետեւէն եկան երկու հարսնքոյրեր — իր քոյրերը —, երրորդութիւն մը՝ որ փառաշուք երեւոյթ մը կուտար սէնըլակի առջեւտարածուող խուռնամքոխ մայթին: Էլիփէզ բարձրահասակ կ'երեւար իր փայլուն ու բարձր գլխարկով եւ փոթօծիք (Փըրիլո) շապիկով: Զուկըրման հետիոտն եկաւ, իր հետ բերելով փոքրիկն Արենեղերը որ կարմիր գուլպայ հագած էր եւ իր թեւին կը փաթթուէր:

Օմէրի երեսուն երրորդ օրն էր — ամուսնութիւններով յուռթի օր մը, եւ Լայպէլ ու Ռոզ միակ ամոլը չէր որ պիտի պըսակուէր:

Բայց վերջապէս կարգը եկաւ անոնց: Սակայն մեր գեղափայլ հարսն ու փեսան իրենց կարգին չերեւցան խորանի առջեւ, եւ իրենց բարեկամները, որոնք կը սպասէին

խուռն բազմութեան մէջ, զարմացան թէ ինչո՛ւ անոնք իրենց կարգը կորսնցուցին: Երբ իրենցմէ վերջ եկող բազմաթիւ ամոլներ պըսակուեցան, այն ատեն բերնէ բերան շըուկ մը սկսաւ տարածայնութիւլ: Տակաւ զրոյց մը տարածուեցաւ հանդիսականներուն մէջ, թէ դժուարութիւն մը ծաղեր է. եւ նոյն համեմատութեամբ յուղում մը յառաջ եկաւ: Եւ ստուգիւ, կարելի չէր վարդ մը (Ռոզ) ժողվել առանց փուշի:

Կամաց կամաց իրողութիւնը յերեւան եկաւ, եւ մէկնութեանց ու խօսակցութեան կծիկը քակուեցաւ ամբողջ սինակոկի մէջ: Էլիփէզ վճարած չէ դրամօժիտը:

Ծերուկը նախ յայտարարեց թէ յետ արարողութեան, անմիջապէս պիտի վճարէ: Բայց իմաստուն Զուկըրման, անցեալ փորձառութիւններէ խրատուած, պահանջեց յանուն իր միւս յաճախորդին, որ ծերունին անմիջապէս ընէ իր վճարումը: Էլիփէզ նեղը մնացած ըլլալով, տաս ոսկի հանեց իր տարատի գրպանէն եւ ի հաշիւ իր պարտքին, երկնցուց զայն Զուկըրմանին: Սա արհամարհանօք մերժեց ընդունիլ այդ գումարը. եւ բանակցութիւնները խզուեցան: Փեսային հարսնեւորները սենեակի մը մէջ հաւաքուած

էին, իսկ հարսինը ուրիշ սենեակի մը մէջ:
Յաւագին յապաղումէ մը յետոյ էլիփէզ
պատգամաւոր մը զրկեց Զուկըրմանին եւ
խոստացաւ կանխիկ վճարել դրամօժիտին
կէսը՝ 15 ոսկի, որու հինգ ոսկին անդլիա-
կան փայլուն պանքնոթ մըն էր: Լայպէլ
Զուկըրմանի հրահանդով եւ քաջալերու-
թեամբ, անդրդուելի մնաց:

Եւ յետոյ զոռում զոչում մը, թելաղը-
րութիւններու թոհ ու բոհ մը ծայր տուաւ.
Բարեկամնները մէկ սենեակին միւսը վազե-
ցին, եւ ոմանք սինակոկի մէջ իրենց նստա-
րաններէն ելան եւ այսպէս ընդհանուր խառ-
նաշփոթութիւնը աւելի եւս սաստկացաւ:
Բայց էլիփէզ ժայռի մը վրայ ամբացուցած
էր իր գիրքը, թէ՝ առձեռն դրամ չունէր վը-
րան, բայց վաղը կամ յաջորդ օրը պիտի
ունենար մաս մը: Միւս կողմէն, Լայպէլ,
դալկահար եւ յամառ, ամբապինդ փարե-
ցաւ այն մեքենաներուն, որոնք մէկ վայր-
կեանէն միւսը կը սահէին իր ձեռքերէն: Ե-
րիտասարդ վիսան այդ առաւոտ զեռ տեսած
չէր իր հարսնցուն, այս պատճառաւ անոր
դէմքը աղօտ եւ նսեմ կ'երեւար իրեն, բաղ-
դատմամբ իր գնելիք մեքենաներու շօշափե-
լի պատկերին: Միւս հարսնցու աղջիկնե-

ըուն մեծ մասը պսակեալ տիկիններ եղած
էին արդէն, եւ կացութիւնը յուսահատա-
կան բնոյթ մը կը ստանար: Կիներու շընա-
նակին մէջ ահոելի զրոյցներ կը տարածայ-
նուէին հարսնքոյրերու մասին՝ որոնք իրը
թէ իսթերիկ եղած էին եւ հարսի մը մասին
որ իրը թէ իր ճակտին ծաղկեայ նարօտը
պատուեր էր, խելայեղ, ամօթահար եւ նը-
կուն: Էլիփէզ լուր զրկեց թէ կարող չէր
այդ պահուն հնչուն դրամ հանել, ուստի մը-
նացեալին համար պարտամուրահակ կ'ուզէր
տալ: Զուկըրման պատգամարերին հրա-
հանդ տուաւ թելաղը էլիփէզի որ իր բա-
րեկամններուն մէջ հաւաքէ այդ գումարը:

Այսպէս զարնանային կարճատեւ օրը
սահեցաւ գնաց: Խախամը տեղեակ ցցուած
խոչնդոտէն, ի զո՞ւր երկարեց արարողու-
թիւնն եւ իր աղօթքները միւս ամոլներու
համար, եւ ի զո՞ւր օրհնեց զանոնք աւելի
խաղաղիկ եւ հանդարտ ողիով մը օծուն:
Կարելի չէր Լայպէլի ու Կրիյնի հաշիւը ան-
պայման կերպով ձգձգել .եւ վերջապէս Ռոոզ
մնաց սինակոկի մէջ իրը ամենավերջին հար-
սնցուն, ամուսնական նարնջապոյն պսակը
իր գլխուն: Եւ յետոյ հանդիսաւոր անստու-
դութեան անխոռվ լուութիւն մը տիրեց, որ,

սակայն, կամաց կամաց շաղակրատ լեզուներու գոռ ժխորի մը փոխուեցաւ, երբ վայրկեանները իրարու կը յաջորդէին, մինչդեռ հարսանեկան թափօրը ի հանդէս չէր գար: Վերջին լուրի մը համաձայն, հարսը մահացու նուազում մը ունեցեր էր: Յետ միջաւուր ժամերը արագ արագ կը սահէին: Խախամը իր տեղը թողուց խորանի մօտ եւ հաշտարար միջնորդներու խումբին միացաւ: Բայց ինքն ալ չկրցաւ միւսներէն աւելի մեծ յաջողութիւն մը ձեռք բերել: Հակառակորդներու յամառութեան դէմ զայրացած, խախամը ծանոյց թէ սինակոկը պիտի դոցէ: Տաս վայրկեան պայմանաժամ դրաւ, յորում ամոլը կամ պսակուելու էր եւ կամ պէտք էր թողուլ երթալ:

Ապա քառս մը ստեղծուեցաւ, եւ ամբոխին կողմէ թելագրութիւններու եւ յորդորներու բարելոննեան խառնակութիւն մը ծայր տուաւ: Երբ տաս վայրկեան պայմանաժամը լրացաւ, իլիփէզի կողմէն նուիրակ մը ծանոյց թէ իրենք իրենց մէջ քսան ոսկի հաւաքեր են եւ այդ գումարը կ'առաջարկեն սակարկութեան իրը վերջին պայման:

Լայպէլ երկմտեցաւ: Օրուան երկարատեւ պայքարը յողնեցուցեր էր զայն, եւ

այն տեղեկութիւնները, զոր ստացեր էր հարսին տագնապեալ վիճակին վրայ, տկարացուցեր էին զինք: Նոյն իսկ Զուկըրման յաղթութեան համար իր բացարձակ վատահութիւնը կորսնցուցեր էր: Եթէ մի քանի վայրկեաններ եւս անցնէին, մի դուցէ իր երկու կողմէ ալ ստանալիք յանձնարարողչէքները պարապի ելնէին: Անգամ մը որ հարսնեւորները սինակոկէն դուրս ելնէին, ալ դիւրին պիտի չըլլար զանոնք ուրիշ օր մը դարձեալ հոն քշել: Բայց մեծ Շատխանը այսուհանդերձ չըլագրեցաւ խրախուսելէ իր մարդը, զի կարելի էր տասներորդ բոպէին անձնատուր ըլլալ:

Ութերորդ բոպէին՝ զրոյցներու շնչիւնը տարբեր բնոյթ մը ստացաւ: Զեռքով ոտքով խօսող ամբոխին ընդմէջ ծայր տուաւ շըւնչ մը՝ սպասումի եւ ակնկալութեան փսլտուքներով ուռած, որու նշանակութիւնը կը հասկնայ խուռնամբոխ բազմութիւն մը երբ վերջապէս թափօրը կը սկսի ի հանդէս գալ: Խորհրդաւոր մագնիսականութեամբ մը ամէնքն ալ իրազեկ եղած էին, որ Հարսը — խեղճ ու խթերիկ հարսը — անձամբ անձին ձգած էր իր հօրը խումբը եւ

կուզար դէմ առ դէմ խօսիլ իր վարձկան սիրահարին հետ:

Եւ երբ հարսին, ծաղիկներուն եւ հանգերձեղիններուն փառաշուք պատկերը աչքերուն ընդ աղօտ երեւցան հեռուէն, անոր սիրուը մեղրամոմի պէս հալեցաւ: Երիտասարդ փեսան դիտէր թէ իր միջնաբնրդը հիմնայտակ պիտի կործանէր անոր առաջին նայուածքներուն տակ, անոր առաջին հպումին աղղեցութեան ներքեւ: Արդա՞րացի էր կոռւելու այս կերպը: Երբ Լայպէլի խոռվագով աչքերը պայծառացան, եւ երբ Ռող մօտեցաւ, սիրազորով փեսան ի մեծ զարմացում նշմարեց, թէ իր սիրուհին յուզումնավառ չէր, եւ ո՛չ ալ խոռվակոծ. անոր դէմքին պայծառութիւնը արցունքի հետքերով խաթարուած չէր, եւ հարսանեկան պըսակը անոր ճակտին շուրջ անխախտ կը մընար:

Իններորդ վայրկեանը հնչած էր:

Գեղանի հարսը ձեռքը փեսային թեւին վրայ դրաւ աղերսագին, մինչ երկնային լոյս մը ճառագայթեց անոր դէմքին վրայ — Ժան Տ'Արքի մը արտայայտութիւնը, իր հայրենիքին ներշնչում պարզեւող:

— Տեղի մի՛ տար, Լայպէլ, ըսաւ հար-


սը. — Զիս մի՛ առներ: Թոոյլ մի՛ տար որ առնուք համոզեն քեզ: Ի սէր ինծի մի՛ ընդունիր: Տուն գնա՛:


* * *

Այսպէս՝ մետասաներորդ վայրկեանին՝ պարտեալ էլիփիզ հայթայթեց դրամին մընացեալ մասը, եւ որմէ յետոյ ամէնքն ալ ընդմիշտ երջանիկ ապրեցան:

Թարգմ. անգլիերէն բնագրէն
Գէ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ









ՀՀ Ազգային գրադարան



NL0338779

30490